

# Լիափորնա

Թվով ավելի շատ  
պատանիներ են  
գնում տաճար.  
Օգնեք նրանց  
պատրաստվել,  
Էջ 18

Նայելով իմ միսիային  
նոր աչքերով, Էջ 42

Ինչպես եպիսկոպոսը  
կարող է օգնել ձեզ  
ապաշխարել, Էջ 58

Հիսուսն ասաց՝ սիրեք  
բոլորին, Իվըն Բալլիս,  
Էջ 68





*«Թեև մենք կարող  
ենք մեզ մոլորված  
զգալ մեր ներկա  
պայմաններում,  
Աստված խոստա-  
նում է Իր լույսի հույսը՝  
Իր խոստումները՝  
լուսավորելու մեր  
առջև ճանապարհը  
և ցույց տալու մեզ  
խավարից դուրս  
գալու ուղի»:*

Նախագահ Դիտեր Ֆ.  
Ուլտորֆ, Առաջին  
Նախագահության Երկրորդ  
Խորհրդական, «Աստծո  
լույսի հույսը», *Լիափոխա*,  
մայիս 2013, 70:



## ՈՒՂԵՐՉՆԵՐ

- 4 Առաջին Նախագահության Ուղերձ. Օգնության հասնելու մեր պարտականությունը**  
Նախագահ Թոմաս Ս. Մոնտոն
- 7 Այցելող Ուսուցիչների Ուղերձ. Հիսուս Քրիստոսի աստվածային առաքելությունը. Արարիչ**

## ԸՆՏՐՎԱԾ ՀՈԴՎԱԾՆԵՐ

- 12 Լավ կատարեք ձեր մասը**  
Երեց Բվենթին Լ. Քուր  
*Երբ անհայտ մնալը շատ ավելի հեշտ է, քան երբևէ, կան կարևոր սկզբունքներ դիմակներ չկրելու և հավատքին հավատարմի լինելու համար:*

### ՎԱՋՄԻ ՎՐԱ

Առջևում. Լուսանկարը Քոդի Բելլի:  
Ետևում. Լուսանկարը Քոդի Բելլի:  
Դիմացի կազմի ներքում. Լուսանկարը iStockphoto/Thinkstock:

- 18 Պատանիները և տաճարային ուխտերը**  
Գարի և Սյուզան Քարթերներ  
*Այժմ է ժամանակը սկսելու պատրաստել ձեր երեխաներին մտնել տաճար:*
- 20 Մեր հրաշալի միսիոներական ժառանգությունը**  
Լառեն Փորթեր Գալթ և Լինդա Դեբեր Լոպեզ  
*Բոլոր միսիոներները՝ անցյալի և ներկայիս, ծառայում են հույսով, որ ավելի լավացնեն ուրիշների կյանքը:*
- 26 Պատրաստ լինել ճակատամարտի օրվան**  
Երեց Էդուարդո Գավարետ  
*Պարզագույն սկզբունքները կարող են որոշել մեր ճակատագիրը կյանքի մարտադաշտերում:*
- 30 Արագացնել փրկության աշխատանքը**  
Տիրոջ Եկեղեցու անդամ լինելը նշանակում է կանչված լինել լիովին ներգրավվելու Նրա աշխատանքի մեջ:

- 34 Դառնալ խաղաղության մարդ**  
Մեթյու Դ. Ֆլիթոն  
*Ավետարանը փոխեց տղամարդու սիրտը և միավորեց նրա բնականիքը:*

## ԲԱԺԻՆՆԵՐ

- 8 Հոկտեմբերյան համաժողովի օրագիր. Մտքեր գերագույն համաժողովից**  
Թինա Սպենսեր
- 9 Ուսուցանել Երիտասարդներին զորացնելու համար գրքուկից. Ֆիզիկական և էմոցիոնալ առողջություն**
- 10 Եկեղեցու նորությունները**
- 38 Վերջին Օրերի Սրբերի ձայները**
- 80 Միևն և նոր հանդիպում. Ես հայիտյում եմ. . .**  
Ռ. Վալ Ջոնսոն

42



**42** Ինչպե՞ս կարող եմ հաջողակ միսիոներ լինել  
Լորեն Բենգերթեր Վայլդ  
Մենք ամեն քայլափոխին մերժման էինք հանդիպում, և ես հուսահատված էի: Ես պետք է գտնեի հաջողության նոր սահմանում:



Տեսե՞ք, թե կարող եք գտնել այս համարում թաքնված Լիս-հոնան: Հուշում. Կիսվե՞ք մրգով:

**46** Դառնալ Զարոգիր Իմ Ավետարանին համապատասխան միսիոներ  
Երեց Դեյվիդ Ա. Բեդևար  
Այս հինգ պահանջները կօգնեն ձեզ դառնալ ավելի լավ միսիոներ:

**51** Ուղղակի ժպտացե՞ք և ասե՞ք՝ ոչ.  
Հեյզլ Մարի Թիբյուլ  
Ինչպե՞ս ես կարող եմ ոչ ասել ընկերության նախագահին:


**52** Երիտասարդների համար. Եղե՞ք ուժեղ, եղե՞ք առողջ, եղե՞ք խելացի  
Երեց Ադրիան Օչոա

**54** Հետևե՛ք Նրա ոտնահետքերին  
Մելիսա Զենտեն  
Հիտու Զրիստոսին նմանվելը կարող է թվալ ավելի դժվար, քան բարձրագույն ֆիզիկան, սակայն ամեն-ինչ սկսվում է ձեր ստացին քայլից:

**56** Հարցեր և պատասխաններ  
«Ի՞նչ եմ ես ասում ոչ անդամներին, ովքեր հարցնում են, թե ինչու Եկեղեցու որոշ անդամներ չեն սպորտում մեր չափանիշներով»:

**58** Ինչո՞ւ և ինչ ես պետք է խոստովանեմ իմ եպիսկոպոսին:  
Երեց Սքոթ Գրոու  
Ապաշխարությունը անձնական հարց է իմ և Տիրոջ միջև: Ինչո՞ւ ես պետք է խոսեմ նաև եպիսկոպոսի հետ:

52



61

**61** Ներս հրավիրել Փրկչին  
Երեց Օ. Վինսենթ Նալեք  
Փրկիչը սպասում է, որպեսզի հրավիրվի ձեր կյանք

**62** Միանգամայն նոր սարկավազ  
Ջեյն Մաքքերայդ Չոուս  
Բնօրինակ հուզված էր հաղորդությունը բաժանելու առիթով: Արդյո՞ք ես իսկապես կարող էր դա անել:

**64** Հետքերով. Սպասելով Վինթեր Զվորթերսում  
Ջենիֆեր Մադդի

**66** Սրբերը կանգ են առնում Վինթեր Զվորթերսում  
Արի Վան Դե Գրաաֆ

**67** Հատուկ վկա. Ինչպե՞ս է Հիտու Զրիստոսը խոսում մարգարեների հետ:  
Երեց Դ. Թոդ Զրիստոֆերսոն

**68** Օգնել Վիոլեթին  
Շառլոտ Մաե Շեփարդ  
Վաղուցից միշտ կուպիտ էր Էմմայի հետ: Ինչո՞ւ Էմման պետք է լավ վերաբերվեր նրան:

**70** Տուն բերե՛ք Երեխաների խմբի դասը. Ես կկիսվեմ ավետարանով Աստծո բոլոր գավակների հետ

**72** Կամիլլը Նյու Յորք Սիթիից

**74** Մեր էջը

**76** Մանուկների համար

**81** Մարգարեի բնութագիրը. Դեյվիդ Օ. Մակքեյ

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու պաշտոնական միջազգային ամսագիր

**Առաջին Նախագահություն.** Թոմաս Ա. Մոնտե, Շենրի Բ. Այրիկ, Դիտեր Ֆ. Ուլտրիֆ

**Տասներկու Առաքյալների Քվորում.** Բոլո Բ. Փաքեր, Լ. Թոմ Փերի, Ռասսել Մ. Նելսոն, Դավիդ Ն. Օնգս, Մ. Ռասսել Բալարո, Ռիչարդ Գ. Սքոթ, Ռոբերտ Դ. Չեյս, Ջեֆրի Ռ. Հոլլանդ, Դեյվիդ Ա. Բեդնար, Քվենթին Լ. Քոք, Դ. Թոդ Քրիստոֆերսոն, Նիլ Լ. Անդերսոն

**Խմբագիր.** Քրեյգ Ա. Քարոլս  
**Խորհրդատուներ.** Շենյ Մ. Բոուեն, Բրեդլի Դ. Ֆոսթեր, Քրիստոֆեր Գոլդեն Կրոս, Էնթոնի Դ. Փերքինս

**Գլխավոր տնօրեն.** Դեյվիդ Տ. Ուորներ  
**Ընտանիքների և անդամների աջակցման տնօրեն.** Կինսեյ Ա. Վոգս

**Եկեղեցու Ամսագրերի տնօրեն.** Այան Ռ. Լոյբերգ  
**Գործարար ղեկավար.** Գարթ Բենսոն

**Գլխավոր խմբագիր.** Ռ. Վալ Ջոնսոն

**Գլխավոր խմբագրի օգնական.** Ռայան Քար, Լամեն Փորթեր Գալսթ

**Հրատարակման օգնական.** Մեյիսա Ջենտենո  
**Գրողներ և խմբագրողներ.** Սյուզան Բարոթ, Դեյվիդ Դիքսոն, Դեյվիդ Ա. Էդվարդս, Մեթյու Դ. Ֆլիթս, Միկոլի Ռեյ Ֆրիդման, Լորի Ֆոլլեր, Գարի Զ. Գարթ, Ջենիֆեր Գրեյս Ջոնս, Մալքո Ռ. Մորիս, Ռիչարդ Մ. Ռոմմի, Փոլ Վանդենբերգ

**Արվեստի գծով գործադիր տնօրեն.** Ջ. Սքոթ Նադսոն

**Արվեստի տնօրեն.** Թեդ Ռ. Փեթերսոն

**Ձևավորում.** Ջենեթ Էտրոյա, Ֆեյ Փ. Մորրուս, Ս. Քիմբալ Բոթ, Թոմաս Չալոյ, Նեյթ Ջինս, Ջերի Լին Ս. Շերին, Ջոլին Հինքլի, Էրիկ Դ. Ջոնսոն, Սյուզան Լոֆգրեն, Սքոթ Մ. Մուլ, Բրեդ Թիլդ

**Մտավոր սեփականության համակարգող.** Քրիս Եբերեթ Օս

**Հրատարակչության տնօրեն.** Ջեն Էն Թիբերս

**Հրատարակում.** Քեյվին Ա. Բենքս, Քոնսի Բորդոյի Բրիջ, Ջուլի Բորդոյ, Բրայլեն Վ. Գիթի, Դենիզ Ջորջի, Գիննա Ջ. Նիլսոն, Գեյլ Թեյթ Ռաբերթի

**Նախատպագրություն.** Ջեֆ Լ. Մարթին

**Տպագրության տնօրեն.** Քրեյգ Կ. Սեյվիկ

**Քաշիման տնօրեն.** Սթեֆեն Ռ. Քրիստենսեն

Միացյալ Նահանգներից և Կանադայից դուրս բաժանորդագրման և գների մասին տեղեկանալու համար այցելեք [store.lds.org](http://store.lds.org) կամ դիմեք եկեղեցու ձեր տեղական բաշխման կենտրոն կամ ծխիճյուղի ղեկավարին:

**Ձեռագրերը և հարցերը ներկայացրեք** առցանց՝ [iahona.lds.org](http://iahona.lds.org); Է-փոստով՝ [iahona@ldschurch.org](mailto:iahona@ldschurch.org); կամ փոստով՝ *Liahona*, Rm. 2420, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150-0024, USA:

*Լիահոնան* (Մորմոնի Գրքի տերմին, որը նշանակում է «կողմնացույց» կամ «ուղեցույց») հրատարակվում է անգլերեն, ալբաներեն, բիսլամա, բուլղարերեն, գերմաներեն, դանիերեն, էստոներեն, թագալոգ, թաիլերեն, թայվի, թայերեն, թելուգու, թուրքերեն, ինդոնեզերեն, իսպաներեն, իսրայելերեն, լատիշերեն, լեհերեն, լատիշերեն, լիտվաերեն, կամբոջերեն, կիրիբաթի, կորեերեն, հայերեն, հինգի, հոլանդերեն, հունարեն, հունգարերեն, ճապոներեն, մալայալ, մարշալերեն, մոնղոլերեն, նորվեգերեն, շվեդերեն, չեխերեն, չինարեն, պորտուգալերեն, ռումիներեն, ռուսերեն, սամոյերեն, սինհալ, սլովեներեն, վիետնամերեն, ուկրաիներեն, ուրդու, քերական, ֆիններեն, ֆիլիպինյան ֆիլիպինյան լեզուներով: (Հրատարակչության համախաղանությունը տարբերվում է ըստ լեզուների):

© 2013 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում:

*Լիահոնայի* տեքստը և տեսողական նյութերը կարող են բազմացվել եկեղեցում կամ տանը առանձին, ոչ-առևտրային օգտագործման նպատակով: Տեսողական նյութերը չեն կարող բազմացվել, եթե սեփականության հատուկ նշում է արված: Հեղինակային իրավունքի վերաբերյալ հարցերը ուղղեք հետևյալ հասցեով. Intellectual Property Office, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150, USA; կամ Է-փոստով. [cor-intellectualproperty@ldschurch.org](mailto:cor-intellectualproperty@ldschurch.org):

*Լիահոնան* տարբեր լեզուներով կարելի է գտնել [www.iahona.lds.org](http://www.iahona.lds.org) ինտերնետային կայքում:

**For Readers in the United States and Canada:**  
October 2013 Vol. 14 No. 3. *LIAHONA* (USPS 311-480) Armenian (ISSN 1525-7614) is published four times a year (April, May, October, and November) by The Church of Jesus Christ of Latter-day Saints, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150. USA subscription price is \$4.00 per year; Canada, \$4.80 plus applicable taxes. Periodicals Postage Paid at Salt Lake City, Utah. Sixty days' notice required for change of address. Include address label from a recent issue; old and new address must be included. Send USA and Canadian subscriptions to Salt Lake Distribution Center at address below. Subscription help line: 1-800-537-5971. Credit card orders (Visa, MasterCard, American Express) may be taken by phone. (Canada Poste Information: Publication Agreement #40017431)

POSTMASTER: Send all UAA to CFS (see DMM 707.4.12.5). NONPOSTAL AND MILITARY FACILITIES: Send address changes to Distribution Services, Church Magazines, P.O. Box 26368, Salt Lake City, UT 84126-0368, USA.

# Մտքեր ընտանեկան երեկոյի համար

Այս համարը պարունակում է հոդվածներ և միջոցառումներ, որոնք կարող են օգտագործվել ընտանեկան երեկոյի համար: Սիա երկու օրինակ:



ՎԱՆԱՐՈՒՄ ԵՏՈՒՄ ԶԱՌՈՐՈՒՄ

**«Դառնալ Զարոգիր Իմ Ավետարան-  
նին համապատասխան միսիոներ»,**  
էջ 46. Կարող եք ընտանիքով քննարկել *Զարոգիր Իմ Ավետարանում* սահմանված միսիոներների հինգ հատկանիշները: Ապա փորձեք կիրառել այդ սկզբունքները: Կարող եք համաձայն միասին վերլուծել *Զարոգիր Իմ Ավետարանի* մի բաժինը և խնդրել ընտանիքի անդամներին հերթով կիրառել միսիոներական դասերի ուսուցանում պարունակող մասերը, մինչ ընտանիքի մյուս անդամները կկատարեն հետաքրքրվողների դերերը: Կարող եք քննարկել միսիոներական աշխատանքի դժվարությունները և առաջարկել ուղիներ՝ զարգացնելու երեք Դեյվիդ Ա. Բեդնարի նկարագրած հատկանիշները:

**«Եղեք ուժեղ, եղեք առողջ, եղեք խելացի»,** էջ 52. Երեք Ադրիան Օչոայի հոդվածը կարդալուց հետո, կարող եք ծրագրել մի միջոցառում, որը թույլ կտա ձեր ընտանիքի անդամներին միասին ֆիզիկապես ակտիվ լինել: Կարող եք սպորտային խաղ կազմակերպել կամ միասին քայլել: Հետևեք, որ ձեր միջոցառումը համապատասխան լինի ընտանիքի անդամների տարիքին և ունակություններին (օրինակ, կարող եք խնդրել տարիքով ավելի մեծ երեխաներին օգնել փոքրերին միջոցառման ժամանակ): Միջոցառումից հետո ընտանիքով քննարկեք ֆիզիկական ակտիվ ապրելակերպի օգուտները: Կարող եք նաև ծրագրել ուղիներ շարունակելու աշխատել ընտանիքով, հետևելով մեր մարմինների համար հոգ տանելու մեր կենդանի մարզարների խորհուրդներին:

## ՁԵՐ ԼԵԶՎՈՎ

*Լիահոնան* և Եկեղեցու այլ նյութերը տարբեր լեզուներով մատչելի են [languages.lds.org](http://languages.lds.org) կայքում:

## ԱՅՍ ՀԱՄԱՐԻ ԹԵՄԱՆԵՐԸ

*Հանարները ցույց են տալիս հոդվածի առաջին էջը:*

**Ազնվություն, 12, 51**  
**Ակտիվացում, 4, 30, 38**  
**Առաջխարություն, 58**  
**Առողջություն, 9, 52**  
**Արարում, 7**  
**Գայթակցություն, 51, 80**  
**Գթություն, 4, 20, 34, 68**  
**Դատել, 56**  
**Եկեղեցու պատմություն, 64, 66**  
**Եպիսկոպոսներ, 58**  
**Երդվել, 80**  
**Երեխաներ, 76**  
**Ընկերություն, 39, 40, 72**

**Իմաստության Խոսք, 9, 51, 52**  
**Լեզու, 80**  
**Խաղաղություն, 34**  
**Խոստովանություն, 58**  
**Հայտնություն, 67**  
**Հիսուս Քրիստոս, 7, 76**  
**Հախորդություն, 42, 64, 68**  
**Մակեյ, Դեյվիդ Օ., 81**  
**Մարգարեներ, 67**  
**Միսիոներական աշխատանք, 20, 30, 40, 42, 46, 61, 70, 72**

**Նախապատրաստություն, 26**  
**Ներում, 58, 68**  
**Նպատակներ, 12, 54**  
**Չափանիշներ, 56, 80**  
**Պիոներներ, 64**  
**Սուրբ Հոգի, 41, 46**  
**Տաճար, 18, 34**  
**Քահանայություն, 62, 76**  
**Քարոզիր իմ ավետարանը, 42, 46, 54**  
**Քրիստոսանման հատկանիշներ, 54**  
**Օրինակ, 12, 56**



Նախագահ  
Թումաս Ս. Մոնսոն

# Օգնության հասնելու ՄԵՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

**Վ**երջին Օրերի Սրբերի համար օգնության հասնելու կարիքը մեր եղբայրներին և քույրերին, ովքեր ինչ-որ պատճառով շեղվել են Եկեղեցում ակտիվ լինելու ճանապարհից, հավերժական կարևորություն ունի: Մենք ճանաչում ենք նման մարդկանց, ովքեր մի ժամանակ ընդունել են ավետարանը: Եթե այո, ո՞րն է նրանց օգնության հասնելու մեր պարտականությունը:

Խորհեք ծերերի, որբնայրիների և հիվանդների կարիքների մասին: Շատ հաճախ նրանք հայտնվում են ցամաքած և ամալի մեկուսացման անապատում, որը կոչվում է միայնակություն: Երբ երիտասարդությունը հեռանում է, երբ առողջությունը վատթարանում է, երբ ուժը նվազում է, երբ հույսի լույսը սկսում է շատ աղոտ փայլել, նրանք կարող են աջակցվել օգնության հասնող ձեռքի և կարեկցանք ունեցող սրտի միջոցով:

Իհարկե, կան ուրիշները, ովքեր ունեն օգնության կարիք: Ոմանք պայքարում են մեղքի դեմ, մինչդեռ ուրիշները շրջում են վախով կամ անտարբերությամբ կամ անտեղյակության մեջ: Ինչ-որ պատճառով նրանք մեկուսացրել են իրենց Եկեղեցում ակտիվ լինելուց: Եվ նրանք գրեթե հաստատ կորած կմնան, եթե մեր՝ Եկեղեցու ակտիվ անդամների մեջ, ցանկություն չառաջանա օգնության հասնել և փրկել:

## Որևէ մեկը ցույց կտա ճանապարհը

Որոշ ժամանակ առաջ ես նամակ ստացա մի մարդուց, ով հեռացել էր Եկեղեցուց: Նա մարմնավորում է մեր անդամներից շատ շատերին: Այն բանից հետո, երբ նա նկարագրել էր, թե ինչպես է դարձել քիչ ակտիվ, նա գրել էր.

«Ես շատ բան ունեի և այժմ ես շատ քիչ բան ունեմ: Ես երջանիկ չեմ և ինձ թվում է, թե կարծես ամեն բան ինձ մոտ անհաջող է ստացվում: Ավետարանը երբեք չի հեռացել իմ սրտից, չնայած, որ այն հեռացել է իմ կյանքից: Ես խնդրում եմ, որ դուք աղոթեք ինձ համար:

Խնդրում եմ, մի մոռացեք մեզանից նրանց, ովքեր այստեղ չեն՝ կորած Վերջին Օրերի Սրբերին: Ես գիտեմ, թե որտեղ է Եկեղեցին, սակայն երբեմն ինձ թվում է, որ ես կարիք ունեմ, որ մեկ ուրիշը ցույց տա ինձ ճանապարհը, քաջալերի ինձ, հեռացնի իմ վախը և վկայություն բերի ինձ համար»:

Մինչ ես կարդում էի այս նամակը, ես մտաբերեցի աշխարհի ամենահրաշալի պատկերասրահներից մեկը՝ Լոնդոնի հայտնի Վիկտորիա և Ալբերտ թանգարանը, կատարած այցելությունը Անգլիայում: Այնտեղ բացառիկ մի շրջանակով գլուխգործոց կա, որը 1831թ. նկարել է Ջոզեֆ Մալլորդ Վիլիամ Թրոնտերը: Նկարում պատկերված են ծանրացած սև ամպեր և մոլեգնող անհանգիստ ծով, որ վտանգ և մահ են ներշնչում: Մենելանելի դրության մեջ գտնվող նավից մի լույս է ամկայծում հեռվում: Առաջին պլանում, ջրի փրփրադեզ ալիքներով վեր բարձրացած մի մեծ փրկանավակ է պատկերված: Մարդիկ ողջ ուժով թիավարում են, երբ փրկանավակն ընկղմվում է փոթորկի մեջ: Ծովափին կանգնած են մի կին և երկու երեխաներ՝ անձրևից թրջված և քամուց մտրակված: Նրանց մտահոգ հայացքները սևեռված էին դեպի ծովը: Իմ մտքում ես կրճատեցի նկարի անունը: Ինձ համար այն դարձավ *Դեպի փրկություն*:<sup>1</sup>

Կյանքի փոթորիկներում թաքնված է վտանգը: Տղամարդիկ և կանայք, տղաները և աղջիկներն ակամայից հայտնվում են անելանելի դրության մեջ և կործանման եզրին: Ո՞վ կառաջնորդի փրկանավերը, հետևում թողնելով տան հարմարավետությունները և ընտանիքը և կգնա օգնության հասնելու:

Մեր առջև դրված խնդիրն անհաղթահարելի չէ: Մենք կատարում ենք Տիրոջ հանձնարարությունը. մենք լիազորված ենք ունենալու Նրա օգնությունը:

Իր ծառայության ընթացքում Վարդապետը Գալիլեայում կոչ արեց ձկնորսներին թողնել իրենց ուռկանները



## Ջենի նվերը

Ջոսի Ս. Քիլփաք

Ավագ դպրոցում ես մի շարք սխալ ընտրություններ կատարեցի: Այդ ընտրություններն առաջ բերեցին լուրջ հետևանքներ և տխրություն, և ես որոշեցի օգտագործել իմ ամառային արձակուրդները, որպեսզի սկսեի փոխել իմ կյանքը: Երբ կրկին սկսվեցին դպրոցական պարապմունքները, ես ընդմիջումն անց էի կացնում դատարկ միջանցքներում, որ խուսափեի վատ ընկերակցություններից, որոնք պատրաստ էին կրկին ողջունել ինձ:

Ես երբեք այդքան միայնակ ինձ չէի զգացել:

Ապա Աստված ինձ մի նվեր տվեց. Նա ինձ մոտ ուղարկեց Ջենին: Նա երբեք չքննադատեց ինձ իմ

սխալների համար, այլ դրա փոխարեն խրախուսեց ինձ շարունակ առաջ շարժվել ճիշտ ուղղությամբ: Իմանալով, որ Նա դպրոցում կլինեի, օգնեց ինձ շարունակել իմ սուրբ գրությունները կարդալը և իմ վկայությունը մեծացնելը: Երբ եկան ավարտական օրերը, ես ապացուցեցի ինքս ինձ, որ ես հավատարիմ մնացի փոխվելու իմ գաղափարին:

Երբեմն ես խորհում եմ այն մասին, թե որտեղ ես կլինեի այսօր, եթե Ջենն ինձ օգնության չհասներ: Կկարողանայի՞ ես ամուր բռնվել իմ սկզբունքներից առանց նրա: Բարեբախտաբար, ես երբեք չեմ իմանա, քանի որ Նա այնտեղ էր՝ իր ողջ սրտով պատրաստ և ցանկանում էր օգնել ինձ:

*Հեղինակն ապրում է Յոստայում, ՄՄՆ:*

## ԵՐԵՒԱՆԵՐ

## Օգնության հասնելու ուղիներ

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը սովորեցնում է, որ մենք պետք է օգնության հասնենք ուրիշներին, ներառյալ ծերերին, որբնայրիներին,

հիվանդներին, քիչ-ակտիվներին և նրանց, ովքեր ունեն լրացուցիչ օգնության կարիք: Նայեք ներքևի նկարներին և շրջանակի մեջ առեք այն նկարները, որտեղ ցուցադրված է մի բան, որը դուք կարող եք անել ուրիշներին օգնելու համար:



Ստորև տրված տողերում գրեք որոշ ուղիներ, որոնցով դուք կարող եք օգնել ուրիշներին: Դուք կարող եք օգտագործել նկարների գաղափարները:

---



---



---



---



---

Աղոթքով ուսումնասիրեք այս նյութը և մտածեք, թե ինչով կարող եք կիսվել այն քույրերի հետ, ում այցելում եք: Ինչպե՞ս կարող է Փրկչի կյանքը և առաքելությունը հասկանալը մեծացնել Նրա հանդեպ ձեր հավատքը և օրինել նրանց, ում համար դուք հոգ եք տանում: Լրացրո՞ղ տեղեկության հաևար, այցելե՛ք. [reliefsociety.lds.org](http://reliefsociety.lds.org):

## Հիսուս Քրիստոսի աստվածային առաքելությունը. Արարիչ

Սա Այցելող Ուսուցիչների Ուղերձների շարքում առաջինն է, որ նվիրված է Փրկչի առաքելության տարբեր ոլորտներին:

Հիսուս Քրիստոսը «ստեղծեց երկինքները և երկիրը» (3 Նեփի 9.15): Նա արեց դա քահանայության զորությամբ՝ Երկնային Հոր առաջնորդության ներքո (տես Մովսես 1.33):

«Որքան երախտապարտ պետք է լինենք մենք, որ իմաստուն Արարիչը ստեղծեց երկիրը և մեզ դրեց այստեղ, - ասել է Նախագահ Թոմաս Մ. Մոնտոնը, - որպեսզի անցնենք ժամանակի փորձությունով, փորձվելու հնարավորություն ունենանք և արժանի դառնանք այն ամենին, ինչ Աստված պատրաստել է մեզ համար»:<sup>1</sup> Երբ մենք օգտագործում ենք մեր ընտրության իրավունքը և հնազանդվում ենք Աստծո պատվիրաններին և ապաշխարում ենք, մենք արժանի ենք դառնում, որ վերադառնանք և ապրենք Նրա հետ:

Արարման մասին Նախագահ Դիտեր Ֆ. Ուիլդորֆը՝ Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդականը, ասել է.

«Մենք ենք պատճառը, որ Նա ստեղծեց տիեզերքը: . . .

Սա է մարդու պարադոքսը. Աստծո



հետ համեմատած՝ մարդը ոչինչ է, այնուամենայնիվ, մենք ամեն ինչ ենք Աստծո համար»:<sup>2</sup> Իմանալը, որ Հիսուս Քրիստոսը ստեղծել է աշխարհը մեզ համար, քանի որ մենք ամեն ինչ ենք նշանակում Աստծո համար, կարող է օգնել մեզ մեծացնել մեր սերը Նրանց հանդեպ:

### Սուրբ գրություններից

Հավանմես Ա.3, Եբրայեցիս Ա.1–2, Մոսիա 3.8, Մովսես 1.30–33, 35–39, Աբրահամ 3.24–25

### ՀՂՈՒՄՆԵՐ

1. Թոմաս Մ. Մոնտոն, «Կյանքի մրցավազք», *Լիսինուս*, մայիս 2012, 91:
2. Դիտեր Ֆ. Ուիլդորֆ, «Դու կարող ես Նրա համար», *Լիսինուս*, նոյեմբեր 2011, 20:
3. Joseph Fielding Smith, in *Daughters in My Kingdom: The History and Work of Relief Society* (2011), 171.
4. *Daughters in My Kingdom*, 171.
5. Joseph Smith, *Daughters in My Kingdom*, 169.

## Հավատք, Ընտանիք, Սփոփանք



### Մեր պատմությունից

Մենք ստեղծվել ենք Աստծո պատկերով (տես Մովսես 2.26–27), և մենք ունենք աստվածային ներուժ: Մարգարե Ջոզեֆ Սմիթը հորդորել է Սփոփող Միության քույրերին «ապրել [իրենց] արտոնություններին համաձայն»:<sup>3</sup> Այդ քաջալերումն որպես հիմք ունենալով՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Եկեղեցու քույրերն ուսուցանվել են ապրել իրենց աստվածային ներուժին համաձայն՝ իրագործելով իրենց հետ կապված Աստծո նպատակները: «Երբ նրանք սկսում են հասկանալ, թե ովքեր են իրենք իրականում՝ Աստծո դուստրերը՝ սիրելու և հոգ տանելու բնածին ուսակությամբ, նրանք հասնում են իրենց ներուժին որպես սուրբ կանայք»:<sup>4</sup>

«Դուք այժմ գտնվում եք մի իրավիճակում, երբ կարող եք գործել համաձայն այն կարեկցանքի, որն Աստված դրել է ձեր կրթում», - ասել է Մարգարե Ջոզեֆ Սմիթը: «Եթե դուք ապրեք այս սկզբունքների համաձայն, որքան հրաշալի և փառահեղ կլինի: Եթե դուք ապրեք ձեր արտոնությունների համաձայն, հրեշտակները չեն կարող հետ պահվել ձեր ընկերակցությունից»:<sup>5</sup>

### Ի՞ՆՉ ԿԱՐՈՂ ԵՄ ԵՍ ԱՆԵԼ:

1. Ինչպե՞ս է մեր աստվածային բնույթը հասկանալու ձգտումը մեծացնում Փրկչի հանդեպ մեր սերը:

2. Ինչպե՞ս մենք կարող ենք ցուցադրել մեր երախտագիտությունը Աստծո արարչագործությունների համար:

# Մտքեր գերազույն համաժողովից

Թինա Սպենսեր



## «Գուշակիր, թե ով է գալու ընթրիքին»:

Յուրաքանչյուր գերազույն համաժողովից տասնհինգ օր առաջ մեր ընտանիքը պատին ամրացնում է «Գուշակիր, թե ով է գալու ընթրիքին» վերնագրով մեր ցուցանակը: Մալա մենք ավելացնում ենք մեր մարզարենների, տեսանողների և հայտնողների վերջին նկարները, որոնք վերցնում ենք Եկեղեցու նախորդ համաժողովի ամսագրերից:

Ես նախապատրաստվում եմ, տեղեկություններ հավաքելով այն մարզարենի մասին, ում մենք ողջունելու ենք այդ երեկո: Երբեմն ես տանը գտնում եմ առարկաներ, որպեսզի ներկայացնեմ իմ գտած տեղեկություններից մի քանիսը, և ես դնում եմ դրանք ափսեի մեջ: Ընթրիքի ընթացքում, երբ ես պատմություններ եմ պատմում յուրաքանչյուր առարկայի մասին, բոլորը փորձում են գուշակել, թե ով է նա: Մեկ ուրիշ անգամ ես պատմում եմ

մեկ կամ երկու պատմություն, որով մարզարեն կիսվել էր նախորդ գերազույն համաժողովի ժամանակ:

Ես մնում եմ զարմացած, թե որքան բան են հիշում իմ երեխաները մեր սիրելի մարզարենների և առաքյալների մասին, և ես գիտեմ, որ այս հասարակ խաղը նաև մեծացրել է իմ սերը և գիտելիքը այս հրաշալի մարդկանց վերաբերյալ:

## Համաժողովի իմ անձնական օրինակը

Երբ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Նիլ Լ. Անդերսենը և Նրա կինը՝ Քեթին, այցելեցին մեզ ցցի համաժողովի ժամանակ, Քույր Անդերսենը կիսվեց մեզ հետ մի պատմությամբ: Նա ասաց, որ երբ նրանք ապրում էին Ֆրանսիայում, նա իրենց յուրաքանչյուր երեխայի համար պատրաստեց համաժողովի ելույթների կրկնօրինակները՝ նույնիսկ ամենափոքրների համար: Նա ապշած էր, երբ իմացավ

կրկնօրինակների գինը, որը շատ թանկ արժեր: Մալա մի հարց ծագեց նրա մտքում. «Ի՞նչ արժեք ունի ձեզ համար այն, որ ձեր ընտանիքն ունենա մարզարենի խոսքերը»:

Այս պատմությունն իրոք հուզեց ինձ, և ես փորձեցի այնպես անել, որ մեր ընտանիքում յուրաքանչյուրն ունենա համաժողովի ելույթների իր անձնական օրինակը: Մեր դուստրերը շատ ոգևորված էին: Մենք օգտագործեցինք դրանք ընտանեկան երեկոյի համար և սուրբ գրությունների ուսումնասիրության ժամանակ: Ինձ հաճելի էր տեսնել, որ իմ մի աղջիկն ինքնուրույն կարդում էր ելույթները և նշումներ էր անում իր մատիտով: Մյուս աղջիկս, որ վերջերս էր մկրտվել, խնդրում էր ինձ իր համար առանձին կարդալ ելույթները:

## Համաժողովի կոչը

Որպես Մփոփող Միության դասի մի մաս, ես կոչ արեցի քույրերին վերանայել նախորդ համաժողովի ելույթները. որոշ քույրեր վերընթերցեցին ելույթները, մյուսները դիտեցին այն համացանցում: Մի շարք քույրեր ասացին, որ իրենք շատ ավելի պատրաստված էին իրենց զգում հաջորդ համաժողովի համար: ■

*Հեղինակն ապրում է Վաշինգտոնում, ԱՄՆ:*



# ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԷՄՈՑԻՈՆԱԼ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ

Որոշ երիտասարդների համար ֆիզիկական առողջ վիճակ ապահովող սկզբունքները չկիրառելը կարող է մեծ խոչընդոտ դառնալ ընկերներ ձեռք բերելու և ինքնավստահություն ունենալու հարցում: Դեռ ավելին, ֆիզիկական և էմոցիոնալ առողջությունը միասին ծառայելու նախապատրաստության խիստ կարևոր, սակայն հաճախ թերի զարգացած կողմերից է: Այս ամսագրի 52–53 էջերում Յոթանասունից Երեց Ադրիան Օչոան քննարկում է, թե մեր մարմինների համար հոգ տանելն ինչպես կարող է պահպանել ֆիզիկական և էմոցիոնալ առողջությունը: Նա հիշեցնում է մեզ մարզվել և հնազանդվել Իմաստության Խոսքին (տես Վևմ 89), որպեսզի մենք լինենք ավելի առողջ և ավելի երջանիկ: Երբ դուք օգնեք ձեր երեխաներին սովորել և կիրառել ֆիզիկական և էմոցիոնալ առողջության սկզբունքները, նրանք կկարողանան մեծացնել իրենց ինքնավստահությունը և պատրաստվել հետագա ծառայությանը:

Երեց Օչոան ասում է. «Ձեր մարմնի համար հոգ տանելը նաև օրհնում է ձեր միտքը և օգնում է ձեզ հիշել, որ դուք Աստծո զավակն եք և կարող եք լինել վստահ և երջանիկ: Մեր էմոցիոնալ, ֆիզիկական և հոգևոր կողմերը բոլորն էլ կապված են իրար հետ»:

## Երիտասարդներիև ուսուցանելու առաջարկներ

- Միասին կարդացեք Երեց Օչոայի ելույթը և կազմեք

ընտանեկան մարմնամարզության ծրագիր՝ ֆիզիկական առողջ վիճակի առանձնահատուկ, իրական նպատակներով:

- Ձեր դեռահաս երեխաների հետ կարդացեք ֆիզիկական և էմոցիոնալ առողջության վերաբերյալ բաժինը *Երիտասարդներին զորացնելու համար* գրքույկից (էջ 25–27): Քննարկեք, թե ինչ է նշանակում էմոցիոնալ առողջ լինելը:
- Միասին երգեք «Թեև դժվար է» (*Hymns*, no. 122) օրհներգը և քննարկեք, թե ինչ է մեզ սովորեցնում հարությունը մեր ֆիզիկական մարմինների կարևորության մասին:
- Ուսումնասիրեք այս ելույթում թվարկված սուրբ գրությունները և քննարկեք, թե ինչ են դրանք ուսուցանում ֆիզիկական և էմոցիոնալ առողջության մասին:

## Երեխաներին ուսուցանելու առաջարկներ

- Ձեր երեխաներին ցույց տվեք տաճարի մի նկար: Քննարկեք, թե ինչ է նշանակում, երբ Պողոս Առաքյալը սովորեցնում է, որ մեր մարմինները «Մուրբ չոգու տաճար են» (Ա Կորնթացիս 6.19), և թե ինչպես այդ գիտելիքը կարող է օգնել մեզ հոգ տանել մեր մարմինների և մտքի համար:
- Կազմեք առաջադրար հաճելի միջոցառումների մի ցանկ,

## ԱՌՆՉՎՈՂ ՍՈՒՐԸ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սռակաց ԺԶ.32

Դանիել Ա.3–20

Ղուկաս ԻԱ.19

Հռովմայեցիս ԺԲ.1–2

Ա Կորնթացիս Զ.19–20

Ա Թեսաղոնիկեցիս Ե.14

Ալմա 38.12, 53.20

Վարդապետություն և Ուխտեր 88.15, 89

որ ձեր երեխաները կցանկանան անել որպես ընտանիք: Ապա մի ծրագիր կազմեք, թե ինչպես այս միջոցառումները կարելի է դարձնել ընտանեկան կյանքի մի մասը:

- Քննարկեք, թե ինչ եղանակներով կարող եք հասկանալ և կառավարել զգացմունքները, ներառյալ՝ բարկությունը կամ տխրությունը: Երգեք «Թե ուրախ ես» (*Children's Songbook*, 266), «Փորձում եմ նմանվել Հիսուսին» (*Children's Songbook*, 78) կամ մեկ այլ երգ զգացմունքների և լավ ընտրություններ կատարելու մասին: ■

# ԵԿԵՂԵՑՈՒ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Եկեղեցու այլ նորություններին և իրադարձություններին ծանոթանալու համար այցելեք [news.lds.org](http://news.lds.org):

## Անդամները կարող են դիմել քահանայության իշխանության շառավիղը ստանալու

**Ռայն Մորգենզեգ**

*Church News*

Եկեղեցին այժմ կարող է անդամների հայցի հիման վրա ներկայացնել քահանայության իշխանության շառավիղը: Քահանայության իշխանության շառավիղը կարգումների հերթականությունն է, որով կարելի է գնալ ետ՝ մինչև Եկեղեցու սկիզբը և, ի վերջո, հասնել մինչև Փրկիչը:

Թեև Յոթանասունականի պաշտոն ունեցող քահանայություն կրողը կարող է ընդգրկվել անդամի անձնական իշխանության շառավղի մեջ, Յոթանասունականի պաշտոնի համար իշխանության առանձին շառավիղ չի պահվում: Բացի այդ, կարգված եպիսկոպոսների և հայրապետների քահանայության իշխանության շառավիղը տարվում է քահանայապետի իրենց կարգման միջով:

Միայն Մելքիսեդեկյան Քահանայության իշխանության շառավղի մասին տեղեկությունը կարող է ներկայացվել Եկեղեցու կողմից: Սիարոնյան Քահանայության շառավիղը մատչելի չէ: Անդամները կարող են դիմել Մելքիսեդեկյան իշխանության շառավղի տեղեկության համար միայն իրենց համար, տանը ապրող որդու և ծառայության մեջ գտնվող միսիոներին համար: Այդ փաստաթղթերը չեն համարվում Եկեղեցու պաշտոնական գրառումներ:

Եթե ցանկանում եք ստանալ ձեր քահանայության իշխանության շառավիղը, ներառեք ձեր օրինական անունն ամբողջությամբ, ծննդյան ամսաթիվն ամբողջությամբ, անդամության համարը (կարելի է գտնել տաճարային երաշխավորագրի վրա կամ ձեռք բերել ծխի գործավարից), այն անձի անունը, ով կարգել է ձեզ երեցի կամ քահանայապետի պաշտոնի (եթե հայտնի է), և ձեր փոստային հասցեն և հեռախոսի համարը կամ է-փոստի հասցեն:

Ձեր հայտն ուղարկեք.

Priesthood Line of Authority

Global Service Center

120 North 200 West

Salt Lake City, Utah 84103-1514, USA

Ֆաքս. 1-801-240-6816

Հեռախոս. 1-800-453-3860, ներքին 2-3500

Է-փոստ. [lineofauthority@ldschurch.org](mailto:lineofauthority@ldschurch.org)

Նամակի նյութի տողում գրելով «PLA»: Ի պատասխան՝ դուք կստանաք մի ձև, որը պետք է լրացնեք և վերադարձնեք («PLA» պարունակող նամակները ստանում են ավտոմատ ուղարկվող պատասխան): ■



**Քահանայության իշխանության շառավիղը արարողություններ կատարողների համար կարող է հասնել մինչև Փրկիչը:**



**Պարողները մասնակիցների հետ կազմում են «20» թիվը ներկայացման ժամանակ, որը տեղի ունեցավ Մոնղոլիայում Եկեղեցու 20-ամյակի տոնակատարությանը:**

## Մոնղոլիան տոնում է Եկեղեցու 20-ամյակը

2013թ. ապրիլի 15-ին, երկուշաբթի օրը, ավելի քան 300 Եկեղեցու անդամներ հավաքվեցին Զախսան բլրի վրա՝ Մոնղոլիայի Ուլանբատոր քաղաքում, որպեսզի նշեն այդ երկրում Եկեղեցու ներկայության 20-ամյակը: Ելույթ ունեցավ 50 հոգուց բաղկացած երգչախումբը և խումբն ունկնդրեց Երեց Նիլ Ա. Մաքսվելի (1926–2004) ձայնագրությունը, երբ նա 1993թ. նվիրագործեց Մոնղոլիան ավետարանը քարոզելու համար:

Երեց Թայի Զվոդ Յենը՝ Ասիայի տարածքի նախագահության նախկին անդամը, որն ուղեկցում էր Երեց Մաքսվելին 1993թ. Մոնղոլիայում, նշեց, որ «Տիրոջ ձեռքերն անդադար աշխատում են Իր այգու այս մասում»:

Շաբաթվա ընթացքում մի շարք միջոցառումներ նշեցին տարեդարձը: Միսիոներների վերամիավորմանը հավաքվեցին 200 վերադարձած միսիոներներ: Ավելի քան 1000 մոնղոլացիներ՝ յուրաքանչյուր 10-րդ անդամը, ծառայել է լիաժամկետ միսիայում: Ամբողջ Մոնղոլիայով ուրբաթ երեկոյան տեղի ունեցան մկրտության ծառայություններ. այդ օրը մկրտվեց 24 հոգի: Երիտասարդ Կանանց գերագույն նախագահությունից վերջերս ազատված Մերի Ն. Քուլը խոսեց երիտասարդ կանանց հոգևոր հավաքին, իսկ ընտանիքի պատմության բաց դռների օրը

ցուցադրվեց ուսուցողական տեսանյութ՝ նվիրված Նոր Family Tree (Ընտանեկան տոհմաժամ) ծրագրին: Մշակութային ներկայացումը ցուցադրեց Մոնղոլիայի հարուստ մշակույթը և Եկեղեցու անդամների տաղանդները:

## Վերջին Օրերի Սրբերը Հայիթիում տոնում են տարեդարձը, օգնում են ծառատունկին

2013թ. մայիսի 1-ին Եկեղեցու անդամները Հայիթիում մասնակցեցին երկրով մեկ լայնածավալ ծառատունկի: Ծրագրի առաջին օրը մեծ թվով նորատունկ ծառեր տնկվեցին և դեռ մեծ քանակով կտնկվեն ապագայում: Ծրագրի ավարտին ավելի քան 400000 նոր ծառեր կաճեն Հայիթիում, ներառյալ՝ կիտրոնի, նարնջի, կոկոսի, պապայայի ծառեր և կաղնիներ:

Եկեղեցին ծառեր էր գնել Հայիթիի երկրաշարժից հետո վերականգնման իր շարունակվող օգնության ծրագրի շրջանակներում: Ծրագիրն անդամներին հնարավորություն տվեց ծառայություն կատարել, նշելով այս կոզու ժողովրդի մեջ Եկեղեցու հաստատման 30-ամյակը: Երեք տասնամյակ առաջ Նախագահ Թոմաս Ա. Մոնտնը, որն այդ ժամանակ Տասներկու Առաքյալների Զվորումի անդամ էր, այցելեց Հայիթի և նվիրագործեց այդ երկիրը վերականգնված ավետարանը քարոզելու համար:

Երեց Նիլ Լ. Անդերսենը՝ Տասներկու

Առաքյալների Զվորումից, ներկա էր Հայիթիում տարեդարձի տոնակատարությանը և նախագահեց հուշատախտակի բացմանը, որով նշանավորվեց Եկեղեցու սկիզբը Հայիթիում:

## Եկեղեցին նվիրաբերում է մեկ միլիոն ֆուլսո սննդամթերք «Feeding America» (Ֆիդինգ Ամերիկա) կազմակերպությանը

2013թ. մայիսին Եկեղեցին՝ Վերջին Օրերի Բարեգործությունների իր մարդասիրական ծրագրի միջոցով նվիրաբերեց ավելի քան մեկ միլիոն ֆուլսո սննդամթերք «Ֆիդինգ Ամերիկա» խոշորագույն հասարակական կազմակերպությանը Միացյալ Նահանգներում, որը պայքարում է սովի դեմ: Նվիրատվությունը պարունակում էր պահածոյացված սննդամթերք՝ միրգ, բանջարեղեն, լոբի, որը կբաժանվի կարիքավոր ընտանիքներին Միացյալ Նահանգների տարբեր համայնքներում:

Բոբ Էիքենը՝ «Ֆիդինգ Ամերիկայի» նախագահը և գլխավոր գործադիր տնօրենը, ասաց, որ նվիրատվությունները կապահովեն 625000 ճաշաբաժին:

## Միսիոներները և անդամները Հայիթիում ծառատունկ են կատարում սարերում, որոնց ետևում ենում է մայրաքաղաք Պորտ-ո-Պրինսը:



ԼՈՒՍՏԱՎՈՐԸ ՋԵՅՄՆՆՆԱՎԱՆԵՐՆԵՐՆԵՐԸ



**Երեց  
Քվենթին Լ. Քուք**

Տասներկու  
Առաքյալների  
Քվորումից



**Ն**ախագահ Դեյվիդ Օ. Մակքեյը (1873–1970) հաճախ է պատմել մի պատմություն, որը տեղի է ունեցել, մինչև նա Շոտլանդիայում ծառայող մի միսիոներ էր: Շատ կարճ ժամանակ միսիայում լինելուց և մոտակա Մթիլիկինգ ամրոցի տեսարժան վայրերը մի քանի ժամ դիտելուց հետո նա սկսել էր կարոտել իրենց տունը: Երբ նա և նրա զուգընկերը վերադառնում էին ամրոցի այցելությունից, նրանք անցան մի շենքի մոտով, որտեղ դռան վերևի մասի քարին փորագրված էր մի մեջբերում, որը հաճախ վերագրվում է Շեքսպիրին, որտեղ ասվում է. «Ով էլ դու լինես, լավ կատարիր քո մասը»:

Հիշելով այս փորձառությունը՝ Նախագահ Մակքեյը բացատրել է. «Ես ասացի ինքս ինձ, կամ իմ ներսի Հոգուն. «Դու

# ԼԱՎ ԿԱՏԱՐԵՔ ՁԵՐ ՄԱՍԸ

*Եղեք արդար: Կազմեք ընտանիք:  
Գտեք ապահովելու պատշաճ եղա-  
նակ: Ծառայեք ձեր կոչումներին  
համաձայն: Պատրաստվեք Աստծուն  
հանդիպելու համար:*



ԵՆՏԵՔՆԵՐԻ ՄԻՋՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵՆ ԿԱԶՄԵԼ ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿՈՄԻՏԵՆ

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ ես: Դեռ ավելին, դու այստեղ ես որպես Տեր Հիսուս Քրիստոսի ներկայացուցիչ: Դու ընդունել ես պատասխանատվություն որպես Եկեղեցու ներկայացուցիչ: Ապա ես մտածեցի [այն մասին], թե ինչ էինք մենք արել այդ օրը: Մենք դիտել էինք տեսարժան վայրերը. մենք, ճիշտ է, ձեռք էինք բերել պատմական ուսուցում և տեղեկատվություն, և դա ինձ մեծ հրճվանք էր պատճառել: . . . Այնուամենայնիվ, դա միսիոներական աշխատանք չէր: . . . Ես ընդունեցի ուղերձը, որ տրվել էր ինձ այդ քարի միջոցով, և այդ պահից սկսած մենք փորձեցինք անել մեր մասը՝ որպես Շոտլանդիայի միսիոներներ»:<sup>1</sup>

Այս ուղերձը շատ կարևոր էր և այնպիսի ազդեցություն ունեցավ նրա վրա, որ Նախագահ Մակքեյն օգտագործեց այն որպես ոգեշնչում իր կյանքի ողջ ընթացքում: Նա որոշեց, որ ինչ պարտականություն էլ որ նա ունենար, նա կաներ այն լավագույն ձևով:

### **ԽՈՍԱՍՓԻՔ ԱՆԱՂՆՎՈՐԵՆ ԳՈՐԾԵԼՈՑ**

Հաշվի առնելով հսկայական ներուժը, որ դուք՝ Եկեղեցու երիտասարդները, ունեք ձեր մեջ ի բարին գործադրելու համար, ի՞նչ մտահոգություն ես կարող եմ ունենալ ձեր ապագայի հետ կապված: Ի՞նչ խորհուրդ ես կարող եմ ձեզ տալ: Առաջինը, ձեզ կհարկադրեն անազնիվ վարվել, նույնիսկ դիմակ կրել, և դառնալ մեկը, ով իրականում չի ներկայացնում, թե ով եք դուք կամ ով եք ուզում լինել:

Եկեղեցու պատմության վաղ շրջանում Մարգարե Ջոզեֆը, Էմման և նրանց 11 ամսական զույգերը՝ Ջոզեֆը և Ջուլիան, Հայրամում էին, Օհայո, Ջոն և Ալիս Ջոնսոնների տանը: Երկու երեխաներն էլ հիվանդացել էին կարմրուկով: Ջոզեֆը և նրա փոքրիկ տղան քնած էին դրսի դռան մոտ դրված անիվներով մահճակալի վրա:

Գիշերվա ընթացքում երեսները սև ներկած մարդկանց մի խումբ ներս խուժեց դռնից և դուրս քաշեց Մարգարեին, ապա նրանք ծեծեցին և ձյութով պատեցին նրան և Միդնի Ռիգդոնին:

Այս իրադարձությունների ամենաողբերգական մասն այն էր, որ փոքրիկ Ջոզեֆը մրսել էր այդ գիշեր և ծանր

հիվանդացել, մինչ նրա հորը քաշելով տարել էին: Արդյունքում նա մի քանի օր հետո մահացավ:<sup>2</sup>

Նրանք, ովքեր մասնակցել էին Մարգարեի և նրա եղբոր՝ Հայրումի նահատակությանը, նույնպես ներկել էին իրենց երեսները, որպեսզի թաքցնեին իրենց իրական իսկությունը:<sup>3</sup>

Մեր օրերում, երբ անհայտ մնալը շատ ավելի հեշտ է, քան երբևէ, կան կարևոր սկզբունքներ դիմակներ չկրելու և «հավատքին հավատարիմ լինելու համար» . . . ինչի համար նահատակները մահացան:<sup>4</sup>

Վատ ընտրություններ կատարելուց խուսափելու համար ձեր ամենամեծ պաշտպանություններից մեկը անհայտ մնալու համը ցանկացած դիմակ դնելուց հրաժարվելն է: Եթե դուք երբևէ զգաք, որ ուզում եք դա անել, խնդրում եմ, իմացեք, որ դա վտանգի լուրջ նշան



**Երեց Լ. Թոմ Փերին լավ կատարեց իր մասը, երբ կայանել էր ճապոնիայում:**

է և հակառակորդի գործիքներից մեկը, որ ստիպի ձեզ անել մի բան, ինչը դուք չպետք է անեք:

Այսօր հաճախ ենք հանդիպում, երբ մեկը թաքցնում է իր ինքնությունը, երբ համացանցում գրում է վիրավորական, ծաղրական, ոչ խելամիտ բաներ: Ոմանք դա անվանում են *սադրանք*:

Պողոս Առաքյալը գրել է.

«Մի խաբուիք. չար ընկրակցություններն ապականում են բարի վարքերը:

Արթուն կացեք արդարութեամբ եւ մեղք մի գործեք. որովհետեւ մի քանիսն Աստուծոյ մասին տգէտ են» (Ա Կորնթացիս ԺԵ.33–34):

Պարզ է, որ չար ընկերակցությունները միայն վատ վարքագծի պատճառ չեն: Եթե գործածվում են Վերջին Օրերի Սրբերի կողմից, դրանք կարող են բացասական ազդեցություն ունենալ նրանց վրա, ովքեր

գիտելիք չունեն Աստծո մասին կամ չունեն Փրկչի մասին վկայություն:

Համացանցի օգտագործումը, որն ուղղված է նսեմացնելու, ոչնչացնելու համար կամ վատ լույսով անձին ներակայացնելու, անընդունելի է: Մենք տեսնում ենք հասարակության մեջ, որ երբ մարդիկ կրում են անհայտ մնալու դիմակ, ավելի հավանական է, որ նրանք դրսևորեն նման վարքագիծ, որն այնքան կործանարար է քաղաքավարի քննախոսության համար: Այն նաև ոտնահարում է Փրկչի ուսուցանած հիմնական սկզբունքները:

Փրկիչը բացատրել է, որ Նա չի եկել աշխարհը դատելու համար, այլ աշխարհը փրկելու համար: Նա այնուհետև նկարագրել է, թե ինչ է նշանակում դատաստանը.

«Եւ սա է դատաստանը, որ լոյսն եկաւ աշխարհքը, եւ մարդիկ խաւարն աւելի սիրեցին քան թե լոյսը, որովհետեւ նորանց գործերը չար էին:

Որովհետեւ ամեն չար գործողը ատում է լոյսին, եւ չէ գալիս դէպի լոյսը, որ նորա գործերը չյանդիմանուին:

Իսկ ճշմարտութիւն գործողը գալիս է դէպի լոյսը, որ նորա գործերը յայտնուին, որ Աստուծով գործուցան» (Հովհաննէս Գ.19–21, տես նաև հատվածներ 17–18):


Արդարները կարիք չունեն դիմակներ կրելու, որ թաքցնեն իրենց իսկությունը:

### **Գործեք ձեր իրական համոզմունքների համաձայն**

Դուք գործում եք ձեր իրական համոզմունքների համաձայն, ձեր ժամանակը ծախսելով այնպիսի բաների վրա, որոնք կամրացնեն և կզարգացնեն ձեր բնավորությունը և կօգնեն ձեզ դառնալ ավելի քրիստոսանման: Ես հուսով եմ, որ ձեզանից ոչ մեկը կյանքը չի տեսնում որպես պարզապես զվարճանք և խաղ, այլ որպես ժամանակ «նախապատրաստվելու՝ հանդիպելու Աստծուն» (Ավմա 34.32):

Ձեր մասը կատարելու և ժամանակը պատշաճորեն օգտագործելու հրաշալի օրինակ է Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Լ. Թոմ Փերին, երբ որպես ծովային նա ներգրավված էր ճապոնիան բռնագրաված ԱՄՆ-ի ռազմական ուժերում Երկրորդ Համաշխարհային պատերազմի ժամանակ: Երեց Փերին կիսվել է այս պատմությամբ, երբ նա իր հատուկ վկայությունն է բերել Փրկչի մասին:

«Ես ծովահետևակայիների առաջին խմբերի կազմում էի, որոնք Երկրորդ Համաշխարհային Պատերազմից հետո խաղաղության համաձայնագիրը ստորագրելուց հետո իջան ճապոնիայի ափ: Գետնին հավասարեցված Նագասակի քաղաքը մտնելը իմ կյանքի ամենատխուր փորձառություններից էր: Քաղաքի մեծ մասը ամբողջովին ոչնչացված էր: Կային



*Ձեր ամենամեծ  
պաշտպանությունը  
վատ ընտրություն-  
ների կատարելուց այն  
է, որ չկրե՞ք ձեր իսկու-  
թյունը թաքցնող որևէ  
դիմակ:*

գոհվածներ, որոնց դեռ չէին թաղել: Որպես բռնագրավող ուժեր, մենք հենակետ հիմնեցինք և գործի անցանք:

Իրավիճակը շատ ճնշող էր և մեզանից մի քանիսը ցանկացան ավելին կատարել: Մենք գնացինք մեր զորագնդի հոգևորական սպասավորի մոտ և թույլտվություն խնդրեցինք վերականգնելու քրիստոնեական եկեղեցիները: Պատերազմի ընթացքում կառավարության կողմից մտցված սահմանափակումների պատճառով այդ եկեղեցիները գրեթե դադարել էին գործել: Մի քանի շենքեր մեծապես վնասվել էին: Մեզանից մի խումբ ցանկացավ կամավոր վերանորոգել և կրկին երեսապատել այդ եկեղեցիները հերթապահությունից ազատ ժամանակ, որպեսզի դրանք կրկին մատչելի լինեին քրիստոնեական ծառայությունների համար:

. . . Մենք գտանք եկեղեցական ծառայողների, որոնք պատերազմի տարիներին չէին կատարել իրենց ծառայությունները, և քաջալերեցինք նրանց, որ վերադառնան իրենց գործունեությանը: Վիթխարի փորձառություն էր աշխատել այդ մարդկանց հետ, երբ նրանք կրկին ազատ էին՝ գործադրելու իրենց քրիստոնեական հավատը:

Եկավ պահը, երբ մենք պետք է հեռանայինք Նագասակիից՝ տուն վերադառնալու նպատակով, որը ես միշտ կհիշեմ: Երբ բարձրանում էինք գնացք, որը պետք է հասցներ մեզ տունդարձի նավերին, մյուս զինծառայողները ծաղրում էին մեզ: Նրանց ընկերուհիները եկել էին իրենց ճանապարհելու: Նրանք ծիծաղում էին մեզ վրա՝ մատնանշելով, որ մենք չենք օգուտել ճապոնիայում զվարճանալու հնարավորությունից: Այսինքն՝ մենք վատնել էինք մեր ժամանակը աշխատելու և պատեր սվաղելու վրա:

Այդ ժամանակ, երբ նրանք իրենց ծաղրի զագաթնակետին էին, կայարանի կողքին մի փոքր բարձրունքի վար հավաքվեցին մոտ 200 ճապոնացի բարի քրիստոնյաներ այն եկեղեցիներից, որոնք մենք վերանորոգել էինք, երգելով «Առաջ, Քրիստոսի զինվորներ»: Նրանք իջան ներքև և հեղեղեցին մեզ նվերներով: Ապա բոլորը շարվեցին երկաթգծի երկարությամբ, և երբ գնացքը սկսեց շարժվել, մենք ձգվում էինք, հասնելով և դիպչելով նրանց մատներին: Մենք չէինք կարողանում խոսել, մենք անչափ հուզված էինք: Բայց մենք երախտապարտ էինք, որ կարողացել էինք մի փոքր օգնել պատերազմից հետո քրիստոնեությունը այդ ժողովրդի մեջ վերահաստատելու գործին»:<sup>5</sup>

Խորհեք և հանգամանքներին ընդառաջ գնացող եղեք, երբ ընտրեք, թե ինչպես օգտագործեք ձեր ժամանակը: Ինչպես դուք կարող եք տեսնել Երեց Փերիի օրինակից, ես չեմ խոսում այն մասին, որ բոլորին ցուցադրենք մեր կրոնը կամ լինենք մակերեսայնորեն հավատարիմ: Դա կարող է ամոթալի լինել ձեզ համար և Եկեղեցու համար: Ես խոսում եմ այն մասին, որ դուք դառնաք այն, ինչ դուք պետք է լինեք:

## Ունեցեք պատշաճ նպատակներ

Իմ երրորդ խորհուրդը վերաբերվում է որոշ նպատակներին, որոնց մասին դուք պետք է խորհեք: Մոտավորապես նույն ժամանակաշրջանում, երբ Երեց Փերին ճապոնիայում էր ծովայինների հետ, Նախագահ Բոյդ Ք. Փաքերը՝ Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահը, Երկրորդ Համաշխարհային պատերազմի վերջում ծառայում էր օդային ուժերում ճապոնիայում:

2004թ. Նախագահ Փաքերի և ուրիշների հետ ես մեկնեցի ճապոնիա: Նա հնարավորություն ունեցավ հետ դառնալ և անդրադառնալ որոշ փորձառություններին և որոշումներին, որոնք նա կայացրել էր այդ ժամանակ: Նրա թույլտվությամբ, ես կկիսվեմ նրա որոշ մտքերով և զգացմունքներով:



**Նախագահ Բոյդ Ք. Փաքերը օրհնվել է արդար նպատակներ ունենալու համար:**

Նախագահ Փաքերը նկարագրեց փորձառություններ, որոնք տեղի էին ունեցել Օկինավա ծովեզրի կղզիներից մեկում: Նա սա համարում է անապատի իր լեռը: Նրա անձնական նախապատրաստությունը և այլ անդամների հետ հանդիպումը խորացրել էին նրա համոզմունքներն ավետարանի ուսմունքների մասին: Սակայն, նա դեռևս չուներ հաստատում՝ հաստատ գիտելիք այն բանի վերաբերյալ, ինչը նա արդեն իսկ զգացել էր, որ ճիշտ է:

Նախագահ Փաքերի կենսագիրը նկարագրել է, թե ինչ է պատահել. «Ի հակադրություն իր փնտրած խաղաղությանը, նա դեմ առ դեմ կանգնեց պատերազմի դժոխքի առաջ, որ մղվում էր անմեղների դեմ: Փնտրելով մենություն և խորհելու ժամանակ, մի օր նա սկսեց վեր մագլցել, որ Բարձրանար օվկիանոսի վրա: Այնտեղ նա գտավ ամբողջովին ավերված մի

փոքրիկ տնակի մնացորդները, որի կողքին գտնվում էր դրա անուշադրության մատնված քաղցր կարտոֆիլի արտը: Չորացող բույսերի մեջ նա տեսավ սպանված մոր և նրա երկու երեխաների դիակները: Տեսարանը լցրեց նրան խորը տխրությամբ, որը միախառնվեց իր սեփական ընտանիքի և բոլոր ընտանիքների հանդեպ ունեցած սիրո զգացմունքներին»:<sup>6</sup>

Հետո նա մտավ ինքնաշեն ռմբապատարանը, որտեղ նա երկար մտածեց, խորհեց և աղոթեց: Նախագահ Փաքերը, ետ նայելով այս իրադարձությանը, նկարագրեց մի բան, ինչը ես կանվանեի հաստատող հոգևոր փորձառություն: Նա ոգեշնչում զգաց այն հարցի շուրջ, թե ինչ պիտի աներ իր կյանքում: Նա, իհարկե, գաղափար չուներ այն մասին, որ նա կկանչվեր այն բարձր և սուրբ կոչմանը, որը նա այժմ կրում է: Նրա տեսականն էր, որ նա ուզում էր լինել ուսուցիչ՝ կարևորություն տալով Փրկչի ուսմունքներին: Նա մտովի որոշում կայացրեց, որ պիտի ապրեր արդար կյանքով:

Շատ հիմնավոր ձևով նա զգաց, որ պետք է գտներ արդար կին, և որ միասին նրանք կստեղծեին մեծ ընտանիք: Այս երիտասարդ զինվորը հասկացավ, որ իր ընտրած աշխատանքը կապահովեր համեստ վարձատրություն և որ իր սիրելի զուգընկերը պետք է ունենար նույն առաջնահերթությունները և ցանկանար ապրել առանց որոշ նյութական բաների: Քույր Դոննա Փաքերը եղել է և շարունակում է լինել Նախագահ Փաքերի կատարյալ զուգընկերը: Նրանք երբեք չեն ունեցել բավականաչափ լրացուցիչ գումար, սակայն նրանք իրենց ոչ մի առումով իրենց աղքատ չեն զգացել: Նրանք մեծացրել են 10 երեխաներ, և նրանք զուգահեռել են: Նրանք այժմ ունեն 60 թոռ և ավելի քան 80 ծոռ:

Ես կիսվում եմ այս ճշմարիտ պատմությամբ, քանի որ շատ հաճախ մեր նպատակները հիմնվում են այն ամենի վրա, ինչն աշխարհն է արժևորում: Կարևոր տարրերը իսկապես շատ պարզ են այն անդամների համար, ովքեր ստացել են փրկող արարողությունները: Եղեք արդար: Ընտանիք կազմեք: Գտեք պատշաճ եղանակ միջոցներ ապահովելու համար: Ծառայեք համաձայն ձեր կոչումների: Նախապատրաստվեք Աստծուն տեսնելուն:

Փրկիչը սովորեցրել է, որ «մարդիս ստացուածքի առաւելութիւնիցը չէ նորա կեանքը» (Ղուկաս ԺԲ.15):

## Կառուցեք ձեր երկիրը և համայնքը

Ի լրացում անհատական հատկանիշների, որակների և որոշումների, եթե դուք ցանկանում եք լինել այն սերունդը, որը պետք է լինեք, դուք կկառուցեք ձեր երկիրը և համայնքը, որտեղ դուք ապրում եք: Ձեր սերունդը պետք է պահպանի արդարությունը և կրոնի ազատությունը: Հրեական քրիստոնեության ժառանգությունը, որը մենք ժառանգել ենք, ոչ միայն



Հրեական քրիստոնեության  
ժառանգությունը, որը մենք  
ժառանգել ենք, ոչ միայն  
թանկարժեք է, այլ նաև  
կարևոր է մեր Երկնային  
Հոր ծրագրի համար: Մենք  
պետք է պահպանենք այն  
հետազա սերունդների  
համար:

թանկարժեք է, այլ նաև կարևոր է մեր Երկնային Հոր  
ծրագրի համար: Մենք պետք է պահպանենք այն հե-  
տազա սերունդների համար: Մենք պետք է միանանք  
լավ մարդկանց, ներառյալ բոլոր նրանց, ովքեր այլ հա-  
վատքներից են, հատկապես նրանց, ովքեր պատաս-  
խանատու են իրենց համարում Աստծո առաջ իրենց  
արարքների համար: Սրանք այն մարդիկ են, ովքեր  
կհասկանան հետևյալ խորհուրդը. «Ով էլ դու լինես, լավ  
կատարիր քո մասը»: Հրեական քրիստոնեության ար-  
ժեքների և կրոնի ազատության արդյունավետության  
մեծացումը կլինի որպես հրաշալի սերունդ ձեր սերնդի  
բնորոշումը:

Հաշվի առնելով այն խնդիրները, որոնք գոյություն  
ունեն աշխարհում այսօր, Առաջին Նախագահությունը  
և Տասներկու Առաքյալների Քվորումը հատկապես  
մտահոգված են, որ դուք պատշաճորեն մասնակցեք  
այն երկրի քաղաքական գործընթացներին, որտեղ  
դուք ապրում եք: Եկեղեցին չեզոք դիրքում է քաղաքա-  
կան պայքարներում և չի աջակցում թեկնածուներին  
կամ կուսակցություններին: Այնուամենայնիվ, մենք  
սկսելով ենք, որ մեր անդամներն ամբողջությամբ  
ներգրավված կլինեն աջակցելու իրենց ընտրած թեկ-  
նածուներին և կուսակցություններին, հիմնվելով այն  
սկզբունքների վրա, որոնք կապահովեն լավ կառա-  
վարություն: Մեր վարդապետությունը պարզ է. նրանք,  
ովքեր բարի են, «ազնիվ . . . և իմաստուն . . . պետք է  
փնտրվեն ջանասիրաբար» (ՎեՐՈՒ 98:10):

Մենք մեծապես վստահում ենք ձեզ: Եկեղեցու ղեկա-  
վարությունն անկեղծորեն հավատում է, որ դուք կարող  
եք կառուցել թագավորություն այնպես, ինչպես ոչ  
մի նախորդ սերունդ չէր կարող: Դուք ունեք ոչ միայն  
մեր սերը և վստահությունը, այլ նաև մեր աղոթքները և  
օրհնությունները: Մենք գիտենք, որ ձեր սերնդի հա-  
ջողությունը կարևոր է, որ Եկեղեցին շարունակի հաս-  
տատվել և թագավորությունը մեծանալ: Մենք աղոթում  
ենք, որ դուք լավ կատարեք ձեր մասը, խուսափելով  
դիմակ կրելուց, գործելով ձեր իրական իսկության հա-  
մաձայն, պատշաճ նպատակներ ունենալով և կառուցե-  
լով ձեր երկիրը և համայնքը: ■

*Երիտասարդ չափահասների համար նախատեսված Եկեղեցու  
Կրթական համակարգի հավաքից, որը տրվել է Բրիզոալ Յանգի  
Համալսարանում, Այդահո, մարտի 4, 2012թ.: Տեքստն անգլերենում  
ամբողջությամբ կարող եք գտնել [lds.org/broadcasts/archive/ces-devotionals/2012/01?lang=eng](http://lds.org/broadcasts/archive/ces-devotionals/2012/01?lang=eng):*

#### ՀՂՈՒՄՆԵՐ

1. David O. McKay, in Francis M. Gibbons, *David O. McKay: Apostle to the World, Prophet of God* (1986), 45.
2. Mark L. Staker, "Remembering Hiram, Ohio," *Ensign*, Oct. 2002, 32, 35.
3. Տես *Եկեղեցու Նախագահների ուսմունքները. ՁոգեՖ Սմիթ* (2007), 24:
4. "True to the Faith," *Hymns*, no. 254.
5. L. Tom Perry, in "Joy—for Us and Others—Comes by Following the Savior," <http://lds.org/prophets-and-apostles/what-are-prophets-testimonies?lang=eng>.
6. Lucile C. Tate, *Boyd K. Packer: A Watchman on the Tower* (1995), 58–59.

# ՊԱՏԱՆԻՆԵՐԸ ԵՎ ՏԱՃԱՐԱՅԻՆ ՈՒԽՏԵՐԸ

*Հիաժամկետ միախոններների  
տարիքային շեմը նվազեցնելու  
արդյունքում տասնյակ  
հազարավոր պատանիներ  
այժմ կապում են տաճարային  
սուրբ ուխտեր:*

## Գարի և Սյուզան Զարթերներ

Որպես տաճարային աշխատողներ, մենք օրհնություն ենք ունեցել հանդիպելու երիտասարդ չափահասների, ովքեր գալիս են տաճար իրենց անձնական օժտումը ստանալու համար: Մենք նկատեցինք, որ տաճարային նախապատրաստության սեմինարներն օգտակար էին նրանց համար, սակայն արդարակյաց ծնողների և ղեկավարների ազդեցությունն ավելի նշանակալի դեր էր խաղացել, օգնելով նրանց նախապատրաստվել տաճարային ուխտեր կապելուն: Որպես ծնողներ և ղեկավարներ, մենք պետք է օգնենք պատանիներին ոչ միայն նախապատրաստվել լիաժամկետ միախաչի ծառայությանը, որը տևում է ընդամենը մի քանի ամիս, այլ նաև տաճարային ուխտեր կապելուն և պահելուն, որը տևում է ողջ հավերժություն: Առաջին քայլերը կարող են սկսվել մանկության տարիներին:

## Նախապատրաստել երեխաներին

Ծնողները իրենց երեխաներին կարող են ցույց տալ տաճարի կարևորությունը տաճարում երկրպագելով և տաճարային աշխատանքի վերաբերյալ իրենց վկայությամբ կիսվելով: Նույնիսկ այն տարածքներում, որտեղ հնարավոր չէ հաճախ տաճար այցելել, ծնողները կարող են տաճար այցելելու ցանկություն սերմանել իրենց երեխաների մեջ:

Նախագահ Հովարդ Վ. Հանթերը (1907–95) սովորեցրել է ծնողներին. «Եկեք կիսվենք մեր երեխաների հետ հոգևոր զգացմունքներով, որ ունենում ենք տաճարում: Եվ եկեք ավելի լրջորեն և հանգիստ սովորեցնենք նրանց՝ հասկանալի ձևով բացատրելով Տիրոջ տան նպատակների մասին»:<sup>1</sup> Մեր երեխաները պետք է իմանան, որ տաճարը մի վայր է, որտեղ մենք ստացել ենք մեր աղոթքների պատասխանները և որտեղ մենք զգում ենք Աստծո սերը:

Ծնողները կարող են նաև սովորեցնել իրենց երեխաներին ուրախությամբ սպասել և արժանիորեն ապրել իրենց անձնական սահմանափակ օգտագործման երաշխավորագրին, որի համար որակվելու հնարավորությունը նրանք կունենան, երբ դառնան 12 տարեկան: Երբ այս պատանիների հաճախելու ժամանակը գալիս է, մենք նկատում ենք ուրախությունը և հպարտությունը, որով նրանք ներկայացնում են այս երաշխավորագրերը տաճարում:

## Նախապատրաստել երիտասարդությանը


Ծնողները կարող են օգնել իրենց երեխաներին ներգրավվել ընտանեկան պատմության հետազոտման

աշխատանքներում, որպեսզի, երբ դառնան 12 տարեկան, նրանք կարողանան ընտանիքի անունները տանել տաճար: Այն երիտասարդներին, ովքեր անում են դա, Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարը խոստացել է. «Ձեր սերն ու երախտագիտությունը ձեր նախնիների հանդեպ կմեծանան: Փրկչի մասին ձեր վկայությունը և դարձի ընթացքը կդառնան ավելի խորը և հաստատուն: Եվ ես խոստանում եմ, որ դուք պաշտպանված կլինեք թշնամու սաստկացող ազդեցությունից»:<sup>2</sup>

Մենք տեսել ենք այս խոստման իրականացման բազմաթիվ օրինակներ: Վերջերս մի երիտասարդ կին պատմեց մեզ, որ երբ նա գտել էր իր տատիկի անունը, նա եկել էր տաճար, որ նրա համար աշխատանք կատարեր: Նա ասաց, որ երբ նա մկրտվել էր նրա համար, նա պարզ կերպով զգացել էր, որ տատիկը ողջունելու էր իրեն հաջորդ կյանքում: Նման փորձառությունները ամրացնում են վկայությունները և ցանկություն են սերմանում մասնակցելու տաճարի հետագա արարողություններին:

Բազմաթիվ երիտասարդներ հանդիպում են անհամեստ հազնվելու գալթակողությանը: Երբ ծնողները և





ղեկավարները կրում են գրավիչ, համեստ հագուստներ, երիտասարդները կհասկանան, որ նրանք նույնպես կարող են դա անել: Երիտասարդները պետք է հասկանան, որ իրենց հագնվելու ձևը և իրենց մարմինների հանդեպ իրենց վերաբերմունքը կարող են ցուցադրել իրենց աշակերտ լինելը:

Ծնողները կարող են օգնել երիտասարդներին նախապատրաստվել տաճար մտնելուն, օգնելով նրանց հասկանալ ուխտերը, որոնք նրանք կապելու են այնտեղ: Տաճարային ուխտերը ներառում են խոստումներ «պահել առաքինության և մաքրաբարոյության ճշգրիտ օրենքը, լինել գթառատ, մեծահոգի, համբերատար և անարատ. նվիրաբերել տաղանդներ և նյութական միջոցներ ճշմարտության տարածման և [մարդկային ընտանիքի] երջանկության համար. նվիրվել ճշմարտության գործին. յուրաքանչյուր միջոցով փորձել նպաստել մեծ նախապատրաստությանը, որ երկիրը պատրաստ լինի ընդունելու իր Թագավորին՝ Տեր Հիսուս Քրիստոսին»:<sup>3</sup> Ծնողները կարող են վկայել, որ երիտասարդները կստանան անձնական և հզոր օրհնություններ իրենց կյանքի ընթացքում, երբ նրանք պահեն այս ուխտերը, և այս ուխտերը կդառնան ավելի նշանակալից երիտասարդների համար, երբ նրանց ծնողներն օգնեն նրանց հասկանալ, որ օրհնությունները և ուխտերը հնարավոր են դարձվել Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով:

Կան տարբեր միջոցներ, որոնցով մենք կարող ենք նախապատրաստել մեր երեխաներին և երիտասարդներին տաճարային օրհնությունները ստանալու համար: Որքան շատ նրանք պատրաստված լինեն, այնքան ավելի հավանական կլինի, որ նրանք խաղաղ լինեն և զգան Հոգին և այսպիսով կարողանան ունենալ հրաշալի հոգևոր փորձառություններ, երբ նրանք ստանան իրենց օժտումը: Երջանիկ տաճարային փորձառությունը կդարձնի նրանց ավելի նվիրված Քրիստոսի հետևորդներ և ավելի լավ միսիոներներ, ովքեր ոգևորված կլինեն օգնելու նրանց, ում ուսուցանում են, որ նախապատրաստվեն ստանալու իրենց անձնական տաճարային սուրբ արարողությունները: ■

#### ՀՂՈՒՄՆԵՐ

1. Howard W. Hunter, "Follow the Son of God," *Ensign*, Nov. 1994, 88.
2. Դեյվիդ Ա. Բեդնար, «Ջավակաների սրտերը կդառնան», *Լիստհուս*, նոյեմբեր 2011, 26–27:
3. James E. Talmage, in *Preparing to Enter the Holy Temple* (2002), 34–35.

© 2000 Blackwell Science Ltd *Journal of Internal Medicine* 247: 399–406



Պետրոսը և Հովհաննեսը կառավարիչների առջև Երուսաղեմում, Սալմոն Վեդդեր: Պետրոսը և Հովհաննեսը բերվեցին առյուծի առաջ, և քահանայապետները հարցրեցին նրանց. «Չէ որ պատուիրելով պատուիրեցինք ձեզ՝ որ չսովորեցնեք այդ անունովը. և ահա Երուսաղեմը լցրիք ձեր ուսմունքովը: . . . Պետրոսը . . . պատասխանելով ասաց. Աստուծոյ պէտք է տեղի հնազանդել քան թե մարդկանց» (Գործք Առաքելոց Ե.28-29):

Պողոս Առաքյալը, Քարել Սքրենտա: Իր ճանկիրողությունների ժամանակ և իր նախնիներում Պողոսը բերում է զորեղ վկայություն Փրկչի մասին ողջ Փոքր Ասիայում և այդ ժամանակներում հայրնի երկրներից մեծ մասում:



BPK, BERLIN / GEMÄLDEGALERIE ALTE MEISTER, STAATLICHE KUNSTSAMMLUNGEN, DRES / ELKE ESTEL / HANS-PETER KLUT / ART RESOURCE, NY



Մեքիսեդեկը օրհնում է Աբրամին (Աբրահամ), Վոլթեր Ռեյն: Մեքիսեդեկը օրհնեց Աբրամին (տես Օմնիոց ԺԴ.18-20) և նաև տվեց նրան քահանայություն (տես ՎեՄԲ 84.14): Մեկ ուրիշ անգամ Տեղը հայտնվեց Աբրամին, ասելով. «Ես նպատակով եմ հեռացրել քեզ Խառանից, որ քեզ իմ ծառան դարձնեմ՝ օտար երկրում իմ անունը կրելու համար: . . . Եվ դու օրհնություն կլինես քո զալիք սերնդի համար, այնպես որ նրանք իրենց ձեռքերում կտանեն այս ծառայությունն ու Քահանայությունը բոլոր ազգերին»: (Աբրահամ 2.6, 9):



## ՍՈՎՈՐԵՑՆԵԼ ԱՆՀԱՎԱՏՆԵ- ՐԻՆ

«Մոսիայի որդիները . . . գնացին լամանացիների մեջ: Սովորեցնելով մի ժողովրդի, որի ավանդույթները թվում է, թե չէին նպաստում հոգևոր աճին, հավատարիմ միսիոներները, այնուամենայնիվ, օգնեցին առաջ բերել մեծ փոփոխություն այս լամանացիների մեջ: Մենք գիտենք, որ . . . «լամանացիներից բոլոր նրանք, որ հավատացին նրանց քարոզելուն և դարձի եկան առ Տերը, երբեք չհեռացան» (Ավմա 23.6)»:

Երեց Ջեյմս Բ. Մարտին, Յոթնասուներորդի, "Repentance That Brings Conversion," *Ensign*, Sept. 2012, 58.

Ամմոնը թագավոր Լամոնիի առջև, *Գալի Լ. Քալի: Ամմոնը՝ Մոսիայի որդիներից մեկը, փրկեց թագավոր Լամոնիի հոտերը: Երբ թագավորը հարցրեց Ամմոնին, թե արդյոք նա ուղարկվել էր Աստծո կողմից, Ամմոնն ասաց, որ նա մի մարդ էր՝ կանչված Մուրբ Հոգու կողմից, որ սովորեցներ ավետարանը «[Լամոնիի] ժողովրդին, որպեսզի նրանք կարողանան բերվել խնացությանը նրա, ինչն արդար է և ճշմարիտ» (Ավմա 18.34):*

## Մեր միսիոներական ծառանգությունը Մորմոնի Գրքում

Ավման, Ամուդեկը, Մոսիայի որդիները և Մամուել Լամանացի Մորմոնի Գրքի հրաշալի միսիոներների ընդամենը մի քանի օրինակներ են: Նրանց միջոցով մենք տեսնում ենք ապաշխարության, հավատքի, հնազանդության և խիզախության օրինակներ: Նրանց նման մենք էլ կարող ենք վստահել Աստծուց ստացած ոգեշնչմանը և հայտնությանը, որ առաջնորդեն մեր միսիոներական ծառայությունը:

Նա ավետիք բերեց իմ հոգուն,  
«Լույսեր Ռեյն: Մի հրեշտակ այցելեց  
Սամուել Լամանացուն և «ավետիք  
բերեց [Սամուելի] հոգուն» Փրկչի  
զարտյան վերաբերյալ (Հեղաձուլում  
13.6–7): Որպես ներհասցիներին  
քարոզելու իր կոչման մի մաս,  
Սամուելը մագլցեց Չարսահմար  
քաղաքի պատի վրա և կիսվեց ժո-  
ղովրդի հետ այս ավետիքով:



## Մեր միսիոներական ժառանգությունը Վարդապետություն և Ուխտերում

Ավետարանի Վերականգնումից հետո միսիոներները խիստ կարևոր դեր էին կատարում: Դան Ջոնսոն, Օրսոն Հայդի և Փարլի Փ. Փրաթի նման միսիոներները կիսվում էին Մորմոնի Գրքով և Հիսուս Քրիստոսի ավետարանով: Ոմանք, ինչպես Մարգարե Ջոզեֆի եղբայր Սամուելը, ծառայում էին իրենց տան մոտակայքում: Ուրիշները ծառայում էին հեռվում, որ կիսեին ավետարանը այնպիսի վայրերում, ինչպես Թաիլանդը, Սենդվիչ կղզիները

(Հավայան կղզիներ), Դանիան և Անգլիան:

Այս առաջին միսիոներները հաճախ ծառայում էին երկար և բազմաթիվ միսիաներ: Նրանք թողնում էին ծնողներին, սիրելիներին, կանանց, երեխաներին և թոռներին, ճիշտ ինչպես մենք: Նրանք ծառայում էին որպես հավատքի, քաջության, հնազանդության, տոկունության և ջանասիրության օրինակներ մեզ համար այսօր:



Մորմոն քարոզիչները, *Սոնորի Ֆրայերդ, ըստ Քրիստեն Դալսգարդի բնօրինակի*: Այս տեսարանը, որտեղ վաղ շրջանի Վերջին Օրերի Սրբերից մի միսիոներ սովորեցնում է Հիսուս Քրիստոսի ավետարանը դանիացի մի ընտանիքի, որ հավաքված են իրենց գյուղական տանը, բնորոշ էր 19-րդ դարի քարոզչական ջանքերին: Միսիոներները նաև սովորեցնում էին ճանապարհի անկյուններում կամ քաղաքի ժողովատների միջանցքներում:



Վիլֆորդ Վուդրուֆը նախապատրաստվում է մկրտությունների Բենեդ ագարակում, *Ռիչարդ Ա. Մյուրեյ*: 1840-ականներին Տերն առաջնորդեց Վիլֆորդ Վուդրուֆին Ջոն Բենեդի ագարակ Հերֆորդշայրում, Անգլիա: «Այնտեղ կային մարդիկ, ովքեր աղոթում էին բաների նախկին կարգի համար», - գրել է Վիլֆորդը: «Հետևանքն այն եղավ, որ այնտեղ հասանելուց հետո առաջին երեսուն օրերի ընթացքում ես մկրտեցի վեց հարյուր հոգու: . . . Այդ երկրում ոչ ամիս աշխատելուց հետո ես եկեղեցի բերեցի ոչ հարյուր հոգու: Ինչո՞ւ: Քանի որ այնտեղ կային մարդիկ, ովքեր նախապատրաստված էին Ավետարանի համար» («Discourse», Deseret Weekly, Nov. 7, 1896, 643):

Նոր ժամանած  
միսիոներները  
սկսեցին մկրտել  
Մենդլիշ կղզի-  
ների (Հավայան  
կղզիներ) բնիկ-  
ներին 1851թ.:  
Սա ավելի ուշ  
արված լուսան-  
կար է:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՊՈՍՏՈՆԵՐՆԵՐԻ ՄԻՍԻՈՆԵՐՆԵՐԻ ԴՐՈՒՄԸ

## Կառուցել մեր միսիոներական ծառանդության հիմքի վրա

Այն պահից սկսած, երբ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը 2012թ. հոկտեմբերի գերագույն համաժողովին հայտարարեց, որ երիտասարդ տղամարդիկ և կանայք կարող են միսիայի գնալ ավելի երիտասարդ տարիքում, տասնյակ հազարավոր Վերջին Օրերի սրբեր հավաքվեցին միսիաներում:

2013թ. ապրիլի գերագույն համաժողովում Տասներկու Առաքյալների Քվորումից երեց Նիլ Լ. Անդերսենն ավելացրեց իր վկայությունը միսիոներական աշխատանքի վերաբերյալ և խրախուսեց մեզանից յուրաքանչյուրին դառնալ այս ծավալվող հրաշքի կարևոր

մասնիկը, օգնելով գտնել նրանց, ոքեր պատ-  
րաստ են լսելու ավետարանը. «Ճիշտ ինչպես  
Տերը ոգեշնչել է ավելի շատ միսիոներների, որ  
ծառայեն, Նա նաև արթնացնում է մտքերը և  
բացում է սրտերը ավելի շատ լավ ու ազնիվ  
մարդկանց, որ ընդունեն Իր միսիոներներին:  
Դուք արդեն իսկ գիտեք նրանց կամ կիմանաք  
նրանց: Նրանք ձեր ընտանիքում են և ապրում  
են ձեր հարևանությամբ: Նրանք փողոցում  
քայլում են ձեր կողքով, դպրոցում նստում են  
ձեր կողքին և կապվում են ձեզ հետ համա-  
ցանցում» («Մա հրաշք է», *Լիսինսա*, մայիս  
2013, 78): ■

Ռահվիրաները փողոցներում, Քեն Սպենսեր: Այս երկու միսիոներները կիսվում են ավետա-  
րանով մի մարդու հետ զրախանության դիմաց Նյու Բրունսվիկում, Նյու Ջերսի, ԱՄՆ:



ՏՐԱՆՍԼԱՏՈՐ ԵՎ ԵՎԵՐԵՑԻՆԻՔՈՒ ՊԱՏՐԱՐԹԱՆ ԹԱՎԱԴԱՐՈՒՄԸ



## ԶԵՐ ՄԻՍԻՈՆԵՐԱԿԱՆ ԿՐԾՔԱՆՇԱՆԸ

«Եթե դուք լիաժամկետ մի-  
սիոներ չեք և ձեր բաճկոնին  
չեք կրում միսիոներական  
կրծքանշան, այժմ է ժա-  
մանակը, որ գրեք մեկը ձեր  
սրտին, գրեք, ինչպես Պողոսն  
է ասում, «ոչ թե թանաքով, այլ  
կենդանի Աստուծոյ Հոգովը»»:

Երեց Նիլ Լ. Անդերսեն, Տասներկու  
Առաքյալների Քվորումից, «Մա հրաշք  
է», *Լիսինսա*, մայիս 2013, 78:



ՏՊԱՆԱԿՈՒՄ ԵՆԵՐԵՐԻ ՊԱՏՄԱԹՅՈՒՆԸ

Լամանացիները կծաղկեն ինչպես վարդը, *Ջոզեֆ* լիտո Հետոս Աբելիդո Գարսիա: Այս պատկերը նկարագրում է միսիոներական աշխատանքի հոգին խապաներեն խոսող մարդկանց մեջ: Երկու միսիոներներ պատրաստվում են ավետարանը բարոգելուն, մինչև մարդիկ զբաղված են իրենց ամենօրյա գործերով: Լիսա Պերու Տաճարը, որը գտնվում է փոքր տների արանքում և շրջապատված է տեղի կենդանիներով, ներկայացնում է Եկեղեցու աճը:



Չիուսահատվող միսիոներները, *Ջուի Բնգ Չեն*: Եկեղեցու անդամները Տայվանում, ինչպես ամբողջ միսիոներներն ամենուր, փորձում են կիսվել ավետարանում և սուրբ գրություններում գտած իրենց ուրախությամբ: Մեղանկին դրված են սուրբ գրությունները և բարձր կապույտ բեռնարկի վրա ցուցադրված է Տայվայ Տայվան տաճարը:



ՏՊԱՆԱԿՈՒՄ ԵՆԵՐԵՐԻ ՊԱՏՄԱԹՅՈՒՆԸ

Վերջին Օրերի Սրբերի միսիոներները Սիերա Լեոնում, *Էմիլի Վիլսոն*: Առաջին միսիան Սիերա Լեոնում կազմավորվել էր Ֆրիթատում 2007թ. հուլիսի 1-ին: 2012թ. դեկտեմբերի 2-ին Ֆրիթատումը դարձավ Եկեղեցու 3000-րդ զիջը:



Երեց Էդուարդո Գավարեո  
Յոթանասունից

# ՊԱՏՐԱՍ ԼԻՆԵԼ

## ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻ ՕՐԿԱՆ

*Եկեք մեր հույսը դնենք Փրկչի՝ Չորաց Տիրոջ  
վրա, և պատրաստ լինենք ու չապաքենք  
ճակատամարտի դաշտում:*

**1485**թ.-ին Անգլիայի գահին էր Ռիչարդ III-ը: Անկայուն ժամանակներ էին, և Ռիչարդը ստիպված էր պաշտպանել իր թագն ավելի քան մեկ անգամ: Սակայն նա փորձառու զինվորական, համարձակ ու խելամիտ մարտիկ էր, որը 8000-10000-անոց բանակ էր գլխավորում:

Այդ նույն տարին, անգլիական գահին հավակնող Ռիչմոնդի Կոմս Հենրի Տյուդորը մարտահրավեր նետեց և ճակատամարտեց Ռիչարդի դեմ այն վայրում, որի անունը կրեց այդ ճակատամարտը՝ Բոսվորթի դաշտ: Ի տարբերություն Ռիչարդի, Հենրին մարտական փորձ չուներ, և նրա բանակը կազմված էր թվով 5000 հոգուց: Սակայն իր կողքին նա ուներ ազնվական լավ խորհրդատուներ, ովքեր մասնակցել էին նմանատիպ ճակատամարտերի, որոնցից մի քանիսը մղվել էին Ռիչարդի դեմ: Ճակատամարտի առավոտյան ամեն ինչը հուշում էր, որ հաղթելու էր Ռիչարդը:

Մի հայտնի լեգենդ պատմում է 1485թ. օգոստոսի 22-ի իրադարձությունները: Այդ առավոտ Ռիչարդ թագավորը և նրա մարդիկ պատրաստվում էին ճակատամարտել Հենրիի բանակի դեմ: Ճակատամարտի հաղթողը պետք է հռչակվեր Անգլիայի կառավարիչ: Ճակատամարտից առաջ Ռիչարդն ուղարկեց ձիապանին ստուգելու՝ արդյոք իր սիրելի ձին պատրաստ է:







«Արագ ձին պայտիր,- հրամայեց ձիապանը դարբնին,- թագավորն ուզում է գլխավորել իր զորքերը»:

Դարբինն ասաց, որ իրեն ժամանակ է հարկավոր: «Այս վերջին օրերին պայտել եմ թագավորի ողջ բանակի ձիերին, այժմ պետք է գնամ և երկաթ հայթիայթեմ»:

Անհամբեր ձիապանն ասաց, որ չի կարող սպասել: «Թագավորի թշնամիները առաջանում են, և մենք պետք է դիմավորենք նրանց մարտի դաշտում: Օգտագործիր քո մոտ եղածը»:

Ինչպես հրամայվել էր, դարբինը մի կտոր երկաթից չորս պայտ ձուլեց: Պայտերը պատրաստելուց հետո նա գամեց երեք պայտերը, իսկ չորրորդ պայտը գամելու համար մեխերը չբավականացրեցին:

«Ինձ հարկավոր է մեկ կամ երկու մեխ ևս և մի փոքր ժամանակ էլ՝ չորրորդ պայտը գամելու համար», - ասաց նա ձիապանին:

Մակայն ձիապանն այլևս չէր կարող սպասել: «Ես լսում եմ փողերի ձայնը, չե՞ս կարող արդյոք օգտագործել ձեռքիդ տակ ունեցածդ»:

Դարբինն ասաց, որ կանի հնարավորինս ամեն ինչ, սակայն վստահ չէ, որ չորրորդ պայտն ամուր կլինի:


«Ուղղակի գամիր այն,- հրամայեց ձիապանը,- և արագացրու, քանի դեռ Ռիչարդը թագավորը երկուսիս վրա էլ չի գայրացել»:

Շուտով ճակատամարտը սկսվեց: Իր զինվորներին համախմբելու համար Ռիչարդը ձիով անցնում էր դաշտի ողջ երկայնքով և կոչ անում նրանց՝ «Հառա՛ջ, հառա՛ջ»:

Ինչևէ, երբ Ռիչարդը նայեց դաշտին, տեսավ, որ իր ռազմիկների մի մասը ետ էին մնում: Վախենալով, որ իր մյուս զինվորները ևս կսկսեն նահանջել, նա ձիով արագ մոտեցավ կտրված գծին, որպեսզի նրանց առաջ մղի: Մակայն Ռիչարդը դեռ չէր հասել նրանց, երբ իր ձին սայթաքեց և ընկավ՝ վայր գցելով թագավորին: Երբ թագավորը սրընթաց առաջ մղվեց, այդ հուսահատ պահին, դուրս թռավ ձիու պայտերից մեկը, ինչից էլ զգուշացնում էր դարբինը:

Ռիչարդն արագ ոտքի կանգեց, թամբեց ձին և առաջ սլացավ: Երբ Հենրիի բանակը հարձակման անցավ, սուրն օղի մեջ ճոճելով Ռիչարդը բղավում էր. «Ձի, ձի, թագավորությունս տալիս եմ ձիու դիմաց»:

Մակայն շատ ուշ էր: Այդ ժամանակ Հենրիի բանակն առաջանում էր, իսկ Ռիչարդի զինվորները սարսափած



## ՀԻՇԵՔ ՓՈՔԻ ԲԱՆԵՐԸ

«Եղեք հնազանդ մարգարեական ուսմունքներին, որոնց Քրիստոսը կուզենար որ հե-

տնեիք: Մի խաթարեք ձեր ապագա երջանկությունը՝ ավետարանի ողջամիտ սկզբունքները կիրառելու փոխարեն ընտրելով կարճ ուղին: Հիշեք՝ փոքր բաները հանգեցնում են մեծ բաների: Թվացյալ աննշան անգգուշությունները կամ անհոգությունը կարող են մեծ խնդիրների առաջ կանգնեցնել: Իսկ կարևորն այն է, որ պարզ, հետևողական, լավ սովորույթներն ուղղորդում են դեպի օրհնություններով լի կյանք»:

Երեց Ռիչարդ Գ. Սքոթ՝ Տասներկու Առաքյալների Զվորումից, «Որ խաղաղություն լինի տանը», *Լիաժողով*, մայիս 2013, 29:

փախուստի էին դիմել, և Ռիչարդը ճակատամարտը տանույ տվեց: Այդ ժամանակից ի վեր մարդիկ հետևյալ ասացվածքը հյուսեցին.

*Մեխի պատճառով պայտը պոկվեց,  
Պայտի պատճառով ձին տապալվեց,  
Չիու պատճառով մարտը տանույ տրվեց,  
Մարտի պատճառով թագավորությունը կորսվեց:  
Իսկ այդ ամենը՝ մեկ մեխի պատճառով:<sup>1</sup>*

### Ամրապնդենք մեր սկզբունքները

Խորհելով այս պատմության շուրջ, ես մտածում եմ, թե ինչպես եղավ, որ մի հասարակ բանի պատճառով, ինչպիսին թույլ ամրացված պայտն էր, նման իրադարձությունների շրջադարձ տեղի ունեցավ: Մենք կարող ենք մեխը համեմատել ավետարանի սկզբունքների հետ: Ավետարանի սկզբունքների և դրանց հետ կապված արժեքների և կիրառման բացակայության պատճառով մենք կարող ենք անօգնական մնալ գայթակղության և չարի դեմ մղվող մարտի դաշտում:

Ի՞նչ մենք չենք կատարում մեր կյանքում և ընտանիքներում: Արդյո՞ք անտեսում ենք անձնական կամ ընտանեկան աղոթքը: Ջանասիրաբար ուսումնասիրո՞ւմ ենք սուրբ գրությունները: Կանոնավոր անցկացնո՞ւմ ենք տնային երեկոներ: Վճարո՞ւմ ենք լրիվ տասանորդ: Ծառայո՞ւմ ենք մեր եղբայրներին և քույրերին: Պահո՞ւմ ենք Հանգստության օրը, տաճարային երկրպագությունը: Միրո՞ւմ ենք մեր մերձավորներին:

Յուրաքանչյուրս կարող ենք նայել մեր ներսը և պարզել, թե ինչն է պակասում մեր կյանքում,

որ սկզբունքը կամ գործը պետք է էլ ավելի *ամրացնենք* մեր կյանքում և մեր ընտանիքում: Պարզելուց հետո, մենք կարող ենք ջանասիրաբար և վճռականորեն *գամել մեխը*, –ավելի լիարժեք ապրելով այդ սկզբունքով և ավելի լավ պատրաստվելով և պատրաստելով մեր ընտանիքները՝ պաշտպանել ճշմարտությունը:

Վարդապետություն և Ուխտերում Տերը խորհուրդ է տալիս. «Վերցրեք փրկության սաղավարտն ու սուրն իմ Հոգու, որը ես կթափեմ ձեր վրա, և իմ խոսքը, որը ես հայտնում եմ ձեզ, և . . . հավատարիմ եղեք, մինչև ես գամ» (27.18):

Իր հավատարիմ ծառաներին Փրկիչը խոստացել է. «Նրանց ձեռքը պիտի լինի իմ ձեռքը, և ես կլինեմ նրանց վահանն ու նրանց ասպարը. և ես կգոտեպնդեմ նրանց մեջքը, և նրանք տղամարդու պես պիտի մարտնչեն ինձ համար. . . և իմ զայրույթի բոցով կպահպանեմ նրանց» (ՎՈւ 35.14):

Եկեք հիշենք, որ եթե անգամ «ձի է պատրաստվում պատերազմի օրուայ համար», ինչպես Առակացն է ասում՝ «փրկությունը Տերիցն է» (21.31): Եկեք հետևենք Մորոնիի հրավերին, որն է՝ «Եկե՛ք դեպի Քրիստոսը, և կատարելագործվե՛ք նրանում» (Մորոնի 10.32): Եվ եկեք, մեր վստահությունը դնելով Փրկչի՝ Ջորաջ Տիրոջ վրա, պատրաստվենք և չափազանց չարի առաջ ճակատամարտի դաշտում: ■

### ՀՂՈՒՍ

1. Stu “For Want of a Horseshoe Nail,” in William J. Bennett, ed., *The Book of Virtues: A Treasury of Great Moral Stories* (1993), 198–200:

# Արագացնել ՓՐԿՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

*Երբ մենք հրավիրում, սիրում և ծառայում ենք մյուսներին, մենք դառնում ենք Հիսուս Քրիստոսի ճշմարիտ աշակերտները և օգնում ենք արագացնել փրկության աշխատանքը:*

**Թ**եև մեծ ոգևորություն է տիրում նրա շուրջ, որ լիաժամկետ միսիոներները կարող են աշխատել առցանց և այցեր մատուցել հավաքատներում, այդ փոփոխությունները կազմում են փրկության աշխատանքի մեծ պատկերի միայն չնչին մասը: Շատ ավելի կարևոր է, թե ինչպես ենք մենք՝ անդամներս դառնում փրկության աշխատանքն արագացնելու մեծ պատկերի մասը: Մեզ չեն խնդրում ներգրավվել նոր ծրագրի մեջ: Մենք պարզապես խրախուսվում ենք լինելու Հիսուս Քրիստոսի ճշմարիտ աշակերտները: Մեր դերն է՝ ընկղմվել մեր շուրջը գտնվողներին սիրելու և ծառայելու մեջ՝ սփռվել կարիքի մեջ գտնվող մեր աշխատակցին, հրավիրել մեր ընկերներին մկրտության, օգնել տարեց հարևանին այգու գործերում, հրավիրել քիչ ակտիվ անդամին ճաշի կամ օգնել մերձավորին կատարել իր ընտանիքի պատմությունը: Սրանք բոլորը բնական, ուրախությամբ լի ճանապարհներ են, որոնցով կարելի է հրավիրել քիչ ակտիվ անդամներին և նրանց, ովքեր մեր հավատքից չեն, մեր կյանք և, հետևաբար, դեպի ավետարանի լույսը: Նրանց հետ ուրախ ժամանակ և մեր կյանքի սուրբ պահերն անցկացնելով, կարող է, իրականում, լինել առավել արդյունավետ եղանակը, որով բոլորս կարող ենք աշխատել Հիսուս Քրիստոսի «այգում» մարդկանց հոգիների փրկության համար» (Վևու 138.56):

## Ի՞նչ է փրկության աշխատանքը:

Փրկության աշխատանքը Երկնային Հոր աշխատանքն է՝ փրականացնել մարդու անմահությունն ու հավերժական կյանքը (Մովսես 1.39): Այս կարևոր աշխատանքը ներառում է անդամների միսիոներական աշխատանքը, նորադարձներին եկեղեցում պահելը, քիչ ակտիվ անդամներին ակտիվացնելը, տաճարային և ընտանիքի պատմության աշխատանքը և ավետարանի ուսուցումը:<sup>1</sup> Շատ հաճախ մենք կարծում ենք, թե ավետարանի այս ուղղությունները փոխկապակցված չեն: Մակայն *Փրկության աշխատանքը խորագրով ղեկավարների համաշխարհային հեռարձակման ժամանակ*, հունիսի 23-ին, 2013թ., Երեց Ռասսել Մ. Նելսոնը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, ուսուցանեց, որ «այդ աշխատանքը, իրոք, հնարավոր չէ մասնատել: Այդ ջանքերը առանձին չեն կարող լինել. դրանք փրկության աշխատանքի մասն են»:<sup>2</sup>

«Արագացնել փրկության աշխատանքը» արտահայտությունը հեռարձակմանը ուղեկցող վեբկայքի անվանումն է ([hasteningthework.lds.org](http://hasteningthework.lds.org)) և վերաբերում է Տիրոջ հետևյալ խոստմանը. «Ահա, ես կարագացնեմ իմ



ԱՄԵՐԻԿԱՆ ԼՈՅՏԵՐՆԵՐ



աշխատանքն իր ժամանակին» (ՎեՌու 88.73):

Քահանայության հիմնարար արարողությունները՝ մկրտությունը, հաստատումը, կարգումը քահանայությանը տղամարդկանց համար և տաճարային արարողությունները, ուղենիշեր են հանդիսանում դեպի մեր Երկնային Հայրը մեր վերադարձի ճանապարհին: Մասնակցելով փրկության աշխատանքին, մենք հետևում ենք և ոգեշնչում ենք մյուսներին հետևել այս ուխտյալ ճանապարհով:

### **Անդամները և միսիոներները աշխատում են միասին քահանայության բանալիների ներքո**

Ժամանակն եկել է, երբ պետք է վերակենտրոնանալ այն հիմնարար սկզբունքի վրա, որ Տիրոջ

Եկեղեցու անդամը լինելը նշանակում է լիովին ներգրավվել փրկության Նրա աշխատանքի մեջ: Ցցերի նախագահները և եպիսկոպոսները կրում են միսիոներական աշխատանքի քահանայության բանալիները Եկեղեցու իրենց միավորներում<sup>3</sup> և օգնում են անդամներին անել այն, ինչ անում են Քրիստոսի ճշմարիտ աշակերտները՝ կիսվել ավետարանը յույսով: Միսիաների նախագահները կրում են քահանայության բանալիներ, որոնք նրանց հնարավորություն են տալիս ղեկավարել իրենց միսիոներներին:<sup>4</sup> Լիաժամկետ միսիոներները ուսուցում են ստանում, որ ուսուցանեն նրանց, ովքեր պատրաստ են ընդունելու ավետարանը: Նրանք օգնում են անդամներին կատարել միսիոներական աշխատանք, ոչ թե՝ հակառակը:



Լիաժամկետ միսիոներները և անդամ միսիոներները, այդ առումով, գործընկերներ են, բերելով ավետարանը նրանց կյանքը, ում Տերը պատրաստել է այն ընդունելու համար:

Հեռարձակման ժամանակ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն ասաց. «Այժմ է ժամանակը, որպեսզի անդամներն ու միսիոներները համատեղ տքնեն Տիրոջ այգում՝ հոգիներ բերելով Նրա մոտ: Նա պատրաստել է միջոցներ մեզ համար, որպեսզի բազում եղանակներով կիսվենք ավետարանով: Իսկ եթե հավատքով կատարենք Իր աշխատանքը, Նա կաջակցի մեզ մեր ջանքերում»:<sup>5</sup>

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Նիլ Լ. Անդերսենը, խոսելով սիրո կարևորության մասին, ասել է. «Մենք գործում ենք միասին հավատքով և միասնականությամբ՝ հավատք, որ Տերը կառաջնորդի մեր քայլերը, և միասնականություն միմյանց և միսիոներների հետ, միշտ առաջանալով սիրով, որ ունենք Նրա նկատմամբ, միմյանց նկատմամբ և նրանց նկատմամբ, ում ծառայում ենք»:<sup>6</sup>

### **Ծխերի խորհուրդները ղեկավարում են, ծխերի միսիաների ղեկավարները համակարգում են**

Եպիսկոպոսի ղեկավարությամբ ծխի խորհուրդը նպաստում և աջակցում է ծխի անդամների ջանքերին և համակարգում է դրանք՝ պլանավորելով և ղեկավարելով փրկության աշխատանքը ծխում:<sup>7</sup>

Որպես ծխի խորհրդի անդամ, ծխի միսիայի ղեկավարը «համակարգում է ծխի ջանքերը՝ ուղղված գտնելուն, ուսուցանելուն և մկրտելուն հետաքրքրվողներին: Նա համակարգում է այս աշխատանքը լիաժամկետ միսիոներների հետ»:<sup>8</sup>

Խոսելով ծխերի միսիաների ղեկավարների հետ, Երեց Նելսոնն ասաց. «Օգնեք [միսիոներներին] լրացնել իրենց պայմանավորվածությունների տեսրերը իմաստալի հնարավորություններով և հանդիպումներով, որպեսզի նրանք ժամանակ չունենան թակելու դռները, որ գտնեն և ուսուցանեն մարդկանց: ... [Դուք] կապող օղակ եք միսիոներների, ծխի խորհրդի և ծխի անդամների միջև»:<sup>9</sup>



## Հաջողության իրական ցուցանիշը

Որպես Վերջին Օրերի Սրբեր մենք օրինված ենք ապրելու այս ժամանակներում, երբ Տերն արագացնում է Իր աշխատանքը: Քանի որ Աստված որոշակի նպատակ ունի, տեղավորելով մեզ Երկրի վրա այս ժամանակ, մենք ունակություն ունենք անելու ավելին, քան կարծում ենք, թե կարող ենք: Եթե մենք բարությամբ և սիրով հասնենք նրանց, ովքեր մեր ընկերության և օգնության կարիքն ունեն, մենք չենք տապալի մեր աշխատանքը: Միսիոներական հաջողությունը կախված է ոգեշնչմանը հետևելուց, որը ներթափանցում է մեր միտքը և սիրտը և պարզապես հրավիրում մյուսներին մեր ավետարանականությունը կյանքը: Հաջողության ցուցանիշը հրավերն է, ոչ թե այն, որ մարդիկ մկրտվում են կամ ակտիվ դառնում Եկեղեցում: Ինչպես ասել է Երեց Զեֆրի Ռ. Հոլլանդը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, այսօր միսիոներների մի մեծ բանակ մուտք է գործում միսիայի դաշտ. «Մա այն ժամն է, երբ մենք պետք է ասենք. «Ահա՛, ես»: Բոլորս պետք է ծրագրենք և օգտագործենք այս երկնային միջոցը հնարավորինս արդյունավետ ձևով»:<sup>10</sup>

Ժամանակն է, որ յուրաքանչյուրս ավելի հստակ հասկանա իրր դերը փրկության աշխատանքն արագացնելու գործընթացում: Կատարելով անդամների միսիոներական աշխատանք, նորադարձներին պահելով և ակտիվացնելով քիչ-ակտիվ անդամներին, կատարելով տաճարային և ընտանիքի պատմության աշխատանք և ուսուցանելով ավետարանը որպես մեր կյանքի բնականոն մաս, մենք կունենանք մեծ ուրախություն և կշնորհվենք հոգևոր պարգևներով, որոնք հարկավոր են մեզ, որպեսզի ամրացնենք Եկեղեցին 21-րդ դարում: ■


### ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես *Handbook 2: Administering the Church* (2010), գլուխ 5:
2. Ռասսել Մ. Նելսոն, *Փրկության աշխատանքը. Ղեկավարների համաշխարհային հեռարձակում*, 23 հունիսի, 2013, [hasteningthework.lds.org](http://hasteningthework.lds.org):
3. Տես *Ձեռնարկ 2*, 5.1.6; 5.1.9:
4. Տես *Ձեռնարկ 2*, 5.1.6:
5. Թոմաս Ս. Մոնսոն, *Փրկության աշխատանքը*, [hasteningthework.lds.org](http://hasteningthework.lds.org):
6. Նիլ Լ. Մնդերսեն, *Փրկության աշխատանքը*, [hasteningthework.lds.org](http://hasteningthework.lds.org):
7. Տես *Ձեռնարկ 2*, 5.1.2:
8. *Ձեռնարկ 2*, 5.1.3:
9. Ռասսել Մ. Նելսոն, *Փրկության աշխատանքը*, [hasteningthework.lds.org](http://hasteningthework.lds.org):
10. Զեֆրի Ռ. Հոլլանդ, *Փրկության աշխատանքը*, [hasteningthework.lds.org](http://hasteningthework.lds.org):

**Փրկության աշխատանքը. ղեկավարների համաշխարհային հեռարձակում** տեսակրթությամբ 26 լեզուներով կարող եք գտնել, այցելելով [hasteningthework.lds.org](http://hasteningthework.lds.org): Արխիվացված հեռարձակումը 59 լեզուներով կարող եք գտնել [lds.org/broadcasts](http://lds.org/broadcasts) կայքում: *Ձեռնարկ 2. Եկեղեցում սպասավորելը* կարելի է գտնել 29 լեզուներով [lds.org/manual/handbook](http://lds.org/manual/handbook) կայքում:



*Ռոջեր Ռանդ-  
րիանարիսոնի  
համար սկսվեց  
աշակերտի  
ուղին, երբ  
միսիոներները  
ստացին նրա  
մեքենան:*



# ԴԱՌՆԱԼ Խաղաղության մարդ

*Տաճարը, միսիաները և  
ծառայությունը օգնեցին  
Ռոջերին և նրա ընտանի-  
քին առաջ գնալ՝ դառնալով  
հավերժական ընտանիք:*

**Մեթյու Դ. Ֆլիթոն**

Եկեղեցու ամսագրեր

**Ռ**ոջեր Ռանդրիանարիսոնը գիտեր, որ իր ընտանեկան կյանքում ինչ-որ բան պակասում էր:

«Ես աղոթում էի Աստծուն, որպեսզի օգներ ինձ գտնել այն, ինչը կօգներ առաջնորդել իմ ընտանիքը, - ասել է նա: - Ես ցանկացել եմ առաջնորդել իմ ընտանիքը ինչ-որ լավ ձևով, տանելով ճիշտ ուղով»:

Նա մտածում էր, թե ինչպես պետք է մեծացներ իր երեք երեխաներին, որդիներին՝ Ռանդրիանանդրիին և Մեդինիդինային, և դստերը՝ Նիրինային: Նա մտահոգվում էր, որ իր բռնկուն բնավորության պատճառով խնդիրներ էին ծագել իր ընտանիքում: Նա ցանկանում էր լինել բարի ծնող:

«Ռոջեցի, որ ես պետք է փոխվեմ, քանի որ տեսնում էի, թե ինչպիսին եմ դարձել», - ասել է նա:

Մի քանի տարի առաջ Ռոջերը կորցրել էր իր շինարարական բիզնեսը և աշխատում էր որպես տաքսու վարորդ Անտանանարիվոյում, Մադագասկար: Մի օր իր մեքենան նստեցին երկու քույր միսիոներներ:

«Նստելով մեքենան, նրանք անմիջապես հարցրեցին իմ անունը և հետաքրքրվեցին, թե արդյոք ընտանիք ունեմ, - պատմում է նա: - Նրանք հարցրեցին, թե արդյոք գիտեմ Աստծո մասին և աղոթում եմ Նրան»:

Ճանապարհին միսիոներները երգեր երգեցին Ռոջերի հետ և նրան հրավիրեցին եկեղեցի: Նա մի քանի անգամ փորձեց գնալ, սակայն չէր կարողանում աշխատանքային ժամերը հարմարեցնել ժողովների հետ և կորցրեց կապը միսիոներների հետ:

Հինգ ամիս անց մի օր Ռոջերն աշխատում էր տանը, երբ լսեց երկու միսիոներներ զրուցում են ինչ-որ մեկի հետ իր ցանկապատից այն կողմ: Ռոջերը գիտեր, որ նրանք կմոտենան և կխոսեն իր հետ: Նա զգաց, որ պետք է դրական պատասխան տար իրեն ուղղված բոլոր հարցերին:



**Ընտանիքով ավետարանն ուսումնասիրելն օգնել է Ռանդրիանարիսոնների ընտանիքին էլ ավելի մտերմանալ:**

Ներկայանալուց հետո միսիոներները հարցրեցին նրան, թե արդյոք նա գիտեր Աստծո մասին: Պատասխանն էր՝ այո: Արդյոք ցանկանո՞ւմ է աղոթել Աստծուն: Այո: Արդյո՞ք ցանկանում է զրուցել միսիոներների հետ: Այո: Ե՞րբ: Այժմ: Միսիոներները խոստացան վերադառնալ 20 րոպեից: Նրանք վերադարձան, իրենց հետ բերելով մոտակայքում ապրող մի անդամի:

Մոտ մեկ ամիս նրանք ուսուցանում էին Ռոջերին իր տանը: Եկեղեցու մասին լսելով, իր ընտանիքի մյուս անդամները չցանկացան ուսուցանվել միսիոներների կողմից: Մեկ ամիս ավետարանի մասին սովորելուց հետո, Ռոջերը միսիոներների հետ գնաց Եկեղեցի: Բարյացակամ ընդունելությունը նրա վրա լավ տպավորություն թողեց: «Անդամները ընդունեցին ինձ այնպես, կարծես երկար ժամանակ ճանաչում էին ինձ», - ասում է նա:

Ռոջերը եկեղեցուց տուն վերադառնալով, ասաց իր ընտանիքին, որ պատրաստվում է մեկ ամսից մկրտվել, և նրանք ցանկության դեպքում կարող էին միանալ Եկեղեցուն: Ընտանիքի անդամները խնդրեցին նրան սպասել, մինչև կկարողանային միանալ իրեն: Նրանք սկսեցին հաճախել ժողովներին և նույնպես հաճելիորեն տպավորված էին:

Առաջին անգամ Եկեղեցու ժողովներին ներկա լինելը տևական տպավորություն թողեց Ռոջերի ավագ որդու՝ Ռանդրիանանդրիի վրա: «Առաջին անգամ գալով եկեղեցի, զարմացած էի, թե որքան խոնարհ էին մարդիկ, - ասաց նա: - Նախ նրանք եկեղեցուն հարիր հագնված

էին: Ապա նկատեցի, որ նրանք եկել էին նպատակով, ոչ թե մարդկանց մոտ իրենց ցուցադրելու»:

Ռանդրիանարիսոնները մկրտվեցին որպես ընտանիք 2003թ. փետրվարի 20-ին: Այդ ժամանակ Նիրինան 8 տարեկան էր, Սեդին իրինան՝ 17, իսկ Ռանդրիանանդրին՝ 19: Ընտանիքն այլևս չէր աշխատում կիրակի օրերին և առաջնահերթություն դարձրեց ավետարանով ապրելը:

### **Փոփոխություններ**

«Մկրտվելուց հետո ես շատ փոփոխություններ տեսա մեր տանը, - ասում է Ռոջերի կինը՝ Արելինան: «Այն դարձավ հոգևոր տուն, և աշխարհիկ ու հոգևոր բազում օրինություններ եկան ավետարանով ապրելու արդյունքում»:

Աշխարհիկ տեսակետից, Ռոջերը երախտապարտ է Երկնային Հորը, որն օգնեց իրեն վերսկսել իր բիզնեսը: Երկու տարի տաքսի վարելուց և ընտանիքը պահելու համար ձեռքից եկածն անելուց հետո նա սկսեց շինարարական պայմանագրեր կնքել: «Ես հավատում եմ, որ Աստված միշտ օրհնում է ինձ, երբ որոշում եմ հետևել Իրեն», - ասում է նա:

Բայց նրա որդիներն ասում են, որ մեծագույն փոփոխությունը տեսել են իրենց հոր խառնվածքում: Այժմ նրան նկարագրում են որպես խոնարհության և բարության օրինակ: Ռոջերն ասում է, որ ավետարանը համոզել է իրեն, որ պետք է փոխվի: Սկսելով ուսումնասիրել այն, Ռոջերը փորձել է համալրել իր կյանքը լավ բաներով:

«Ավետարանի ուսմունքների շնորհիվ ես երբեք ավերիցս դուրս չեմ գալիս, - ասում է նա: - Երբեմն սաղարանքներ լինում են, բայց ավետարանն իմ սրտում է, իմ գլխում և իմ հոգում: Այն օգնում է ինձ հանդարտ մնալ»:

Անհանգիստ պահերին Ռոջերը հանգստացնում է ընտանիքի անդամներին և հիշեցնում նրանց, որ պետք է Փրկչի օրինակին հետևել:

«Հայրս դարձել է խոնարհ և այժմ սիրով հոգ է տանում մեր ընտանիքի համար,- ասել է Սեդինիքինան: ,- Տեսնելով փոփոխություն նրա մեջ, ես այնքան երախտապարտ եմ Երկնային Հոր, ավետարանի և Եկեղեցու անդամ լինելու համար»:

### Հավերժական ընտանիք

2006թ. Տաճարի Այցելուների Օժանդակության Ընդհանուր Հիմնադրամի աջակցությամբ Ռոջերը և Արելինան գնացին Յոհաննեսբուրգ, Հարավային Աֆրիկա, տաճարում կնքվելու:

2009-2011թթ. Սեդինիքինան և Ռանդրիանանդրին միասին են ծառայել Հարավային Աֆրիկայում՝ Սեդինիքինան Քեյփ Թաունում, Ռանդրիանանդրին՝ Յոհաննեսբուրգում: Նրանց համար ծառայելու գրավական է հանդիսացել նաև այն, որ իրենք ցանկանում էին օգնել մյուս ընտանիքներին փոխվել, ճիշտ ինչպես փոխվեց իրենց ընտանիքը:

«Այսպիսի հրաշք կարող է կատարվել, և այն կատարվեց, որովհետև միախոնքները եկան մեր տուն, - ասում է Ռանդրիանանդրին: - Եվ ես ցանկանում եմ նույնն անել մեկ ուրիշ ընտանիքի համար»:

Այդ որոշումը մեկ այլ օրհնություն բերեց Ռանդրիանարիստների ընտանիք: Ինը օր Սեդինիքինան և Ռանդրիանանդրին պետք է անցկացեին Յոհաննեսբուրգի Միախոնքների Ուսուցման Կենտրոնում: Ռոջերը պատրաստվում էր Արելինայի և իրենց դստեր՝ Նիրինայի հետ թոչնէլ Հարավային Աֆրիկա, որպեսզի ողջ ընտանիքը կնքվեր տաճարում: Նիրինան, որն այդ ժամանակ 14 տարեկան էր, ասում է, որ դժվարանում է նկարագրել այդ փորձառությունը և իր զգացողությունը:

«Դա գորացրեց իմ հավատքը և օգնեց ինձ ավելի մոտ զգալ Աստծուն», - ասում է նա:

Այսօր ընտանիքի անդամներն աշխատում են շենացնել և ամրացնել իրենց շրջապատի մարդկանց: Ռոջերը ծառայում է որպես իր ծխի եպիսկոպոս: Արելինան աշխատում է Երեխաների Խմբում Հավատք առ Աստված ծրագրով: Սեդինիքինան ցգի գործավարի օգնականն է: Ռանդրիանանդրին ծխի գործավարի օգնականն է: Նիրինան ծխի երաժշտական խմբավարն է:

Ավետարանը եղել է աղոթքների պատասխանը Ռանդրիանարիստների տանը: Այն ամոքել է հին վերքերը, նրանց ավելի մտերմացրել է և հավերժ միասին լինելու հնարավորություն է ընձեռնել: Այն սովորեցրել է Ռոջերին սիրել: «Ընտանեկան կյանքը սիրով լի կյանք է», - ասում է նա: ■

**Ճամփորդելով Հարավային Աֆրիկա և կնքվելով Յոհաննեսբուրգի տաճարում, Ռանդրիանարիստներն ամրացրեցին իրենց ընտանիքը:**



### ՏԱՃԱՐԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՖՈՆԴ

«Դեռ կան տարածքներ, որտեղ տաճարները շատ հեռու են և անդամները չեն կարող իրենց թույլ տալ այդ ճանապարհորդությունը: Այդպիսով, նրանք չեն կարողանում ճաշակել տաճարների սուրբ և հավերժական օրհնությունները: Այդ հարցում օգնելու համար մենք ունենք մի ծրագիր, որը կոչվում է Տաճարների այցելուների օժանդակության ֆոնդ: Այդ ֆոնդը ֆինանսավորում է նրանց մեկնագամյա այցը տաճար, ովքեր այլապես չեն կարող գնալ, սակայն խորապես ցանկանում են: Բոլոր նրանք, ովքեր կցանկանան ներդրում կատարել այդ ֆոնդին, կարող են գրել տեղեկությունը նվիրատվությունների սովորական թերթիկի վրա, որը տրվում է եպիսկոպոսին ամեն ամիս»:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն, «Մինչև նոր հանդիպում», *Հիստորիա*, նոյ. 2011, 5:

## ԿԿԵՐԱԴԱՌՆԱ՞ ԱՐԴՅՈՔ ՄԵԹՅՈՒՆ

Մեր ծխում երիտասարդ տղամարդկանց մի ամրակուռ խումբ ունեինք, սակայն մեր որդի Մեթյուն մտերիվ էր մի ոչ անդամի հետ, ով ևս մեծ սեր էր տաժում մեքենաների և ամեն տեսակի մեխանիկական սարքերի հանդեպ: Ցավոք, այդ երիտասարդը դուրս էր եկել մի ընտանիքից, որտեղ չէին գնահատում կրոնը: Նրա ծնողները թույլ էին տալիս իրենց տանը խմել ալկոհոլ և ծխել, և չէին համարում, որ բարոյապես մաքուր լինելը կարևոր էր:

Մեթյուն սկաուտական շարժման մեջ առաջին տեղն էր գրավել, սակայն մրցանակաբաշխությանը չէր մասնացել, քանի որ դադարել էր ապրել սկաուտական չափանիշներով: Ես հավաքեցի նրա բոլոր սկաուտական պարգևները և տեղադրեցի ցուցատախտակի վրա: Այնուհետև պահեցի այն, հույս տաժելով, որ մի օր նա կգնահատի դա: 16 տարեկանում նա ծխում էր, խմում էր և թմրանյութ էր գործածում: Նա դուրս էր մնացել դպրոցից

և իր ընկերուհու հետ առանձին էր ապրում: Այդ տարիներին նրան հազվադեպ էինք տեսնում:

Մենք հուսահատված էինք: Չգիտեինք, արդյոք երբևէ նա կվերադառնար իր ընտանիքի մոտ և իր հավատքին, սակայն որոշեցինք հետևել իր կամակոր տղայի հետ պայքարող Ալմայի օրինակին: Ալման շարունակում էր սիրել իր որդուն և հավատքով աղոթում էր, որ նա «բերվեր ճշմարտության գիտելիքին» (Մոսիա 27.14):

Մենք մշտապես աղոթում էինք, որ Տերը միջամտեր Մեթյունի կյանքին, և մենք առիթը բաց չէինք թողնում, որ խոսքով և գործով դրսևորեինք մեր սերը նրա հանդեպ: Երբ նա տուն էր գալիս, մենք չէինք ասում այն, ինչը նա կհամարեր քննադատություն կամ դատապարտում, պարզապես ուրախանում էինք իրեն տեսնելու համար:

Մի օր Մեթյուն տուն եկավ և ասաց, որ ցանկանում է խոսել: Նա ասաց, որ մի երեկույթի ժամանակ

հանդիպել էր մի աղջկա, որը հարցեր էր տվել Եկեղեցու վերաբերյալ: Չէր հասցրել ասել, որ ինքն այլևս չգիտի այդ հարցերի պատասխանները, բառերը սկսել էին դուրս գալ իր բերանից: Նա անմիջապես պատասխանել էր այդ աղջկա հարցերին: Մեթյուն ասաց, որ չէր հիշում, որ նման բաներ էր սովորել, սակայն գիտեր, որ այդ խոսքերը ճշմարիտ էին: Նա զարմացել էր, թե ինչու էր նման կյանքով ապրում, երբ դեռևս հավատում էր ավետարանին:

Երեք օր իր հոգին պրպտելուց հետո նա որոշել էր թողնել այն կյանքը, որով ապրում էր: Նա եկել էր տուն և օգնություն խնդրել նոր կյանք սկսելու համար:

Մեթյուն զանգահարեց մյուս նահանգում ապրող իր զարմիկին, որը նման դժվարությունների միջով էր անցել և խնդրեց, որ նրա մոտ ապրեր: Զարմիկը համաձայնել էր, և Մեթյուն սկսել էր նրա հետ Եկեղեցի հաճախել և հանդիպել եպիսկոպոսին, ով օգնում էր նրան անցնել ապաշխարության գործընթացով: Նա զգաց սեր և աջակցություն և ակտիվ դարձավ Եկեղեցում:

Ժամանակի ընթացքում նա հանդիպեց մի հրաշալի, արդարապես երիտասարդ աղջկա: Նրանք սիրահարվեցին և ամուսնացան տաճարում:

Երբ նրանց առաջնեկը ծնվեց, ես այցելեցի նրանց իմ հետ տանելով սկաուտական պարգևներով ցուցատախտակը: Նա ոգևորվեց և հպարտորեն կախեց այն իրենց տան աչքի ընկնող տեղում:

Մեր որդուն հրեշտակ չերևաց, ինչպես Ալմա Կրտսերին: Մակայն դեպի ճշմարտություն Մեթյունի վերադարձը նույնքան արտառոց էր: ■  
ԱՆՆԱՆՈՆ



Ես հավաքեցի Մեթյունի բոլոր սկաուտական պարգևները և տեղադրեցի ցուցատախտակի վրա: Այնուհետև պահեցի այն, հույս տաժելով, որ մի օր նա կգնահատի դա:

# ԵՍ ՏԱՆՆ ԷԻ

Մի ծառայության ծրագրի շրջանակներում բժիշկների խմբի հետ մեկնեցի Ռուանդա՝ բժշկական օգնություն տրամադրելու նպատակով: Երկու շաբաթ անց, իմ ճամփորդության ավարտին մոտ, տան կարոտը սկսեց տանջել ինձ: Կարոտել էի ընտանիքիս, իմ հարմարավետ անկողինը և իմ տունը:

Գործերս այնպես դասավորեցի, որպեսզի Աֆրիկայում անցկացրած իմ վերջին կիրակի օրն այցելելի եկեղեցի: Թեպետ Եկեղեցին դեռևս պաշտոնապես չէր ճանաչվել Ռուանդայում, ես կարողացա Եկեղեցու կայքէջում գտնել հավաքի ժամը և վայրը:

Այսպես էր նկարագրվում, թե ինչպես կարելի է գտնել այդ վայրը. «Քայլեր ներքև սալաքար ճանապարհով և անցեք Նախարարության շենքը: Այնտեղ կտեսնեք բաց դարբաս, ապա իջեք աստիճաններով ներքև»:

Այդ ցուցումներին հետևելով, գնացի և հեռվից լսեցի ծանոթ օրհներգի հնչյունները: Իջա աստիճաններով և ականջներիս հասան «Որքան ամուր է հիմքը» (*Hymns*, no. 85) օրհներգի խոսքերը: Աստիճանները տարան դեպի փոքր շենքը, որտեղ ժպտացող դեմքով տասնյակ մարդիկ էին հավաքվել մուտքի մոտ: Չնայած այն հանգամանքին, որ

ես օտար մարդ էի, այդ մարդկանց մեջ անմիջապես հարազատություն զգացի: Տասնյակ ռուանդացի եղբայրներ և քույրեր մոտեցան, որպեսզի ձեռքս սեղմեն, և այդ պահին ինձ ճնշող միայնակության բեռը վերցվեց իմ վրայից՝ ես տանն էի:

Մտնելով շենք, ես մասնակցեցի երեք ժամանոց ժողովին, որը չէր տարբերվում Կալիֆոռնիայում իմ հայրենի ծխում տեղի ունեցող ժողովից: Ահարոնյան Քահանայություն

Չնայած այն հանգամանքին, որ ես օտար մարդ էի, այդ մարդկանց մեջ անմիջապես հարազատություն զգացի: Տասնյակ ռուանդացի եղբայրներ և քույրեր մոտեցան, որպեսզի ձեռքս սեղմենուր:

կրողները բաժանեցին հաղորդությունը, ելույթները կենտրոնացած էին Փրկչի վրա, և անգամ Կիրակնօրյա Դպրոցի դասն այն նույն դասն էր, որն ուսուցանվում էր իմ ծխում այդ կիրակի:

Ամենակարևորն այն էր, որ Տիրոջ Հոգին ներկա էր այդ ծառայություններին: Իրոք որ, Տերը բարեհաճ ժպտում էր այդ լավ մարդկանց, ովքեր փորձում էին հնարավորինս լավ ծառայել Իրեն: Ես իմացա, որ նախորդ տարի ընդամենը մի քանի ռուանդացիներ են մասնացել ծառայություններին այստեղ: Սակայն ես հաշվեցի ավելի քան 100 հոգի, որոնցից կեսը ժպտացող երեխաներ էին:

Այժմ, երբ Ռուանդան բաց է միսիոներական աշխատանքի համար, ես կարծում եմ, որ միսիոներները մեծ հաջողություն կունենան, քանի որ Հոգին վկայում է Ռուանդայում ավելացող հետաքրքրվողներին, որ վերականգնված Եկեղեցին Աստծո արքայությունն է ողջ երկրի՝ յուրաքանչյուր մայրցամաքի, յուրաքանչյուր ժողովրդի և Աստծո յուրաքանչյուր զավակի համար: Որքան երախտապարտ եմ ես Եկեղեցու համար, լինի այն Կալիֆոռնիայի կենտրոնական ծովափում, թե՛ կենտրոնական Աֆրիկայի սալաքար ճանապարհի վերջում: ■

Սթիվեն Սեյնսբերի, Կալիֆոռնիա, ԱՄՆ



# Ի՞ՆՉՆ Է ԲԵՐԵԼ ՁԵՋ ՌԵՔՍԲՈՒՐԳ

Տասնամյակներ շարունակ ապրելով այնպիսի տեղում, որտեղ եկեղեցու անդամները փոքրամասնություն էին կազմում, ես և ամուսինս տեղափոխվեցինք Ռեքսբուրգ, Այդահո, ՄՄՆ, այնպիսի թաղամաս, որտեղ միայն երկու ընտանիքներ անդամներ չէին: Մեր բախտը բերեց, որ մենք ապրում էինք նրանցից մեկի կողքին:

Ընտանիքի հայրը կտրում էր իրենց խոտածածկը, երբ մենք մեքենայով մոտեցանք մեր տանը: Ես և ամուսինս մեր խոտածածկի վրայով անցնելով մոտեցանք, որպեսզի ծանոթանայինք: Ձեռքս մեկնելով, ես հարցրեցի. «Ի՞նչն է բերել ձեր ընտանիքը Ռեքսբուրգ»:

Նա պատասխանեց. «Իմ աշխատանքը, և մենք փնտրում էինք հատկապես այնպիսի քաղաք, որտեղ մարդիկ կարիք ունեին ծանոթանալու Քրիստոսի հետ»:

Կարծես դույլով սառը ջուրը լցրեցին գլխիս, բայց ես ժպտացի: Այդ պահին որոշեցի, որ ինչ էլ մեր

նոր հարևանն ասեր կամ աներ, մենք պետք է դառնայինք լավագույն հարևանները, որ երբևէ այդ ընտանիքն ունեցել էր: Մեր բոլոր փոխհարաբերություններում պետք է փորձեինք լինել բարի, սիրալիր և ողջամիտ, ինչպես Փրկիչը կլինեք:

Հաջորդող ութ տարիների ընթացքում մեր ընտանիքները շատ համատեղ միջոցառումների մասնակցեցին: Նրանց մայրը հրավիրվեց Սփոփող Միության միջոցառումներին: Նա ինձ և մեր Վերջին Օրերի շատ Սրբերի հրավիրեց Քրիստոնյա կանանց արշավին, որը հովանավորում էր իրենց եկեղեցին: Ամուսինս և ես հրավիրվեցինք իրենց երեխաների պարի և դաշնամուրի համերգներին: Նրանց ընտանիքը ընդգրկվեց մեր թաղամասի պիկնիկներին և երեկոյթներին: Նրանց երեխաները զանգահարում էին մեզ, երբ պետք էր նրանց աշխատանքից մեքենայով տուն բերել և երբ նրանք չէին

կարողանում կապ հաստատել իրենց ծնողների հետ:


Ծնողներն անհանգստանալով, որ իրենց երեխաները, գուցե, սկսեին շատ սիրել Վերջին Օրերի Սրբերին, թույլ չէին տալիս իրենց որդիներին մասնակցել մեր ծխի սկաուտական ծրագրին: Մակայն մեր տունը համարվում էր ապահով վայր, որտեղ նրանց երեխաները խաղում էին, երբ մեր թոռնիկները գալիս էին հյուր:

Ամեն անգամ, երբ մեր հարևանները փորձում էին օգնել մեզ տեսնել «մեր բռնած սխալ ուղին», մենք հիշեցնում էինք նրանց, որ մեծ հարգանք էինք տալիս իրենց համոզմունքների, ապրելակերպի և երեխաների դաստիարակության հանդեպ: Ապա ավելացնում էինք, որ ակնկալում ենք նույն հարգանքը մեր համոզմունքների հանդեպ, որոնք նույնպես կենտրոնացած էին Փրկչի ուսմունքների վրա:

Երբ մայրը փորձում էր մեր տարբերությունները ներկայացնել որպես խորը, անանցանելի անդունդ, պնդելով, որ Վերջին Օրերի Սրբերը հավատում են «այլ Հիսուսի», ես հիշեցնում էի նրան, որ երկուսս էլ հավատում ենք, որ Նա Աստծո աստվածային և սիրելի Որդին է: Ի վերջո, նա և ես վայելում էինք ջերմ ընկերական հարաբերություններ:

Նրանց ընտանիքը տեղափոխվեց այլ վայր՝ առանց միանալու եկեղեցուն: Մակայն եթե նրանք ասեն. «Մենք ապրել ենք Մորմոնների մեջ, և նրանք անկեղծ սրտով, լավ ու հարգալից մարդիկ են», այդ ժամանակ կզգամ, որ մեզ հաջողվել է լինել լավ հարևան, օգնելով նրանց դառնալ ավելի բաց և արդար Վերջին Օրերի Սրբերի իրենց գնահատականում: ■

Սանդրա Ռաշ, Այդահո, ՄՄՆ



Այդ պահին որոշեցի, որ ինչ էլ մեր նոր հարևանն ասեր կամ աներ, մենք պետք է դառնայինք լավագույն հարևանները, որ երբևէ այդ ընտանիքն ունեցել էր:

# ՆԿԱՐՆԵՐՈՎ ՏՈՒՓԸ

Մի քանի տարի առաջ ամուսնուս հետ դատարկում էինք աղբը տեղի աղբավայրում, երբ նկատեցի, որ այնտեղ աշխատող կանանցից մեկը, վերցնելով մի տուփ, պատրաստվում էր նետել վառարանի մեջ: Հանկարծ տուփը բացվեց և միջից լուսանկարներ թափվեցին:

Այդ պահին ուժեղ զգացողություն ունեցա, որ պետք է մոտենամ և վերցնեմ նկարներով տուփը: Արագ մեքենայից դուրս եկա և օգնեցի հավաքել լուսանկարները: Մենք երկուսս էլ զգացինք, որ լուսանկարները սխալմամբ են դեն նետվել, և ես նրան համոզեցի, որ թույլ տար վերցնելի դրանք և փորձելի գտնել տիրոջը:

Տուփի միջի հարյուրավոր լուսանկարների մեջ արագ նայելով, գտա մի ծրար, որը հասցեագրված էր ինչ-որ մեկին Վարբուրգում, Ալբերտա, Կանադա: Հաջորդող մի քանի տարվա ընթացքում ես մի քանի նամակ գրեցի նույն ազգանունով տարբեր մարդկանց, սակայն ոչ մի պատասխան չստացա:

Տանը համացանց ունենալուց հետո, ես պարզեցի, որ կար պատմական կազմակերպություն Վարբուրգում: Ես հարցում ուղարկեցի պարզելու համար, թե արդյոք այդ կազմակերպության աշխատողներից որևէ մեկին ծանոթ էին այն անունները, որոնք գրված էին լուսանկարների ետևում:

Մեկ ամիս անց մի տղամարդ զանգահարեց, որի հետ կապվել էր այդ կազմակերպությունը: Նա ասաց, որ իր քույրն էր ապրում մեզ մոտ, և հարցրեց, արդյոք կարող է նա տեսնել այդ լուսանկարները: Իհարկե, ասացինք՝ այո:

Հաջորդ օրը, Ֆլոյդ և Բեթ Հոթորները, երկուսն էլ Վերջին Օրերի Սրբեր, եկան տեսնելու

լուսանկարները: Երբ ես բացեցի տուփը, Եղբայր Հոթորն ասաց. «Միա՛, նա», - ցույց տալով առաջին լուսանկարը: Դա Քույր Հոթորնի պապիկի նկարն էր:

Նայելով նկարները Եղբայր և Քույր Հոթորները մեզ պատմություններ պատմեցին լուսանկարներում պատկերված մարդկանց մասին: Հոթորները համոզված էին, որ նկարները դեն նետած անձնավորությունը իրենց հետ կապ չուներ, և պատկերացում չունեին, թե ինչու

էին լուսանկարները հայտնվել աղբանոցում:

Ես հաստատ համոզված եմ, որ Երկնային Հայրն օգնեց ինձ վերադարձնել լուսանկարները Հոթորների ընտանիքին: Ես վկայում եմ, որ ընտանեկան պատմության աշխատանքն ամենակարևոր աշխատանքներից մեկն է, որ պետք է անել: Եթե ցանկանում ենք կատարել այդ աշխատանքը, Տերը կօգնի մեզ: ■

Սինդի Չեզի, Ալբերտա, Կանադա

Հանկարծ տուփը բացվեց և միջից լուսանկարներ թափվեցին: Այդ պահին ուժեղ զգացողություն ունեցա, որ պետք է մոտենամ և վերցնեմ նկարներով տուփը:



# Ինչպե՞ս կարող եմ ՀԱՋՈՂԱԿ ՄԻՍԻՈՆԵՐ լինել:

*Անկախ նրանից, թե որքան տքնաջան էինք աշխատում ես և զուգընկերս, բոլորը մերժում էին մեր ուղերձը: Բ՞նչ կարող էինք անել հաջողակ միսիոներներն էր դառնալու համար:*

## Լորեն Բենգերթեր Վալլո

Մեկ տարուց ավել էր, ինչ ես միսիայում էի, երբ հատկապես դժվար ժամանակներ սկսվեցին: Մռալ, խավար եղանակ էր, նոր էր ցուրտ ձմեռն անցել, գարուն էր սկսվում: Չնայած որ ես և զուգընկերս տքնաջան էինք աշխատում, ուս հետ փորձում էինք զրուցել, անմիջապես մերժում էր իմ ուղերձը: Երբ հանդիպեցինք այլ միսիոներների, իմացանք, որ իրենց աշխատանքը շատ լավ էր ընթանում: Չէի հասկանում, թե մենք ինչու էինք այդքան անհաջողակ: Ես արդեն բավականին լավ էի տիրապետում լեզվին, ես և զուգընկերս լավ ընկերներ էինք, մենք վստահություն էինք ձեռք բերել անդամների շրջանում, փորձում էինք հետևել Հոգուն և ճշգրտորեն հնազանդվել միսիայի կանոններին:

Չնայած այդ ամենին մենք ամեն քայլափոխի մերժվում էինք: Դա շարունակվեց մի քանի շաբաթ, և ինձ մոտ գործի հանդեպ սխալ մոտեցումը գլուխ բարձրացրեց: Մի անգամ, մեր ծրագրերը կազմելիս, ես չդիմացա և բացականչեցի. «Բ՞նչ իմաստ ունի: Միևնույն է ոչ ոք չի լսելու մեզ»: Զուգընկերս ավելի լավ հեռանկար ունենալով, պարզապես ասաց. «Մենք նպատակներ ենք

դնում՝ ցույց տալու մեր հավատքը: Մենք գնում ենք մեր նպատակներին ընդառաջ՝ հաշվելով մեր օրհնությունները»:

Խորհելով նրա ասածի շուրջ, ես հասկացա, որ սխալ եղանակ էի օգտագործում որպես միսիոներ իմ հաջողությունը չափելու համար: *Քարոզիկ իմ ավետարանը՝ միսիոներական ծառայության ուղեցույցը* հաջողակ միսիոներների վարքագծերի ցանկն է տալիս,<sup>1</sup> և ես հասկացա, որ միսիոները կարող է վերահսկել այդ բոլոր վարքագծերը: Ես չէի կարող վերահսկել այն, թե կրնդունեին արդյոք մարդիկ ավետարանի ուղերձը իմ միսիայի ժամանակ, սակայն ես կարող էի վերահսկել, թե ինչպիսի միսիոներ եմ ես ուզում լինել: Իմ զուգընկերը ցույց տվեց ինձ, որ առ Հիսուս Քրիստոս ավելի մեծ հավատքը և Նրա օրհնությունների հանդեպ երախտագիտությունը ինձ կօգնի հասկանալ, թե ինչ ուղիներով եմ ես արդեն հաջողակ միսիոներ:

## Հավատքը լուսավորում է հրաշքները

Ես խոնարհաբար գիտակցեցի, որ հավատքը պակասում էր: Ես

պրպտում էի իմ մեջ, փորձելով տեսնել, թե ինչպես կարող եմ ամրացնել հավատքս և գտա, որ երբ ամեն ինչ ըստ ծրագրածի չէր ընթանում, հուսահատվում էի: *Քարոզիկ իմ ավետարանը* ասում է. «Հուսահատությունը թուլացնում է հավատքը: Եթե նվազեցնես ակնկալիքներդ, արդյունավետությունդ կրնկնի, ցանկությունդ կթուլանա, և մեծ դժվարությամբ կհետևես Հոգուն»:<sup>2</sup> Ես հասկացա, որ թույլ էի տվել, որ մեր կրած անհաջողությունները թուլացնեին իմ հավատքը:

Ես սկսեցի՝ աղոթելով սրտի փոփոխության և ավելի շատ հավատքի համար: Նաև ապավինեցի Մորմոնի 9.21-ում տրված խոստմանը. «Ով ոչ մի բանի չկասկածելով հավատում է Քրիստոսին, ինչ-որ նա խնդրի Հորը Քրիստոսի անունով, դա կտրվի նրան. և այս խոստումը բոլորի համար է, նույնիսկ աշխարհի ծայրերի համար»: Այդ խոստումն օգնեց ինձ աղոթել ավելի ջերմեռանդ այն օրհնությունների և հրաշքների համար, որ անհրաժեշտ էին զուգընկերոջս և ինձ, միշտ ավելացնելով. «Քո կամքը լինի» խոսքերը: Այդ աղոթքներն օգնեցին



## ԻՆՉՊԵՍ ԴԱՌՆԱԼ ՀԱՋՈՂԱԿ ՄԻՍԻՈՆԵՐ

Դուք կարող եք իմանալ, որ  
հաջողակ միսիոներ եք, երբ՝

- Զգում եք, որ ձեր միջոցով  
Հոգին վկայում է մարդկանց:
- Սիրում եք մարդկանց և  
ցանկանում եք նրանց  
փրկությունը:
- Հնազանդվում եք անվարան:
- Զարգացնում եք Զրիստո-  
սանման հատկանիշներ:
- Մարդկանց զգուշացնում եք  
մեղքի հետևանքների մա-  
սին: Հրավիրում եք նրանց  
ստանձնել պարտավորու-  
թյուններ և պահել դրանք:
- Շրջում եք բարիք գործելով  
և ծառայելով մարդկանց,  
բաց չթողնելով ոչ մի առիթ,  
անկախ նրանից, ձեր ու-  
ղերձը կընդունեն, թե ոչ:

*Քարոզիչ Իմ Ավետարանը՝ միսիոներա-  
կան ծառայության ուղեցույց (2004), 10–11:*



### ՓՆՏՐԻՐ ՏԻՐՈՋ ՀԱՎԱՆՈՒ- ԹՅՈՒՆԸ

«Իմ ողջ սրտով  
հրավիրում եմ ձեզ  
փնտրել Տիրոջ  
հավանությունը և

վայելել Նրա խոստացված օրի-  
նությունները: . . . Մենք [կարող  
ենք] զգալ, որ ընդունվել ենք Նրա  
կողմից անկախ մեր զբաղեցրած  
պաշտոնից, կարգավիճակից  
կամ մահկանացու սահմանա-  
փակումներից: Նրա սիրալիր  
հավանությունը շարժառիթ  
կդառնա մեզ համար, կավելացնի  
մեր հավատքը և կօգնի կյանքում  
հաղթահարել ամեն ինչ: Չնայած  
դժվարություններին, մենք կլինենք  
հաջողակ, կբարգավաճենք [տես  
Մոսիա 2.22] և խաղաղություն  
կունենանք [տես Մոսիա 2.41]»:

Երեք երիկս Վ. Կոպիշկե՝ Յոթնասուներեց,  
«Ընդունված լինել Տիրոջ կողմից»,  
Լիպհոնա, մայիս 2013, 106:

ինձ ավելի մեծ հավատքով ընդունել  
փոփոխված ծրագրերը և անհաջո-  
ղությունները, իմանալով, որ Երկ-  
նային Հայրը միշտ պատասխանում  
է հավատքով ասված աղոթքներին,  
անգամ երբ պատասխանները գա-  
լիս են անսպասելի եղանակներով:  
Ես ավելի ունակ դարձա, տեսնելով,  
թե ինչպես է Տերն առաջնորդում  
մեզ առօրյա կյանքում:

Աշխատելով հավատքիս ամ-  
րապնդման ուղղությամբ, *Քարոզիչ  
Իմ ավետարանը* ձեռնարկից գտա  
դրական սահմանում, որ ճշմարիտ  
է. եթե բարձրացնեք ձեր ակնկա-  
լիքները, ձեր արդյունավետությունը  
կավելանա, ձեր ցանկությունը  
կաճի և դուք կկարողանաք ավելի  
լավ հետևել Հոգուն: Ինչպես նաև,  
ամեն օր տեսնելով և գնահատելով  
հրաշքները, ես ավելի լավատես-  
քեն վերաբերվեցի միսիոներական  
աշխատանքին և իմ միսիոներա-  
կան ծառայությանը:

### Երախտագիտությունը հակազդում է նախանձին

Տերը սկսեց ցույց տալ ինձ, որ  
Նա ամեն օր հրաշքներ է գործում  
մեզ համար, սակայն ես սկսեցի  
ընկալել դրանք, երբ անկեղծորեն  
երախտապարտ լինելու համար գի-  
տակցաբար ջանքեր գործադրեցի:  
Երախտագիտություն հայտնելը  
ավելի է, քան լավ սովորությունը  
կամ վարքագիծը: Երբ երախտա-  
գիտություն հայտնեցի Տիրոջը և  
մյուսներին, ես գորացա: Մյուս  
միսիոներներին նախանձելու փո-  
խարեն ոգևորվում էի նրանց հաջո-  
ղություններով (տես Ալմա 29.14, 16):  
Կարողանում էի կենտրոնանալ իմ  
ունեցածի և ճիշտ գործելակերպի  
վրա, ոչ թե նրա վրա, ինչը պակա-  
սում էր և սխալ էր կատարվում:

Ես սովորեցի, որ երախտագի-  
տությունը ուրիշների հետ համե-  
մատվելու դեմ հակաթույն է: Այն  
ժամանակները, երբ ինձ չէի զգում  
հաջողակ միսիոներ, սովորաբար,

եկան, որովհետև ինքս ինձ ասում  
էի. «Ես նրանց պես լավ չեմ աշ-  
խատում» կամ՝ «Նրանք սրանում  
ավելի լավ են, քան ես»: Ես նաև  
սովորեցի, որ երբ Տերը մեզ արդար  
օրինակներ է ցույց տալիս, որ-  
պեսզի ընդօրինակենք և հետևենք  
դրանց, սատանան գայթակղում է  
մեզ, որպեսզի նրանց հետ համե-  
մատվելով որոշենք մեր արժեքը  
կամ հաջողության չափը: Սակայն  
*Քարոզիչ Իմ ավետարանը* հստակ  
է այս հարցում. «Մի համեմատ-  
վեք այլ միսիոներների հետ և մի  
չափեք ձեր ու նրանց ջանքերի  
արտաքուստ երևացող արդյունք-  
ները»:<sup>3</sup> Ի վերջո, երախտագի-  
տությունն օգնեց ինձ խույս տալ  
հպարտությունից և հիշեցրեց, որ  
Տերը պատասխանատու է Իր աշ-  
խատանքի համար: Կարիք չկար,  
որ ես նախանձություն դրսևորեի,  
որովհետև իմ ընկեր միսիոներներն  
ավելի հաջողակ էին:<sup>4</sup>

### Հաջողության իրական չափը

Նախքան իմ մեջ տեղի կունենար  
այդ փոփոխությունը, ես այնքան  
կենտրոնացած էի որոշակի օրինու-  
թյան վրա, որ չէի տեսնում, ինչպես  
է Տերն այլ ուղիներով պատասխա-  
նում մեր աղոթքներին և օրինում  
մեր միսիոներական աշխատանքը:  
Ի վերջո, Տերը սկսեց օրինել մի-  
սիոներական աշխատանքը մեր  
տարածքում հրաշալի և անսպա-  
սելի ուղիներով: Մենք գտնում էինք  
մարդկանց, ովքեր ցանկանում էին  
ընդունել մեր ուղերձը, սակայն այդ  
ժամանակ սովորեցի, որ չպետք է  
մյուսների ընտրություններով չա-  
փեյի իմ հաջողությունը:

Նախագահ Գորդոն Բ. Հինքլին  
(1910–2008) կիսվել է միսիոներա-  
կան աշխատանքի վերաբերյալ մի  
միսիայի նախագահի խորհրդով.  
«Հնարավորինս լավ աշխատեք:  
Աղոթեք, տքնաջան աշխատեք և  
թողեք բերքահավաքը Տիրոջը»:<sup>5</sup>  
*Քարոզիչ Իմ Ավետարանը*



**Շատ առումներով, որպես միսիոներ իմ հաջողության գրավականը եղել է՝ ապաշխարելու իմ պատրաստակամությունը և աշխատելու իմ վճռականությունը:**

ուսուցանում է նմանատիպ մի բան հաջողակ միսիոներների մասին. «Հնարավորինս ամեն ինչ արեք, որպեսզի հոգիներ բերեք Քրիստոսի մոտ, և հաստատակամորեն ձգտեք սովորել և զարգանալ»:<sup>6</sup>

Քանի դեռ ես պատրաստակամ էի ապաշխարելու, քանի դեռ կարողանում էի ազնվորեն հաշվետու լինել Տիրոջը, որ լավագույնս էի գործում, ես վստահ էի, որ հաջողակ միսիոներ էի, անկախ նրանից մարդիկ ընդունում էին մեր ուղերձը, թե՛ ոչ: Շատ առումներով, որպես միսիոներ իմ հաջողության գրավականը եղել է՝ ապաշխարելու իմ պատրաստակամությունը և աշխատելու իմ վճռականությունը:

Միսիայի ընթացքում տեղի ունեցած շատ հրաշքներ եմ արձանագրել իմ օրագրում: Ձգտելով լինել ավելի հավատարիմ և երախտապարտ, ես ավելի լավ հեռանկար ունեի, ես խույս էի տալիս

հուսահատությունից և աշխատանքում ավելի առատորեն էի զգում Հոգին: Ես հասկացա, որ այն, ինչ ուսուցանում է *Քարոզիք իմ ավետարանը*, ճշմարիտ է. «Երբ ձեր ուժերի սահմանում արել եք լավագույնը, գուցե դեռևս հիասթափություն ապրեք, սակայն ինքներդ ձեզանից չեք հիասթափվի: Դուք վստահաբար կզգաք, որ Հոգին աշխատում է ձեր միջոցով»:<sup>7</sup> Երբ զգացի, որ Տերը գոհ է ինձանից, կարողացա տանել ամեն փորձություն: ■

*Հեղինակն սպորում է Մեյկում, ԱՄՆ:*

#### ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես *Քարոզիք իմ ավետարանը՝ Միսիոներական ծառայության ուղեցույց* (2004), 10–11:
2. *Քարոզիք իմ ավետարանը*, 10:
3. *Քարոզիք իմ ավետարանը*, 10:
4. Տես Ջեֆրի Ռ. Հոլլանդ, «Այգում աշխատողները», *Լիահոնա*, մայիս 2012, 31:
5. Gordon B. Hinckley, “Find the Lambs, Feed the Sheep,” *Liahona*, July 1999, 120.
6. *Քարոզիք իմ ավետարանը*, 11:
7. *Քարոզիք իմ ավետարանը*, 11:

## ԿԻՍՎԵՔ ՁԵՐ ՓՈՐՁՈՎ

*«Վերջերս եմ վերադարձել միսիայից, և զգում եմ, որ կորցրել եմ նպատակի զգացողությունս: Ի՞նչ պետք է անեմ»:*

Վերադարձած միսիոներներ, խնդրում ենք, պատմեք, թե ինչպես եք անցում կատարել միսիայից սովորական կյանքի՝ վերադառնալով տուն և շարունակելով ձեր գործունեությունը ուսման, աշխատանքային կամ այլ ոլորտներում: Գրեք, ուղարկելով նամակ [liahona@ldschurch.org](mailto:liahona@ldschurch.org) կամ ներկայացնելով այն առցանց՝ [liahona.lds.org](http://liahona.lds.org): Խնդրում ենք գրել ձեր լրիվ անունը, ծննդյան ամսաթիվը և ծովափը կամ ճյուղը:



# Դառնալ Քարոզիր Իմ Ավետարանին համապատասխան միսիոներ



**Երեց  
Դեյվիդ Ա. Բեդևար**  
Տասներկու  
Առաքյալների  
Քվորումից

Դուք կարող եք դա անել:  
Տները, որին դուք ներկայաց-  
նում եք և ծառայում, գիտի,  
որ դուք կարող եք դա անել:  
Ես գիտեմ, որ դուք կարող  
եք դա անել:

Առաքյալը առաջինը, ամենա-  
կարևորը և միշտ միսիոներ է:  
Այդ պատճառով ես հատկա-  
պես գոհ եմ դիմել ձեզ որպես ըն-  
կերակից ծառաներ վերջին օրերի  
այս վիթխարի աշխատանքում:

Ի՞նչ է ՔԱՐՈԶԻՐ ԻՄ  
ԱՎԵՏԱՐԱՆԻ ՄԻՍԻՈՆԵՐԸ:

Քարոզիր Իմ Ավետարանի  
միսիոները Տիրոջ ծառան է՝ մար-  
գարեությամբ և ձեռնադրմամբ լիա-  
զորված, ով հայտարարում է Փրկչի  
հավիտենական և վերականգված  
ավետարանը Նրա ձևով (տես Վևու  
50.13-14, 17-24, Վևու 68.1):

Միսիոների գերագույն նպա-  
տակը, որը նկարագրված է

Քարոզիր Իմ Ավետարանը գրքում,  
«ուրիշներին հրավիրելն է զալ  
դեպի Քրիստոսը՝ օգնելով նրանց  
ստանալ վերականգված ավետա-  
րանը Հիսուս Քրիստոսի և Նրա  
Քավության, ապաշխարության,  
մկրտության, Սուրբ Հոգու պարզևր  
ստանալու և մինչև վերջ համբերե-  
լու միջոցով»:<sup>1</sup>

Ավետարանը իշխանությամբ  
հռչակելու և փրկարար արա-  
րողությունները սպասավորելու  
սրբազան պարտականությունը  
գործարկվել է սկսած Եղեմական  
պարտեզից Ադամի վտարվելուց  
ի վեր և կշարունակվի մինչև «Մեծ  
Եռվան կասի՝ աշխատանքն  
ավարտված է»:<sup>2</sup>

## ՊԱՆՈՒՆՆԵՐ ԶԱՐԴԻՐ ԻՄ ԱՎԵՏԱՐԱՆԻ ՄԻՍԻՈՆԵՐՆԵՐ ԴԱՌՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Ես կամենում եմ քննարկել հինգ հիմնական պահանջներ *Քարոզիչ Իմ Ավետարանի* միսիոներներ դառնալու համար:

### Պահանջ #1. *Քարոզիչ Իմ Ավետարանի* միսիոներները հասկանում են, որ Նրանք ծառայում են և ներկայացնում Հիսուս Քրիստոսին:

*Քարոզիչ Իմ Ավետարանի* միսիոներները գիտեն և հասկանում են, թե ում են իրենք ներկայացնում, ինչու են իրենք ծառայում և ինչ իրենք պետք է անեն: Լիաժամկետ միսիոներները կանչվում են ծառայելու և պատշաճորեն ձեռնադրվելու որպես Տեր Հիսուս Քրիստոսի ծառաներ և ներկայացուցիչներ: Մենք վկայություն ենք բերում Նրա անվան և իրական լինելու, աստվածայնության և Հիսուս Քրիստոսի առաքելության մասին յուրաքանչյուր ազգի, ցեղի, լեզվի և ժողովրդի (տես ՎևՈՒ 133.37):

Մենք սիրում ենք Տիրոջը: Մենք ծառայում ենք Նրան: Մենք հետևում ենք Նրան: Մենք ներկայացնում ենք Նրան:

Նրա նպատակները մեր նպատակներն են: Նրա շահերը պետք է լինեն մեր շահերը: Նրա աշխատանքը պետք է լինի մեր աշխատանքը: Նրա կամքը հետզհետե աճելով պետք է դառնա մեր կամքը:

Որպես Քավչի ներկայացուցիչներ մենք քարոզում ենք Նրա վերականգնված ավետարանի հիմնական վարդապետություններն ու սկզբունքները պարզ և հստակ ձևով: Մենք չենք ներկայացնում անձնական կարծիքներ կամ տեսություններ: Մենք հայտարարում ենք և վկայում պարզ վերականգնված ճշմարտությունը Տիրոջ ձևով և Նրա Հոգու զորությամբ:

*Քարոզիչ Իմ Ավետարանի* միսիոներները հասկանում են, որ



Փրկչին ներկայացնելու պարտականությունը և Նրա մասին վկայություն բերելը երբեք չի ավարտվում: Խնդրում ենք հիշեք Նրան բոլոր բաներում, որ դուք մտածում եք, բոլոր բաներում, որ դուք անում եք և բոլոր բաներում, որ դուք ձգտում եք դառնալ և ներկայացրեք Նրան պատշաճորեն բոլոր Երկնային Հոր զավակներին, ում հետ դուք փոխազդեցության մեջ եք այժմ և միշտ:

### Պահանջ #2. *Քարոզիչ Իմ Ավետարանի* միսիոներները արժանի են:

*Քարոզիչ Իմ Ավետարանի* միսիոներ դառնալու հիմնական նախապայմանը անձնական արժանավորությունն է Փրկչի առջև:

Թույլ տվեք նշել մի քանի պարզ ճշմարտություններ ճիշտ այնպես հստակորեն, ինչպես ես գիտեմ, թե ինչպես:

- Մենք աշխարհի Քավչի և Փրկչի լիազորված ներկայացուցիչներն ենք:
- Մենք կանչված ենք հայտարարելու Նրա վերականգնված և հավիտենական ավետարանը:
- Մենք չենք կարող կեղտոտվել աշխարհիկ արատներով և հեղինակավոր ձևով ներկայացնել Նրան և գործել Նրա սուրբ անվան զորությամբ:
- Մենք չենք կարող օգնել ուրիշներին հաղթահարել մեղքի գերությունը, եթե մենք ինքներս ենք խճճված մեղքի մեջ (տես ՎևՈՒ 88.86):
- Մենք չենք կարող օգնել ուրիշներին սովորել ապաշխարել, եթե մենք ինքներս չենք սովորել պատշաճորեն և ամբողջապես ապաշխարել:
- Մենք կարող ենք հայտարարել և քարոզել զորությամբ միայն այն, ինչ մենք ձգտում ենք դառնալ:
- Մենք հաշիվ ենք տալու Աստծո առջև մեր արդար ցանկությունների և որպես Նրա գործակալներ արժանավորությամբ գործելու համար:

Մեզանից չի պահանջվում ներկայումս կատարյալ լինել: Բայց մեզ պատվիրված է մաքուր լինել և շիտակ քայլել Իսրայելի Քավչի առջև: «Մաքուր եղեք, ով Տիրոջ սպասները կրողներ» (ՎևՈՒ 38.42):

Ապաշխարությունը հույսի և բժշկության, ոչ թե հուսալքության և հուսահատության սկզբունք է: Ապաշխարությունն իսկապես խոնարհեցնող է՝ բայց ոչ վախեցնող: Ապաշխարությունը միաժամանակ պահանջկոտ է և մխիթարող, խստապահանջ և հանգստացնող:

Եթե նույնիսկ դուք գործել եք լուրջ մեղքեր, Հիսուս Քրիստոսի Քավության և անկեղծ ապաշխարության միջոցով, դուք կարող եք կրկին մաքուր և արժանավոր դառնալ:

Կան երիտասարդներ, ովքեր դեռ պետք է լիովին ապաշխարեն: Ժամանակն այժմ է: Խնդրում ենք, խնդրում ենք, խնդրում ենք մի հետաձգեք ձեր ապաշխարության օրը:

Կան երիտասարդներ, ովքեր ապաշխարել են և շարունակում են ապաշխարել և հետաքրքրվում են, թե արդյոք արե՞լ են այն բոլորը, ինչ անհարաժեշտ է Տիրոջ կողմից ընդունվելու համար (տես Վեճ 97.8): Ձեր կյանքում կրկին գործող Սուրբ Հոգին Տիրոջ ներողամտության ամենահամոզիչ ցուցիչն է, որովհետև «Տիրոջ Հոգին չի բնակվում անսուրբ տաճարներում» (Հեղ. 4.24): Եվ ընդունեք որ «բոլոր մարդկանց ներելու» մանդատը (Վեճ 64.10) ներառում է ինքներդ ձեզ ներելը:

**Քարոզիչ Իմ Ավետարանի** միսիոներները Տեր Հիսուս Քրիստոսի



ուխտը հարգող և պատվիրանին հնազանդվող աշակերտներ են: Խնդրում ենք միշտ հիշեք Նրան և եղեք մաքուր և արժանավոր Նրան ներկայացնելու համար:

### **Պահանջ #3. Քարոզիչ Իմ Ավետարանի միսիոներները գանձում են հավերժական կյանքի խոսքերը:**

Ես հրավիրում եմ ձեզ. «ձեր մտքում գանձեք կյանքի խոսքերը» (Վեճ 84.85): Հավերժական կյանքի խոսքերը գանձելն ավելի է, քան պարզապես ուսումնասիրելն ու սերտելը, ճիշտ ինչպես «սովելով Քրիստոսի խոսքերով» (2 Նեփի 31.20, տես նաև 2 Նեփի 32.3) ավելին է, քան ուղղակի մի կտոր համտեսելը կամ ճաշակելը: Գանձելը ինձ թվում է կենտրոնանալ և աշխատել, հետազոտել և կլանել, խորհելն ու աղոթելը, կիրառելն ու սովորելը, գնահատելն ու շնորհակալ լինելը և վայելելն ու հաճույքով ուտելն է:

Հիշեք, թե ինչպես Մոսիայի որդիները –չորս իսկապես նշանավոր միսիոներներ՝ Ամմոն, Ահարոն, Օմներ և Հիմնի անունով– «դարձել էին ուժեղ ճշմարտության իմացության մեջ. քանզի նրանք առողջ դատողությամբ մարդիկ էին և նրանք ջանասիրաբար քննել էին սուրբ գրքերը» (Ալմա 17.2):

Այս քաջարի միսիոներներն

իսկապես անընդհատ գանձել էին հավերժական կյանքի խոսքերը: Նրանք չէին անտեսել կամ ուղղակի անցել սուրբ գրությունների անհատական և խմբային ուսումնասիրություն: Հոգևոր գիտելիքը և հասկացողությունը ներթափանցել էր խորը նրանց իսկ հոգիներում և ավետարանի վարդապետություններն ու սկզբունքները հաստատվել էին նրանց սրտերում որպես ճշմարիտ՝ Սուրբ Հոգու զորության միջոցով:

Որպես Փրկչի ներկայացուցիչներ, դուք և ես ջանասիրաբար աշխատելու և մեր սրտերում և մտքերում վերականգլած ավետարանի՝ հատկապես Մորմոնի Գրքի վարդապետություններն ու սկզբունքները արմատավորելու հարատև պատասխանատվություն ունենք: Երբ մենք անենք այդ, խոստացված օրհնությունն այն է, որ Սուրբ Հոգին «կյիշեցնէ [մեզ] ամեն ինչ» (Հովհաննես ԺՂ.26) և կգորացնի մեզ, երբ մենք ուսուցանենք և վկայենք: Բայց Հոգին կարող է աշխատել մեզ հետ և մեր միջոցով միայն այն դեպքում, եթե մենք տանք Նրան, ինչ որ բան, որի հետ աշխատի: Նա չի կարող օգնել մեզ հիշել բաներ, որոնք մենք չենք սովորել (տես Ալմա 31.5):

**Քարոզիչ Իմ Ավետարանի** միսիոներներն անընդհատ գանձում են հավերժական կյանքի խոսքեր,

նրանք ապավինում են խոսքի զորությանը, և նրանք ունեն խոսքի ուժը իրենց մեջ: Խնդրում ենք միշտ հիշեք Նրան, միշտ արժանի եղեք Նրան ներկայացնելու, և գանձեք և ապավինեք խոսքի զորությանը:

**Պահանջ #4. Զարոգիր Իմ Ավետարանի միսիոներները հասկանում են, որ Սուրբ Հոգին է բարձրագույն և ճշմարիտ ուսուցիչը:**

Սուրբ Հոգին Աստվածագլխի երրորդ անդամն է, և Նա է վկան ամեն ճշմարտության և գերագույն և ճշմարիտ ուսուցիչը: Դասերը, որ մենք ուսուցանում ենք և վկայությունները, որ մենք բերում ենք, նախապատրաստում են ունկնդրին ինքնուրույն գործելուն և սովորելուն:

Որպես միսիոներներ, մեր ամենակարևոր դերերից մեկը ունկնդիրներին հրավիրելն է գործադրել իրենց բարոյական ազատությունը և գործել համաձայն Փրկչի ուսմունքների: Հոգևոր պարտավորություններ վերցնելն ու պահելը, ինչպես օրինակ աղոթելը ճշմարտության վերաբերյալ վկայություն ձեռք բերելու համար, Մորոմոնի Գրքի մասին ուսումնասիրելը և աղոթելը, Եկեղեցու ժողովներին հաճախելը և պատվիրանները պահելը պահանջում են ունկնդրից հավատք գործադրել, գործել և փոխվել:

Անկախ նրանից, թե որքան լրջորեն ենք մենք ծառայում, դուք և ես ուղղակի չենք կարող ունկնդիրներին սրտերին պարտադրել կամ հարկադրել ճշմարտությունը: Մեր լավագույն ջանքերը կարող են ճշմարտության ուղերձը միայն *դեպի* սիրտը բերել (տես 2 Նեփի 33.1): Ի վերջո, ունկնդիրը պետք է գործի արդարորեն և դրանով հրավիրի ճշմարտությունը իր իսկ սրտի *մեջ*: Միայն այս ուղով կարող են ճշմարտության ազնիվ

որոնողները և նորադարձները զարգացնել իրենց համար պատասխաններ գտնելու հոգևոր կարողությունը:

Քանի որ մեր պարտականությունն է օգնել ունկնդիրներին սովորել հավատքով և Սուրբ Հոգու զորությամբ, այս աշխատանքը երբեք ոչ իմն է և ոչ էլ ձերը: Մենք պետք է անենք այն ամենը, ինչ մեզանից կախված է՝ կատարելու մեր միսիոներական պարտականությունը և միաժամանակ «ճանապարհից հեռանալու», որպեսզի Սուրբ Հոգին կարողանա կատարել Իր սրբազան գործն ու աշխատանքը: Փաստորեն, ինչ էլ որ դուք կամ ես անում ենք որպես Փրկչի ներկայացուցիչներ, ովքեր գիտենալով և դիտավորյալ ուշադրությունը հրավիրում ենք մեզ վրա, այն ուղերձում, որ մենք ներկայացնում ենք, այն մեթոդներով, որ մենք գործում ենք, կամ մեր անձնական պահվածքով և արտաքինով, քահանայանենգման մի ձև է, որն արգելակում է Սուրբ Հոգու ուսուցանման արդյունավետությունը:

«Արդյո՞ք նա քարոզում է դա ճշմարտության Հոգով, թե՞ որևէ այլ ձևով: Եվ եթե լինի որևէ այլ ձևով, ապա Աստծուց չէ»: (ՎևՈՒ 50.17–18):

Խնդրում ենք միշտ հիշեք Նրան, արժանի եղեք ներկայացնել Նրան, գանձեք Նրա խոսքը և թույլ տվեք գերագույն և ճշմարիտ ուսուցչին՝ Սուրբ Հոգուն վկայել ողջ ճշմարտության մասին:

**Պահանջ #5. Զարոգիր Իմ Ավետարանի միսիոներները հասկանում են, որ ուսուցանելը շատ ավելին է, քան խոսելը և պատմելը:**

Երբ Փրկիչը նստած էր Չիթենյաց սարի վրա, Նա հայտարարեց. «Հոգս չանեք թե ի՞նչ պիտի խօսիք, ես ոչ էլ մտածեցեք. Այլ ինչ որ այն ժամումը կտրուի ձեզ, այն խօսեցեք. Որովհետեւ դուք չեք խօսողները՝ բայց Սուրբ Հոգին»: (Մարկոս ԺԳ.11):

Փրկիչն այս տնտեսության վաղ օրերին հրահանգեց միսիոներներին՝ «Բացեք ձեր բերանը և այն պիտի լցվի» (ՎևՈՒ 33.8, 10) և «Բարձրացրեք ձեր ձայնը դեպի



այս ժողովուրդը. Ասեք այն մտքերը, որոնք ես կդնեմ ձեր սրտում, և դուք ամոթով չեք մնա մարդկանց առաջ, քանզի այն նույն ժամին, այո, այն նույն պահին տրվելու է ձեզ, թե ինչ պիտի ասեք» (ՎևՈՒ 100.5–6):

Այս սուրբ գրությունները շեշտում են խստապահանջ և ճշգրիտ ձև ունկնդիրներին քարոզելու և օգնելու սովորել ճշմարտությունը: *Քարոզիչը Իմ Ավետարանի* միսիոներները գիտեն, որ մենք չենք ուսուցանում դասեր, այլ ուսուցանում ենք մարդկանց: Մենք պարզապես չենք արտասանում կամ ներկայացնում անգիր սովորած ուղերձներ ավետարանական թեմաների վերաբերյալ: Մենք հրավիրում ենք ճշմարտություն որոնողներին զգալ սրտի հզոր փոփոխությունը: Մենք հասկանում ենք, որ միայն խոսելն ու պատմելը ուսուցանել չէ:

Տիրոջ ձևով ավետարանը քարոզելը ներառում է դիտարկելը, լսելը և զանազանելը որպես նախադրյալներ խոսելու համար: Այս չորս փոխկապակցված գործընթացների հերթականությունը կարևոր է: Խնդրում եմ ի նկատի ունեցեք, որ ակտիվ դիտարկումը և լսելը նախորդում է զանազանելուն և որ դիտարկելը, լսելը և զանազանելը գալիս են խոսելուց առաջ: Այս ձևը գործածելը հնարավորություն է տալիս միսիոներներին որոշել և ուսուցանել ըստ ունկնդիրների կարիքների:

Երբ մենք դիտարկում ենք, լսում և զանազանում, մեզ կտրվի «հենց նույն պահին ամեն մարդու համար չափված բաժինը» (ՎևՈՒ 84.85)–Այն ճշմարտությունները, որոնք պետք է շեշտադրել և այն պատասխանները, որոնք պետք է տրվեն, կբավարարեն տվյալ ունկնդրի առանձնահատուկ կարիքները: Միայն դիտարկելով, լսելով, և զանազանելով մենք կարող ենք առաջնորդվել Հոգու կողմից՝ ասելու և անելու այն բաները, որոնք



ամենաօգտակարը կլինեն նրանց համար, ում մենք ծառայում ենք:

Դիտարկելը էական նախապատրաստություն է խորաթափանցության հոգևոր պարզել ստանալու համար: Զանազանելը հոգևոր աչքերով տեսնելն է և սրտով զգալը՝ որևէ գաղափարի կեղծությունը տեսնելու և զգալու կարողությունը, մեկ այլ անձնավորության մեջ բարությունը կամ հաջորդ սկզբունքը տեսնելը, որն անհրաժեշտ է որևէ ունկնդրի օգնելու համար: Զանազանելը հոգևոր ականջներով լսելն է և սրտով զգալը՝ որևէ ակնարկում կամ դիտողությունում չասված մտահոգության կամ հարցի լսելն ու զգալը, որևէ վկայության կամ վարդապետության կամ հավաստիացման ու խաղաղության գալը Սուրբ Հոգու գործությամբ:

*Քարոզիչը Իմ Ավետարանի* միսիոներները գործում են հավատքով և առաջնորդվում են Հոգու կողմից՝ օգնելու ունկնդիրներին սովորել ճշմարտությունը: Խնդրում ենք միշտ հիշեք Նրան, արժանի եղեք ներկայացնել Նրան, զանազանեք Նրա խոսքը, թույլ տվեք Սուրբ Հոգին վկայի ամեն ճշմարտություն և դիտարկեք, լսեք և զանազանեք, երբ վկայեք Հիսուս Քրիստոսի մասին ճշմարտության ազնիվ որոնողներին:

ԴՈՒՔ ԿԱՐՈՂ ԵՔ ԴԱ ՄՆԵՒ:

Դուք կարող եք կարդալ իմ ուղերձը և հավատալ, որ բոլոր մյուս

երիտասարդները կարող են անել այն, ինչ ես նկարագրեցի: Բայց դուք գուցե երկմտեք, թե արդյոք կարող եք անել դա: Խնդրում եմ լսեք: Դուք կարող եք դա անել:

Իմ սրտի իղձն է, որ մի քանի բույս տրամադրեի ձեզանից յուրաքանչյուրին անհատապես: Ես կսեղմեի ձեր ձեռքը, կմոտեցնեի ինձ, կնայեի ձեր աչքերի մեջ և կասեի՝ «Դուք կարող եք անել այդ: Տերը, ում դուք ներկայացնում եք և ծառայում, գիտի, որ դուք կարող եք դա անել: Ես գիտեմ, որ դուք կարող եք դա անել: Եվ որպես Նրա ծառա, ես խոստանում եմ ձեզ, դուք կունենաք Նրա օգնությունը: Խնդրում եմ, միշտ հիշեք, որ Նրա օգնությամբ և Նրա ուժով դուք կարող եք դա անել»:

Ես սիրում եմ ձեզ և աղոթում, որ երբ ձգտեք դառնալ ինչ դուք պետք է դառնաք, դուք ճանաչեք և արձագանքեք հավատքով Տիրոջ ձայնին և առաջնորդությանը: Այդ ժամանակ դուք իսկապես կդառնաք Տեր Հիսուս Քրիստոսի հզոր և արդյունավետ ներկայացուցիչները: ■

2011թ. հունիսի 24-ին Պրովոյի Միսիոներների ուսուցման կենտրոնում տրված շնորհանդեսի ելույթից

#### ՀՂՈՒՄՆԵՐ

1. *Քարոզիչը Իմ Ավետարանը՝ Միսիոներական ծառայության ուղեցույց* (2004), 63:
2. *Եկեղեցու Նախագահների Ուսումնական Ձեռնարկ* (2007), 142:

# Ուրդակի ԺՊՏԱՑԵՔ և ԱՍԵՔ՝ ՈՉ

Հեյզլ Մարի Թիբյուլ

Մի ամառ ես մասնակցեցի վերապատրաստման Ֆիլիպինների Բիկոլ կղզում: Օվկիանոսի տեսարանը սքանչելի էր, և ես մեծ անհամբերությամբ էի սպասում ամեն առավոտին:

Սակայն ես սարսափում էի երեկոներից: Դա այն ժամանակ է, երբ մարդիկ ճամբարում սկսում էին խմել և երեկոյթներ անցկացնել: Այդպիսի երկոների համար հրավերներ հաճախ էին լինում և ես ու իմ ընկերակիցները ստիպված էինք մասնակցել, քանի որ չմասնակցելը կարող էր անհարազատից լինել:

Առաջին երեկոյթը ողջույնի երեկո էր նոր վերապատրաստվողների համար: Ես վախենում էի գնալ, որովհետև ես գրեթե համոզված էի, որ նրանք մեզ խմիչքներ կառաջարկեին, և ես համոզված չէի, թե ինչպես մերժել: Ես զանգահարեցի իմ ծխի մի ընկերոջ, և նա տվեց ինձ մի հրաշալի խորհուրդ, որն ինձ վստահություն ներշնչեց:

Երբ երեկոյթը սկսվեց, նրանք մեզ խմիչքներ առաջարկեցին, բայց բարեբախտաբար չէին ստիպում մեզ խմել: Քանի որ իմ ընկերակից վերապատրաստվողները ընդունել էին իմ չխմելու դիրքորոշումը, մյուս հրավերները մերժելն այժմ ավելի հեշտ էր ինձ համար՝ մինչև ընդհուպ մի գիշեր: Այդ երեկոյթներից մեկի ժամանակ ընկերության նախագահը եկավ: Նա

բերել էր մի շիշ *խալբանոզ* (տեղական գինի, որը պատրաստում են կոկոսից): Նրա ժամանումից ոչ շատ անց, ես տեսա թե ինչպես էր նա գինի լցնում: Ապա նա ասաց. «Դուք պետք է սովորեք, թե ինչպես խմեք» և տվեց բաժակը մասնակիցներից մեկին: Նա արագ խմեց այն:

Մի րոտ սկսեց ուժեղ բաբախել: Շուտով իմ հերթն էր լինելու: Ես

*Ես մերժեցի խմելու  
առաջարկները, բայց այժմ  
ընկերության նախագահը  
առաջարկում էր ինձ մի  
բաժակ գինի:*

մտքումս շնչում էի ինքս ինձ. «Ես չեմ խմի այն: Ես չեմ խմի այն»: Ապա տեսա նախագահին, որը գինով բաժակն ինձ էր մեկնել: Ես չգիտեի, թե ինչ անեի: Իմ ընկերակիցներն ինձ էին նայում, սպասելով տեսնելու, թե ինչ էի անելու: Ես ժպտացի նախագահին և համեստորեն ասացի. «Ներեցեք, պարոն, բայց ես չեմ խմում:»

Ես գիտեի, որ նա հիասթափված էր: Նա հարցրեց, թե ինչու չէի խմում: Ես ասացի. «Ես Մորմոն եմ»:

Նա ասաց. «Ես չեմ լսել այդ կրոնի մասին: Այն հնչում է ինչ որ ուտելիքի տեսակի նման»: Բոլորը ծիծաղեցին:

Ես ևս ժպտացի, ոչ թե նրա կատակի պատճառով, այլ այն պատճառով, որ գիտեի ճիշտ էի վարվել:

Ոչ ոք այլևս ինձ կրկին խմիչք չառաջարկեց: Բայց ծաղրանքը դեռ չէր դադարել, նույնիսկ իմ իսկ ընկերների կողմից: Մեկը նույնիսկ ասաց, որ ես ստում եմ, և չէր պատկերացնում, որ Եկեղեցու անդամները չեն խմում: Այդ ժամանակ ես զգացի այն ճնշումները, որոնք գալիս են Եկեղեցու անդամներին:

Այդ կղզում իմ մնալն ինձ շատ բաներ սովորեցրեց, ոչ թե գիտականորեն, այլ հոգևոր առումով: Ես սովորեցի, որ ծաղրածանակը երբեք գուցե չդադարի, բայց Տիրոջ Հոգին միշտ կառաջնորդի ձեզ անել այն, ինչ ճիշտ է: ■

*Հեղինակն ապրում է Մեթրո Մանիլայում, Ֆիլիպիններում:*





**Երեց  
Ադրիան Օչյան**  
Յոթանասուկից

Ես ցանկանում եմ  
ֆիզիկապես և էմոցիոնալ  
առումով ավելի լավ և ավելի  
համարձակ զգալ: Կանոնա-  
վորապես մարզվելը կօգնի:

# ԵՂԵՔ ՈՒԺԵՂ, ԵՂԵՔ ԱՌՈՂՋ, ԵՂԵՔ ԽԵԼԱՑԻ

Ես վերջերս մի հետաքրքիր տեսակետ կարդացի մարզանքի մասին: Ես կարդացի, որ եթե դուք վաղ եք վեր կենում առավոտյան, հագնում ձեր սպորտային հագուստները և մտածում. «Ես ուղղակի կհագնեմ այս, դուրս կգնամ քայլելու, և եթե ես լավ զգամ ես կսկսեմ դանդաղ քայլել», դուք ամենայն հավանականությամբ կստանաք լավ մարզանք, նույնիսկ նախքան դուք կգիտակցեք դա: Այսպիսի պարզ ծրագրով սկսելը կարող է օգնել ձեզ զարգացնել մարզման լավ սովորություններ և խնամք ձեր մարմնի համար: Շատ մարդկանց համար սկսելը և հետևողական լինելը ամենադժվար մասն է: Եթե հիշեք, որ մարզվելն օրինում է ոչ միայն ձեր մարմինը, այլև ձեր միտքն ու խելքը, այն կօգնի ձեզ ցանկություն ունենալ դառալ ֆիզիկապես ավելի առողջ: Երբ դուք մարզվեք, դուք կդառնաք առույգ մարդ, որը ուժեղ, վստահ և ապահով է զգում:

Ես հիշում եմ մի պատմություն թռչնի մասին, որը սկսեց փոխանակել իր փետուրները որդերի հետ: Այդ ձևով հեշտ էր ուտելիք ձեռք բերել և թռչունը մտածում էր, որ առատ փետուրներ ուներ: Երբ նա շարունակում էր փոխանակել իր փետուրները, թռչունը բավականություն էր ստանում, որ ստիպված չէր վաղ վեր կենալ որդեր որսալու

համար: Նա կարող էր նստել իր բնում ողջ օրը և ոչ մի մկան չշարժել: Ի վերջո, թռչունը խիստ սովորեց այս ձևին և հասկացավ, որ չէր կարող այլևս թռչել, որովհետև նա կորցրել էր իր կենսականորեն կարևոր փետուրները:

Մա կարող է պատահել ամեն մեկի հետ, ով ընկնում է վատ սովորությունների, ծույլ սովորաբանության կամ հակում առաջացնող նյութերի օգտագործման թակարդը: *Երիտասարդներին զորացնելու համար* գրքույկում մենք կարդում ենք, որ այս բաների օգտագործման դեպքում «կարող է վնասվել ձեր ֆիզիկական, մտավոր, [էմոցիոնալ] և հոգևոր բարօրությունը: Դրանք վնասում են ընտանեկան և ընկերական հարաբերություններին և նվազեցնում ձեր ինքնարժեքի զգացումը: Դրանք սահմանափակում են ձեր անհատական ընտրությունները կատարելու ունակությունը»:<sup>1</sup> Ակտիվ լինելը և ճիշտ սնվելն օգնում է մեզ խուսափել այս վատ սովորություններից: Եթե թռչունը շարունակեք թռչել և որսալ, նա երբեք չէր կորցնի իր փետուրները: Նմանապես, եթե մենք «թափահարենք մեր թևերը» և կանոնավորապես մարզվենք, մենք կզարգացնենք ունակություն խուսափելու հակումներից, որոնք վնասում են մեզ և տանում այլասերման:

Ճիշտ ինչպես որոշ անձնավորություններ մաքառում են ֆիզիկական

առողջության խնդիրների դեմ, ուրիշներն էլ տառապում են էմոցիոնալ խնդիրներից: Կյանքը կարող է դժվար լինել և երբեմն մենք կարող է ունենանք նեղսրտվածության, ընկճվածության, ցածր ինքնագնահատականի զգացումներ: Բայց հիշեք, որ ինչպես ֆիզիկական, այնպես էլ էմոցիոնալ առողջության համար մարզանքն ու տքնաջան աշխատանքն օգնում է պահպանել դրական հեռանկար: Ձեր մարմնին խնամք տանելն օրինում է նաև ձեր միտքը և օգնում ձեզ հիշել, որ դուք Աստծո զավակն եք և կարող եք վստահ լինել և երջանիկ: Մեր էմոցիոնալ, ֆիզիկական և հոգևոր կողմերը բոլորը կապված են միմյանց: *Երիտասարդներին զորացնելու համար* գրքույկն ուսուցանում է. «Ձեր էմոցիոնալ առջական վիճակը նույնպես կարևոր է և կարող է ազդել ձեր հոգևոր և ֆիզիկական բարօրության վրա: Հիասթափությունն ու երբեմն տխրությունը այս մահկանացու կյանքի մասն է: Մակայն եթե դուք տխրության, հուսահատության, նեղսրտվածության կամ ընկճվածության երկարատև զգացումներ եք ունենում, խոսեք ձեր ծնողների և ձեր եպիսկոպոսի հետ և օգնություն որոնեք»:<sup>2</sup>

Ինչո՞ւ ենք տեսնում մեր շրջապատում մարդկանց, ովքեր ավելի եռանդուն և ուրախ են թվում: Հիմնական պատճառներից մեկը

սովորույթներն են: Եթե մենք հետևենք մեր մարմնին հոգևոր տեսանկյունից և հասկանանք, որ այն «տաճար է, պարզև Աստծուց», մենք կսիրենք այն և սուրբ կպահենք:<sup>3</sup>

Ինձ համար, *սրբազան* նշանակում է մաքուր, սնուցված և ուժեղ: Մեր մարմինները սուրբ պահելու Երկնային Հոր ուղիներից մեկը Իմաստության Խոսքը տալն էր: *Երիտասարդներին գորացնելու համար* գրքույկը բացատրում է. «Երբ հնազանդ լինեք [Իմաստության Խոսքին], դուք զերծ կմնաք վնասակար ազդեցություններից և կդեկավարեք ձեր կյանքը: Դուք կստանաք առողջ մարմնի, արթուն մտքի օրհնությունները և Սուրբ Հոգու առաջնորդությունը: Դուք պատրաստված կլինեք ծառայելու Տիրոջը: Երբեք թույլ մի տվեք սատանային կամ ուրիշներին համոզել ձեզ, որ Իմաստության Խոսքը խախտելով դուք ավելի երջանիկ կամ ավելի հրապուրիչ կդառնաք»:<sup>4</sup> Երբ դուք հետևում եք Իմաստության Խոսքին, հիշեք որ խնամք եք


տանում ինչպես ձեր մարմնին, այնպես էլ ձեր մտքին և, որ դա թույլ է տալիս ձեզ «գտնել իմաստություն և գիտության մեծ զանձեր» (ՎեՌԻ 89.19):

Ծուլորեն փետուրներ վաճառող թռչուն լինելու փոխարեն հագեք ձեր թենիսի կոշիկները և եղեք ակտիվ: Հետևողականորեն մարզվեք: Ցուցակագրվեք ձեր սիրելի սպորտաձևում կամ ընկերացեք մեկի հետ, որի հետ դուք կարող եք վազել կամ այլ զվարճալի խաղեր անցկացնել: Երբ ֆիզիկական վարժություններ կատարեք, մարզեք ինչպես ձեր մարմինը, այնպես էլ միտքը: Մարզումը ուժեղացնում է նաև էմոցիոնալ առողջական վիճակը: Հիշեք, որ ամենակարևոր բանը այն չէ, թե որքան արագ կամ մարզված եք դուք, այլ թե որքան կայուն եք: Երբ կանոնավորապես մարզվեք, դուք ոչ միայն ավելի երջանիկ կլինեք, այլև կդառնաք ավելի ուժեղ, ավելի առողջ և ավելի խելացի: ■

#### ՀՐՈՒՄՆԵՐ

1. *Երիտասարդներին գորացնելու համար* (գրքույկ, 2011), 27:
2. *Երիտասարդներին գորացնելու համար*, 27:
3. *Երիտասարդներին գորացնելու համար*, 25:
4. *Երիտասարդներին գորացնելու համար*, 25:

Մի եղեք ծուլ թռչնի  
նման, որը փոխանակում էր  
փետուրները որդերի հետ:





# ՇԵՏԵՎԵՔ ՆՐԱ ՈՒՆԱԿԵՆՈՒՄԵՐԻՆ

Փրկչի նման դառնալը աստիճանական կյանքի տևողությամբ գործընթաց է, և դուք կարող եք սկսել ամեն օր փոքրիկ քայլեր կատարելով:

## ՄԵԼԻՍԱ ԶԵՆՈՆԵՆ

Եկեղեցու ամսագրեր

Սուրբ գրությունները խրախուսում են մեզ դառնալ Հիսուս Քրիստոսի նման և «քայլել ճիշտ ինչպես Նա քայլեց» (Ա Հովհաննես Բ.6): Բայց այդ առաջին քայլը կարող է դժվար լինել–հատկապես, երբ դուք չգիտեք, թե ինչպես սկսել:

Դուք կարող եք օգնություն գտնել *Քարոզիչ Իմ Ավետարանը՝ Միսիոներական Ծառայության Ուղեցույցում*: Դուք գուցե մտածեք, որ այն ուղղակի մի ձեռնարկ է լիաժամկետ միսիոներների համար, բայց այն իրականում սքանչելի միջոց է, որը կարող է օգնել ձեզ սկսել ձեր նպատակակետի վրա աշխատել՝ Փրկչի նման դառնալու համար: Գլուխ 6-ը նախատեսված է օգնելու ձեզ հասկանալ և կիրառել ինը հատուկ Քրիստոսանման հատկանիշներ:

Ահա այստեղ կան մի քանի առաջարկներ, թե ինչպես օգտագործել *Քարոզիչ Իմ Ավետարանը* գիրքը և սուրբ գրությունները, երբ դուք ձգտեք զարգացնել Քրիստոսանման հատկանիշներ:

- Սկսելու համար գնացեք գլուխ 6-ի վերջում Վարժություն հատկանիշի վերաբերյալ բաժինը *Քարոզիչ Իմ Ավետարանը* գրքում (141 էջը): Այս վարժությունը կարող է օգնել ձեզ որոշել, թե որ հատկանիշներն են ներկայումս ձեր հոգևոր ուժեղ կողմերը և որոնք են այն կողմերը, որոնց վրա դուք պետք է աշխատեք:



## ՄԻԱՑԵՔ ԶՐՈՒՅՑԻՆ



**Հ**ոկտեմբերի ընթացքում դուք կսովորեք, թե ինչպես դառնաք ավելի Քրիստոսանման (եթե ձեր ծովրդ կամ ճյուղը ունի սուր դասերը ձեր լեզվով): Այս հոդվածը կարդալուց հետո, աղոթքով ընտրեք մի հատկանիշ այդ ուղղությամբ աշխատելու համար այս շաբաթ կամ ամիս: Դուք կարող եք նպատակներ դնել, իսկ հետո գնահատել ձեր առաջընթացը: Օրինակ՝ արդյո՞ք ավելի գթառատ էիք կամ հնազանդ կամ էլ համբերատար: Ինչպե՞ս ավելի Քրիստոսանման լինելու ձեր նպատակն օգնեց ձեզ հաղթահարել զժպարությունները: Մտածեք ձեր փորձառություններով կիսվելու մասին մյուս երիտասարդների կամ ձեր ընտանիքի հետ:

- Վարժությունը վերջացնելուց հետո, աղոթքով ընտրեք մի հատկանիշ՝ դրա վրա կենտրոնանալու համար: Մտածեք այդ հատկանիշի վերաբերյալ կարդալու մասին գլուխ 6-ի այդ բաժնում:
- Դրեք հատուկ չափելի նպատակակետեր, որոնք կօգնեն ձեզ զարգացնել այս հատկանիշը: Ձեզ համար ժամանակահատված դրեք ձեր նպատակակետի վրա աշխատելու համար: Ապա գնահատեք ձեր առաջընթացը: Օրինակ, եթե փորձում եք լինել ավելի գթառատ, դուք կարող եք նպատակ դնել ասելու դրական բաներ ձեր եղբոր կամ քրոջ մասին մեկ շաբաթվա ընթացքում օրը երեք անգամ: Շաբաթվա վերջում դուք կգնահատեք, թե ինչպես կատարեցիք ձեր նպատակը և ուղղումներ կատարեցիք, որոնք կօգնեն ձեզ շարունակել բարեփոխվելը:
- *Քարոզիչ Իմ Այնտառանք* տալիս է սուրբ գրությունների հատվածներ յուրաքանչյուր հատկանիշն ուսումնասիրելու համար: Դուք կարող եք աղոթքով կարդալ ցուցակի սուրբ գրությունները և գրի առնել այն տպավորությունները, որոնք դուք ստացել եք կարդալիս:

- Խնդրեք Երկնային Հորը օգնել ձեզ որևէ Քրիստոսանման հատկանիշ զարգացնել: Խնդրեք առանձնահատուկ օգնություն ինչպես օրինակ. «Խնդրում եմ տուր ինձ ուժ հաղթահարելու իմ զայրույթը, երբ իմ եղբայրներն ու քույրերը վերցնում են իմ իրերը»: Որքան ավելի հատուկ են ձեր աղոթքները, ավելի հեշտ կլինի ձեզ համար ընկալել Տիրոջ պատասխանները:

Մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսին նմանվելը աստիճանական գործընթաց է և ողջ կյանքի գործ: Երբեմն այն կարող է թվալ ավելի դժվար, քան բարձրագույն ֆիզիկան: Բայց մի վիատվեք: Տերը խոստանում է մեզ. «Նա, ով ստանում է լույսը և շարունակում է Աստծո հետ, ստանում է ավելի շատ լույս. և այդ լույսն ավելի ու ավելի է պայծառանում, մինչև որ կատարյալ օր է դառնում» (ՎնՈՒ 50.24): Երբ մենք ստանում ենք, ուսումնասիրում և կիրառում լույս և ճշմարտություն և շարունակում հետևել Աստծուն ամեն օր, մենք կարող ենք համոզված լինել, որ մենք ավելի նման կդառնանք մեր Փրկչին՝ Հիսուս Քրիստոսին: ■



## ԱՄԵՆՈՐՅԱ ԽՆԴԻՐՆԵՐ

Ամենօրյա փոքրիկ գործերը ոտնահետքեր են արահետի երկայնքով մեր Փրկչին նման դառնալու համար: Մտածեք այս լրացուցիչ վարժությունների մասին, որոնք կօգնեն ձեզ զարգացնել Քրիստոսանման հատկանիշները:

- Կարդացեք սուրբ գրությունները, որոնք գտնվում են Թեմատիկ Ուղեցույցում կամ Սուրբ Գրքերի Ուղեցույցում, որոնք կապված են այն հատկանիշի հետ, որը դուք ձգտում եք զարգացնել:
- Ամեն օր աղոթեք փոխվելու ցանկության և բարեփոխվելու ուժի համար:
- Օրագիր պահեք ձեր առաջընթացը փաստագրելու համար:
- Խոսեք ձեր ծնողների հետ: Թող նրանք իմանան ձեր նպատակները, որպեսզի նրանք կարողանան օգնել ձեզ:

## «Ի՞նչ եմ ես ասում ոչ անդամներին, ովքեր հարցնում են, թե ինչու Եկեղեցու որոշ անդամներ չեն ապրում մեր չափանիշներով»:

**Ս** քանչևի կլինեք, եթե Եկեղեցու յուրաքանչյուր անդամ լիովին ապրեր ավետարանով: Նրանք ոչ միայն ավելի շատ օրհնություններ կվայելեին իրենց կյանքում, այլև մեծ օրինակներ կլինեին իրենց շրջապատի մարդկանց համար: Բայց մենք մահկանացուներ ենք, այնպես որ մենք բոլորս էլ ինչ որ չափով սխալներ ենք կատարում: Պատճառը, որ ոմանք ավելի լիովին են ապրում ավետարանով, քան մյուսները այն է, որ մենք յուրաքանչյուրս մեր դարձի և մեր վկայությունների ուժի տարբեր կետերում ենք գտնվում: Մեզանից յուրաքանչյուրն ունի տարբեր փորձություններ և մեզ օգնող տարբեր աղբյուրներ և մարդիկ:

Ոչ անդամները չեն կարող հասկանալ այնպիսի տերմիններ, ինչպիսիք են՝ «դարձ» և «վկայություն», բայց նրանք կհասկանան, որ յուրաքանչյուր անձնավորություն կարող է ընտրել ինչպես ապրել: Դուք կարող եք բացատրել, որ Երկնային Հայրը նախատեսել է դա, որ այդ ձևով լինի: Նա տվել է մեզ մեր ազատ կամքը, որպեսզի մենք հոգեպես կարողանանք աճել ընտրելով ճիշտը: Բայց Երկնային Հայրը գիտեր նաև, որ ամեն մեկը, բացի Հիսուս Քրիստոսից-սխալների կաներ, այնպես որ Նա տվել է Փրկիչ մեզ համար: Քավության շնորհիվ մենք կարող ենք ապաշխարել, ներվել, սովորել մեր սխալներից և առաջ շարժվել կյանքում:

Դուք կարող եք նաև բացատրել, որ մենք չենք դատում նրանց, ովքեր չեն հետևում Եկեղեցու չափանիշներին: Ընդհակառակը, մենք փորձում ենք օգնել նրանց, հասկանալ նրանց և համբերատար լինել նրանց հետ: Չնայած մենք չենք հանդուրժում մեղքը, մենք չենք դատապարտում մեղավորին (տես Հովհաննես Ը.11): Ապաշխարությունը դեռ հնարավոր է, մեզ բոլորիս համար:

### Ուսումնասիրեք սուրբ գրությունները



Հարցի պատասխանը կարելի է գտնել սուրբ գրություններում: Երբ մարդիկ չեն պահում պատվիրանները, մենք պետք է խուսափենք

դատապարտող լինելուց (տես Մատթեոս Է.1): Հռովմայեցիս Գ.23 հատվածն ասում է, «Որովհետև ամենքը մեղանչեցին, եւ Աստուծոյ փառքիցը պակասում են»: Մակայն, ճիշտ է, որ Եկեղեցու անդամները պետք է փորձեն հնազանդ լինել:

Մարդիսն Մ., 13 տարեկան, Տեխաս, ԱՄՆ

### Ուսուցանեք Քավության մասին



Երբ մարդիկ ավելի շուտ ասում են այսպիսի բաներ, քան մեղք գտնելով անդամի մեջ, ով չի հետևում կանոններին,

ես օգտագործում եմ այն որպես հնարավորություն՝ ուսուցանելու Քավության մասին: Ես ասում եմ նրանց, որ քանի որ մենք ուղղակի Մորմոն ենք, չի նշանակում մենք կատարյալ ենք, և որ մենք ունենք Քավությունը, որպեսզի ապաշխարենք մեր մեղքերից և ուղղենք այդ սխալները: Սա սովորաբար դուռ է բացում դեպի ավելի շատ հարցերի:

Ջեյդ Հ., 16 տարեկան, Օրեգոն, ԱՄՆ

### Եկեղեցին ուսուցանում է մեզ բարիք գործել



Ամենքի պես Եկեղեցու անդամներն էլ տանում են մարտահրավերներ և գայթակղություններ: Մենք բոլորս ունենք թուլություններ, բայց

դա չի նշանակում, որ այս Եկեղեցին ճշմարիտ չէ: Մա Հիսուս Քրիստոսի Եկեղեցին է, որն օգնում է մարդկանց իմանալ ճշմարիտ ավետարանը և ստանալ վեհացում:

Բնական մարդն է, որ չի հնազանդվում պատվիրաններին (տես Մոսիա 3.19), և դա Եկեղեցու մեղքով չէ: Եկեղեցին ուսուցանում է մեզ բարիք անել: Բայց մենք բոլորս ընտրություն ունենք:

*Լավինիա Մ., 19 տարեկան, Ֆիլիպիններ*

### Չափանիշները մեր երջանկության համար են



Այս հարցն իսկապես ճիշտ նպատակակետին է խփում ինձ համար, որովհետև ես գիտեմ մարդկանց, ովքեր կատարել են ընտրություններ, որոնք նրանց հեռացրել են ավետարանից: Տերը մեզ պատվիրաններ է տալիս մեր երջանկության համար և «իրականացնելու մարդու անմահությունն ու հավերժական կյանքը» (Մովսես 1.39): Տերն ուզում է, որ մենք վերադառնանք Իր մոտ, սակայն, Նա կամենում է, որ մենք կատարենք մեր իսկ ընտրությունները: Այդ պատճառով որոշ անձինք չեն ապրում մեր չափանիշներով: Չափանիշներն անձնապես ինձ օգնում են, որովհետև ես գիտեմ, որ Երկնային Հայրը դրանք տվել է ինձ, որպեսզի ես վերադառնամ և ապրեմ Նրա հետ և լինեմ երջանիկ: Դրանք իմ հանդեպ Նրա սիրտ ապացույցն են:

*Մորգան Դ., 18 տարեկան, Լանգուեդոք Ռուսսիոյն, Ֆրանսիա*

### Աղոթեք նրանց համար և այցելեք նրանց

Անդամները, ովքեր չեն ապրում մեր չափանիշներով, չեն կարող ունենալ Հիսուս Քրիստոսի վրա կենտրոնացած վկայություն: Մենք պետք է աղոթենք նրանց համար, որպեսզի նրանք փնտրեն Հոգու առաջնորդությունը և որ նրանք կարողանան ձեռք բերել իրենց իսկ վկայությունը: Մենք պետք է այցելենք այս մարդկանց և օգնենք նրանց գալ դեպի Քրիստոս:

*Անդրեա Կ., 13 տարեկան, Լիմա, Պերու*

### Եղեք օրինակ



Այս Եկեղեցին կարևոր է օգնելու մեզ կատարել մեր Երկնային Հոր պատվիրանները և ապրել Նրա հետ կրկին: Բայց հենց միայն այն պատճառով, որ ինչ որ մեկը պատկանում է Եկեղեցուն չի նշանակում, որ նա միշտ լավ անձնավորություն է լինելու: Նայեք այսօրվա ամբարշտությամբ և պղծություններով լցված մեր աշխարհին, չնայած աշխարհը լցված է մարդկանցով, ովքեր որոշել էին հետևել Հիսուս Քրիստոսին նախաերկրային կյանքում: Կարծում եմ լավագույն բանը, որ կարող ենք անել մեր ընկերների համար լավ օրինակ հանդիսանալն է:

*Կադեն Մ., 15 տարեկան, Յոտա, ԱՄՆ*

### Ապրենք մեր չափանիշներով



Ճիշտ ինչպես որևէ այլ կազմակերպություն կամ կրոն, կան որոշ մարդիկ, ովքեր ավելի նվիրված են կամ ավելի քիչ նվիրված: Մենք ուղղակի պետք է ապրենք մեր չափանիշներով մեր կարողությունների լավագույնով, հուսանք և աղոթենք, որ մյուսներն էլ նույն կերպ ապրեն:

*Մարեն Մ., 16 տարեկան, Արիզոնա, ԱՄՆ*



**ՏԵՍԵՔ ՈՒՐԻՆԵՆԵՐԻՆ ԱՅՆՊԵՍ, ԻՆՉՊԻՍԻՆ ՆՐԱՆՔ ԿԱՐՈՂ ԵՆ ԴՄՈՒՆԱԼ**

«Մենք պարտավոր ենք տեսնել մարդկանց ոչ թե ինչպիսին նրանք կան, այլ ինչպիսին նրանք կարող են դառնալ: Ես աղաչում եմ ձեզ մտածել նրանց մասին այս ձևով»:

**Նախագահ թոմաս Ս. Մոնտոն, «Տեսեք նրանց ինչպիսին նրանք կարող են դառնալ», Լիաոնա, Նոյ. 2012, 70:**

## ՀԱՋՈՐԴ ՀԱՐՑԸ

**Ես փորձում եմ վերահսկել իմ մտքերը, բայց այնքան շատ գայթակղություններ կան: Ինչպե՞ս կարող եմ ավելի մաքուր մտքեր ունենալ:**

Մինչև նոյեմբերի 15-ը, ուղարկեք ձեր պատասխանը և ցանկալի է բարձրորակ լուսանկարներ, [liahona@ldschurch.org](mailto:liahona@ldschurch.org) կամ Է-փոստով Էջ 3-ի հասցեին:

Հետևյալ տեղեկությունը և թույլտվությունը պետք է ներառված լինի ձեր Է-փոստի կամ նամակի մեջ. (1) լրիվ անունը, (2) ծննդյան թիվը, (3) ծովաբնակ ծնունդը, (4) ցիցը կամ շրջանը, (5) ձեր գրավոր թույլտվությունը և, եթե դուք 18 տարեկանից ցածր եք, ձեր ծնողի գրավոր թույլտվությունը (Է-փոստը ընդունելի է) ձեր պատասխանը և լուսանկարը տպագրելու համար:



**Երեց  
Ս. Սղոթ Գրորու**  
Յոթանասուկից

*Եպիսկոպոսի կոչման  
հատուկ մասն է կազմում  
ձեզ օգնելը, որ ապաշխարենք:  
Ձեր խիղճը կասի ձեզ, թե երբ  
պետք է խոսենք նրա հետ:*

**Դ**ուք երևի զարմանաք, թե ինչու պետք է խոստովանեք ձեր եպիսկոպոսին կամ ճյուղի նախագահին, երբ դուք լուրջ մեղքեր եք գործել: Դուք գուցե ինքներդ ձեզ ասեք. «Մի՞թե ապաշխարությունը անձնական հարց չէ իմ և Տիրոջ միջև: Եթե ես դադարեցրել եմ իմ սխալ վարքը և խոստովանել դա Աստծուն, ինչո՞ւ ես պետք է խոսեմ իմ եպիսկոպոսի հետ»:

#### **Ինչո՞ւ եպիսկոպոսը և ոչ թե որևէ մեկ ուրիշը:**

Շատ երիտասարդներ ավելի հարմար են զգում խոստովանել իրենց սխալները իրենց ծնողներին կամ երիտասարդների ղեկավարներին: Չնայած ձեր ծնողներն ու ղեկավարները կարող են ապահովել անհրաժեշտ աջակցություն և խորհուրդ, Տերը հայտարարել է, որ եպիսկոպոսն ընդհանուր դատավոր է Իսրայելում (տես Վևու 107.72, 74): Նա պարտականություն ունի որոշելու իր ծխի անդամների արժանավորությունը: Ձեռնադրման և արդար ապրելակերպի միջոցով եպիսկոպոսը լիազորված է հայտնություն ստանալու Մուրք Հոգուց այդ ծխի անդամների համար, ներառյալ ձեր համար:

Եպիսկոպոսը կարող է օգնել ձեզ ապաշխարության գործընթացի ժամանակ այնպիսի ուղիներով, որ ձեր ծնողները կամ մյուս



## ԻՆՉՈ՞Ւ ԵՎ ԻՆՉ ԵՍ ՊԵՏՔ Է ԽՈՍՏՈՎԱՆԵՄ ԻՄ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ:

ղեկավարները անկարող են ապահովել: Եթե մեղքը բավականին լուրջ է, նա կարող է որոշել, որ ձեր արտոնությունները Եկեղեցում սահմանափակվեն: Օրինակ, որպես ձեր ապաշխարության գործընթացի մաս, նա կարող է խնդրել ձեզ զերծ մնալ հաղորդությունը ճաշակելուց կամ որոշ ժամանակ քահանայությունը գործադրելուց: Նա կաշխատի ձեզ հետ և կորոշի, երբ եք դուք արժանի կրկին վերսկսել այդ սրբազան գործողությունները:

Ձեր եպիսկոպոսը խորհուրդ կտա ձեզ այն մասին, թե ինչ անել գալթակությունը դիմադրելու ձեր ունակությունը գործացնելու համար:

Նա կարող է խրախուսել ձեզ ուսումնասիրել որևէ վարդապետական թեմա, օրինակ՝ ապաշխարությունը, իսկ հետո կիսվել իր հետ ձեր սովորածով: Նա կարող է խնդրել ձեզ հանդիպել իր հետ ամեն շաբաթ, հաղորդելու իրեն, թե ինչ եք դուք անում, որպեսզի ձեզ հեռու պահեք գայթակղիչ իրավիճակներից:

#### **Ե՞րբ պետք է ես խոսեմ նրա հետ:**

Դուք գուցե մտածեք «Ամեն ինչ լավ է, բայց ինչպես կարող եմ իմանալ, թե այն ինչ արել եմ բավականին լուրջ է, որ ես պետք է խոսեմ եպիսկոպոսի հետ»: Կարճ

պատասխանն է. «Ձեր խիղճը կասի ձեզ»: Երբ դուք խղճի խայթ զգաք, անմիջապես գործի անցեք (տես Ավա 34.31-34):

Ապաշխարության վերաբերյալ Թագավոր Բենյամինը սովորեցրել է. «Ես չեմ կարող ասել ձեզ բոլոր բաները, որոնցով դուք կարող եք մեղք գործել. Քանզի կան զանազան ուղիներ և միջոցներ, նույնիսկ այնքան շատ, որ ես չեմ կարող թվել դրանք» (Մոսիա 4.29): Այսպիսով, փոխարեն ձեզ տալու մի մանրամասն ցուցակ այն բաների, որոնք դուք պետք է խոստովանեք ձեր եպիսկոպոսին, թույլ տվեք կիսվել որոշ սկզբունքներով, որոնք ձեզ կօգնեն ընդունել այդ որոշումը:

### Ի՞նչ պետք է խոստովանեմ:

Ես գիտեմ, որ դուք փորձել եք հնազանդ լինել, բայց գուցե դուք կատարել եք որոշ սխալներ, նույնիսկ որոշ լուրջ սխալներ: Մարդկանց կատարած սխալների մեծ մասը կարող են լուծվել անձնական աղոթքի և անկեղծ ապաշխարության միջոցով: Որոշ սխալներ, հատկապես նրանք, որոնք վերաբերում են անբարոյականությանը, պահանջում են խոստովանություն եպիսկոպոսին, նախքան կկարողանաք ստանալ Տիրոջ ներումը:

Երբ մտածեք ձեր կատարած սխալների մասին, դուք գուցե մեղավոր զգաք, անհանգիստ, դժբախտ կամ նույնիսկ՝ թշվառ: Եթե դուք զգում եք այս զգացումներից որևէ մեկը, ապա դուք հավանաբար պետք է խոսեք ձեր եպիսկոպոսի հետ այդ սխալների մասին:

Մի փորձեք ներել ձեզ կամ արդարացնել ձեր մեղքը: Դուք գուցե մտածեք. «Դա մեծ ամոթ է պատմել եպիսկոպոսին իմ արարքի մասին: Նա կարծում է ես ավելի լավ անձնավորություն եմ, քան կամ: Նա կցնցվի, եթե ես պատմեմ նրան, թե ինչ եմ արել: Նա ինձ այլևս չի սիրի»:

Ես խոստանում եմ ձեզ՝ նա ձեզ չի դատապարտի: Որպես Տիրոջ ծառա նա կլինի բարի և հասկացող, երբ նա լսի ձեզ: Ապա նա կօգնի ձեզ ապաշխարության գործընթացի ընթացքում: Նա Տիրոջ ողորմածության սուրհանդակն է՝ օգնելու ձեզ մաքուր դառնալ Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով:

Տերն ասել է. «Ահա, ով որ ապաշխարել է իր մեղքերից, նա ներվում է, և ես՝ Տերս, այլևս չեմ հիշում դրանք»:

Այս բանով դուք կարող եք իմանալ, թե արդյոք մարդն ապաշխարում է իր մեղքերից,՝ ահա նա կխոստովանի և կթողնի դրանք» (Վևու 58.42-43):

Երբ դուք խոստովանեք ու թողնեք ձեր մեղքերը, Տերը կների ձեզ: Դուք ստիպված չեք լինի հաշիվ տալ Նրան այդ մեղքերի համար, երբ ժամանակը գա ձեզ համար դատվելու:

### Իսկ ի՞նչ կլինի, եթե չապաշխարեմ

Երբեմն մարդը կարող է դադարել սխալ գործելուց, բայց երբեք իր եպիսկոպոսին չխոստովանել, երբ դա անհրաժեշտ է: Որպես հետևանք, մարդը շարունակում է միայնակ կրել մեղքի բեռը, փոխարենը թույլ տալու, որ Փրկիչը վերցնեք բեռը:

Թույլ տվեք մի օրինակ բերել: Մի երեկո մի քանի տարի առաջ ես հարցազրույց էի անցկացնում չափահասների հետ իրենց տաճարային երաշխավորագրի նորացման համար: Մի միջահասակ կին ներս մտավ հարցազրույցի: Նա ամուսնացել էր տաճարում և ակտիվ էր եկեղեցում իր ողջ կյանքում:

Ես զգացի մի խորը տխրություն նրա հոգում: Երբ հարցազրույցն առաջ էր ընթանում, ես ստացա մի հոգևոր տպավորություն: Ես ասացի նրան. «Քույր, ես այնպիսի

տպավորություն ունեմ, որ դուք մի լուրջ սխալ եք գործել, երբ դուք դեռահաս տարիքում եք եղել, որը դուք չեք խոստովանել որևէ քահանայության ղեկավարի: Կկամենա՞լիք պատմել ինձ դրա մասին»:

Նա անմիջապես սկսեց արտասվել: Նա ասաց, որ դա ճիշտ էր, բայց նա միշտ ամաչել էր խոստովանել դա որևէ եպիսկոպոսի: Երբ նա խոստովանեց այն, ինչ արել էր, նա կիսվեց բավականաչափ մանրամասներով, որպեսի ես որոշեի նրա արժանավորությունը:

Նրա մեղքի խոստովանությունը քահանայության ղեկավարին նշեց նրա ապաշխարության գործընթացի ավարտը, ոչ թե սկիզբը: Նա անհարկի կրել էր այդ մեղքի բեռն ու վիշտը ավելի քան երեսուն տարի:

Քանի որ նա ավարտեց ապաշխարության վերջնական քայլը, նրա հանցանքը վերացվեց: Ես երբեմն տեսել եմ նրան այդ հարցազրույցի երեկոյից հետո: Նրա դեմքի արտահայտությունը պայծառացել էր, և նա երջանիկ էր:

Ես կամենում եմ, որ դուք իմանաք, որ ես չեմ հիշում նրա անունը: Տերը կարող է վերացնել այդպիսի հիշողությունները եպիսկոպոսներից: Այն ինչ հիշում եմ այն է, որ իր քահանայության առաջնորդին կատարած խոստովանության միջոցով միջին տարիքի այդ կինը հանգստացավ մեղքի իր զգացումից, որը նա կրել էր շատ տարիների ընթացքում:

Խնդրում եմք մի գործեք այդ սխալը: Եթե դուք ունեք մեղավորության զգացում, բայց համոզված չեք, թե կարիք կա խոստովանելու ձեր եպիսկոպոսին, զնացեք և տեսեք նրան: Թույլ տվեք, որ նա օգնի ձեզ: Ռիսկի մի դիմեք կրելով անհարկի բեռ ձեր կյանքի ընթացքում, որը ձեզ կպահի թշվառության զգացումով: Ձեր եպիսկոպոսին



արված խոստովանության և ապաշխարության միջոցով, Տերը կբարձրացնի այդ բեռը ձեր հոգուց (տես Եսայիա Ա.18):

### Ինչո՞ւ ես կարիք ունեմ ապաշխարելու

Հիսուս Քրիստոսը վճարեց ողջ մարդկության մեղքերի գինը Իր քավող գոհաբերությամբ: Նա հրավիրում է ձեզ՝ ապաշխարել և ազատվել ավելնորդ վշտից ու տառապանքից: «Ապաշխարի՛ր, չլինի թե . . . քո տառապանքները լինեն դառը, – որքան դառը, դու չգիտես, որքան սուր, դու չգիտես, այո, որքան ծանր՝ տանելու, դու չգիտես:

Քանզի ահա, ես՝ Աստվածս, տառապել եմ այս բաները բոլորի համար, որպեսզի նրանք չտառապեն, եթե ապաշխարեն:

Բայց եթե չապաշխարեն, նրանք պետք է տառապեն, ճիշտ ինչպես ես:

Ուստի, ես կրկին պատվիրում եմ քեզ ապաշխարել, . . . և որ դու խոստովանես քո մեղքերը, չլինի թե դու կրես այն պատիժները, որոնց մասին ես ասացի» (ՎՆՈՒ 19.15–17, 20):

Ես վկայում եմ, որ Իր տառապանքի միջոցով Հիսուս Քրիստոսն արդեն վճարել է գինը մեղքերի համար: Դուք կարող եք ներվել, որքանով որ դուք կապաշխարեք: Մի փորձեք վճարել գինը ձեր մեղքերի համար: Ձեր սեփական տառապանքի ոչ մի քանակություն չի փրկագնի ձեզ: Միայն Քավության միջոցով է, որ դուք ներում եք ստանում:

Թող որ դուք գործադրեք հավատք առ Հիսուս Քրիստոս և Նրա Քավությունը: Ես վկայում եմ Հիսուս Քրիստոսի անունով, որ ապաշխարության, ներառյալ անհրաժեշտության դեպքում ձեր եպիսկոպոսին խոստովանելու միջոցով դուք կդառնաք մաքուր: Բացի այդ Փրկչի շնորհի միջոցով, Նրա իրավագործող ուժով, դուք կարող եք գորացվել ձեր ունակության մեջ՝ դիմադրելու գայթակղությանը ապագայում: Այսպիսով, դուք կունենաք մտքի խաղաղություն և երջանկություն այս կյանքում, և դուք կժամանակեք հավերժական կյանք գալիք աշխարհում: ■



### ՄԵՐ ՄԵԾ ԲԺԻՇԿԸ

«Փրկիչը հաճախ հիշատակվում է որպես Մեծ Բժիշկ: . . . Հանցանքը մեր հոգու համար նույնն է,

ինչ ցավը մեր մարմնի համար՝ վտանգի նախազգուշացում և պաշտպանություն լրացուցիչ վնասից: Փրկչի Քավությունից հորդում է հանգստացնող բալասան, որը կարող է բժշկել մեր հոգևոր վերքերը և վերացնել հանցանքը: Այնուամենայնիվ, այս բալասանը կարող է կիրառվել միայն Տեր Հիսուս Քրիստոսի հավատքի սկզբունքների միջոցով, ապաշխարության և հետևողական հնազանդության միջոցով: Անկեղծ ապաշխարության արդյունքն է՝ խղճի խաղաղություն, հանգստություն և հոգևոր բժշկություն և նորացում:

Ձեր եպիսկոպոսը կամ ճյուղի նախագահը հոգևոր բժշկի օգնականն է, որը լիազորված է օգնել ձեզ ապաշխարել և բժշկվել»:

Երեց Դեյվիդ Ա. Բեդնար Տասներկու Ուսուցյալների Քվորումից, «Մենք հավատում ենք մաքրաբարո լինելուն», *Լիահոնա*, մայիս 2013, 44:



Երեց Օ. Վիստենթ Հալեր  
Յոթանասունից

# Ներս հրավիրել Փրկչին

«Միս ես դուան առաջին կանգնած եմ եւ թակում եմ. Եթե մէկը լսէ իմ ձայնը եւ դուռը բանայ, ես կ'մտնեմ նորա մօտ» (Հայրնություն Գ.20):

Երբ ես փոքրիկ տղա էի Սուրբ Ծննդի ժամանակ մայրս դնում էր դուռը թակող Փրկչի նկարը: Մենք դեռ Եկեղեցու անդամ չէինք, և ես միշտ հարցնում էի. «Ինչո՞ւ է Փրկիչը թակում դուռը: Ո՞վ է հակառակ կողմում»:

Մի քանի տարի անց ես հայտնաբերեցի, որ Փրկչի թակող դռան դրսի կողմում բռնակ չկար: Մարդը, որ ներսում էր, պետք է ինքը բացեր դուռը: Այժմ ես գիտեմ, թե ով է դռան հակառակ կողմում: Մենք ենք: Փրկիչը թակում է, և մենք բոլորս պետք է բացենք դուռը և Նրան ներս հրավիրենք մեր կյանք:


Երբ ես պատանի էի, ես որոշեցի ներս հրավիրել Փրկչին իմ կյանք՝ մկրտվելով և դառնալով Եկեղեցու անդամ: Իմ ընկերները լավ օրինակ էին ինձ համար: Նույնպես և իմ տատիկը: Նա

տաճարային աշխատող էր Լոս Անջելես Կալիֆոռնիա Տաճարում: Նա սովորաբար տնից դուրս էր գալիս առավոտյան ժամը 4:00 ծառայելու Տիրոջը տաճարում:

Իմ մկրտվելուց երկու տարի անց, ես որոշեցի, որ ցանկանում էի ծառայել Տիրոջը որպես լիաժամկետ միսիոներ: Իմ միսիայի ժամանակ ես օգնեցի շատ մարդկանց իմանալ Փրկչի մասին, որպեսզի նրանք կարողանային հրավիրել Նրան իրենց կյանք:

Հետագայում ես ծառայեցի որպես Սամուայի միսիայի նախագահ: Ես միշտ հարցնում էի նոր միսիոներներին, թե երբ էր, որ նրանք որոշեցին միսիա ծառայել: Շատերն ասացին, որ իրենք Երեւանի Միությունում էին, երբ որոշեցին ծառայել:

Երեւանի Միությունը կօգնի ձեզ նախապատրաստվել ծառայությանը: Սովորեք որքան հնարավոր է շատ: Նպատակ դրեք միսիա ծառայել: Այդ ժամանակ դուք էլ հնարավորություն կունենաք օգնել մարդկանց՝ հրավիրել Փրկչին իրենց կյանք: Միսիոներ լինելը կփոխի ձեր կյանքը, այն փոխեց իմը: ■



# Միանգամայն նոր

Հաղորդությունը բաժանելը մեծ պատասխանատվություն է:  
Ի՞նչ կպատահեր, եթե նա գործը փչացներ:

Ջեյն Մաքքրայդ Չոուս

Հիմնված է իրական պատմության վրա

*«Եվ նաև, բոլոր նրանք, ովքեր  
ընդունում են այդ քահանայու-  
թյունը, ընդունում են ինձ, ասում  
է Տերը» (ՎԼՈՒ 84.35):*

**Բ**ենջին կանգնել էր հա-  
յելու առջև, ուղղելով իր  
փողկապը: Նրա ճերմակ  
վերնաշապիկը և մուգ կապույտ  
տաբատը կատարելապես սազում  
էին: Նրա մազերը սանրված էին:  
Նա որոշակորեն պատրաստ էր  
երևում սարկավագ ձեռնադրվելու  
համար: Ուրեմն ինչո՞ւ էր այդպես  
լարված զգում:

Բենջին արագ վերցրեց սուրբ  
գրքերը և թողեց սենյակը: Նա  
փորձեց չմտածել այն մասին,  
թե որքան տարբեր կլինեին  
գործերն այսօր եկեղեցում: Եվ  
հետո քահանայության նոր  
պարտականությունն էր, որ ան-  
հանգստացնում էր նրան, երբ  
որ նա մտածում էր այդ մասին՝  
հաղորդությունը բաժանելը: Իսկ  
ինչ կպատահեր եթե նա սխալ  
գործեր իր առաջին անգամվա  
ընթացքում հաջորդ շաբաթ: Նա  
փորձեց այդ մասին ևս մոռանալ,  
երբ նա դուրս եկավ տնից:

Հաղորդության ժողովը նույն  
ձևով գնաց ինչպես միշտ: Բայց  
հետո Բենջին քայլեց իր ընտա-  
նիքի հետ դեպի Եպիսկոպոս  
Մալազարի գրասենյակը: Մա



# սարկավագ



«Եթե դուք՝ սարկավագները . . . մեծարեք ձեր կոչումները, դուք գործիքներ կլինեք Աստծո ձեռքերում նույնիսկ հիմա, քանզի քահանայությունը պատանու մեջ ճիշտ նույնքան հզոր է, ինչպես քահանայությունը տղամարդու մեջ, եթե գործադրվում է արդարակեցությամբ»:

Երեց Թեղ Ռ. Զալիսթեր, Յոթանասուկից, «Քահանայության գործությունը պատանու մեջ», *Լիառուս*, մայիս 2013, 54:

որոշակիորեն տարբեր էր: Սովորաբար նա Երեխաների Միության ժողովի բացող մասին էր մասնակցում հենց այժմ:

Բենջին նստեց և Հայրիկը, եպիսկոպոսը, Երիտասարդ Տղամարդկանց նախագահը և եպիսկոպոսության խորհրդականները դրեցին իրենց ձեռքերը նրա գլխին: Հայրիկը նրան Ահարոնյան Քահանայություն շնորհեց: Օրհնության ժամանակ Բենջիի լարվածությունն անցավ: Նա հանգիստ և երջանիկ զգաց:

Բենջին կանգնեց և սեղմեց բռնի ձեռքը: Ապա նա գրկախառնվեց Մայրիկի և իր եղբայր Զեյի և իր փոքրիկ քույրիկի՝ Միրասուլի հետ:

Հետո նա գնաց Կիրակնօրյա Դպրոց: Չնայած նոր դասերը նույնը չէին ինչ որ Երեխաների Միությունում էին, դրանք դեռևս ծանոթ էին թվում: Դասը աղոթքի մասին էր: Նա շատ դասեր էր ունեցել Երեխաների Միությունում: Բենջին հանգստացած շունչ քաշեց: Գուցե սարկավագ լինելն այնքան էլ դժվար չի լինի:

«Դա հիանալի կլինի», - Բենջիին ասաց Զեյը եկեղեցուց հետո: «Ես կօրհնեմ հաղորդությունը, իսկ դու կբաժանես»:

Բոլոր երկյուղները միանգամից վերադարձան: «Այո, հիանալի է», - հանգիստ ասաց նա:

Հաղորդությունը բաժանելը հենց այն էր, ինչից Բենջին ամենաշատն էր անհանգստանում:

Այդ գիշեր Բենջին հայրիկին տեսավ բազմոցին նստած կարդալիս: «Ի՞նչ կլինի, եթե ես բաց թողնեմ որևէ մեկին և նրանք հաղորդությունը չստանան», հարցրեց նա: «Ի՞նչ կլինի, եթե ես սայթաքեմ»: Նա տեսավ դա հստակ ինչպես կեսօրին իր մտքում, սկուտեղը հատակին շրխկալիս և ջրով լի բաժակները տարբեր կողմեր թռչելիս:

Հայրիկը սեղմեց Բենջիի ուսը. «Ես հիշում եմ երբ առաջին անգամ բաժանեցի հաղորդությունը: Ես երևի ավելի լարված էի, քան դու հենց հիմա»:

Բենջին զարմանքից թարթեց աչքերը: «Դո՞ւ: Դու ոչնչից չես վախենում»:

Հայրիկը ծիծաղեց: «Ես վախեցել եմ շատ անգամներ: Գիտե՞ս ինչն ինձ օգնեց հաղթահարել լարվածությունս»:

Բենջին մի պահ մտածեց.

«Աղո՞թքը»:

Հայրիկը ժպտաց: «Ճիշտ է: Աղոթքը: Եվ հայրս ինձ օրհնություն տվեց: Կուզե՞նաս, որ քեզ օրհնություն տամ»:

Բենջին արագ գլխով արեց.

«Այո, շատ եմ ուզում»:

Ընտանիքը հավաքվեց ճաշասենյակում: Հայրիկը դրեց

իր ձեռքերը Բենջիի գլխին: Երբ Հայրիկը խոսեց, Բենջին զգաց, որ արցունքներ սկսեցին հայտնվել: «Հիշիր, - ասաց հայրիկն օրհնության մեջ, - դու ստացար քահանայությունը սրբազան արարողության միջոցով: Երկնային Հայրը տվել է մեզ քահանայություն, որպեսզի մենք կարողանանք ծառայել ուրիշներին: Եթե դու անես դա սրտի ողջ նվիրվածությամբ, դու կօրհնվես սրանում և բոլոր բաներում»:

Ողջ շաբաթ Բենջին աղոթեց օգնության համար: Հետևյալ կիրակի, աղոթատան առջևում նա միացավ սարկավագներին: Նա մոտիկից լսեց, թե ինչպես Զեյն ասաց հացի օրհնությունը:

Հանկարծ նա կրկին անհանգստացավ: Արդյո՞ք կարող էր անել այդ: Դա այնքան կարևոր էր: Այնուհետև նա հիշեց հայրիկի օրհնության խոստումները: Նրա անհանգիստ զգացումները վերացան, երբ Հոգին իջավ նրա վրա:

Նա վերցրեց սկուտեղը և վստահորեն մոտեցավ իրեն հանձնարարված շարքերին: Զգուշորեն նա տվեց սկուտեղը առաջին շարքում նստած մի կնոջ:

Նա ժպտաց նրան: Բենջին նրան պատասխանեց ժպիտով, գիտենալով, որ նա ծառայում էր Տիրոջը: ■

# Մալախով

## Վիներ Քվորթերսում

Վիներ  
Քվորթերս

ԱՅՈՎԱ

ԱՅՈՎԱՅԻ ՀԵՏՔԵՐՈՎ


Նավու

Ջենիֆեր Մադդի

Նոր քաղաք

Մարգարե Ջոզեֆ Մմիթի սպանվելուց հետո, Նավուն, Իլլինոյս, դարձավ վտանգավոր քաղաք: Սրբերը փախչում էին իրենց տներից ապրելու ավելի ապահով վայր գտնելու համար: 1846 թվականի փետրվարին Սրբերի առաջին խումբը սկսեց իր գաղթը դեպի արևմուտք, բայց վատ եղանակը և հիվանդությունները դանդաղեցրեցին նրանց երթը: Մինչ նրանք անցան Այովան, խիստ ուշ էր այդ տարվա համար նախքան ձմեռը Ռոքի լեռները անցնելու համար: Այսպիսով, Եկեղեցու ղեկավարներն ընտրեցին մի տեղ, որտեղ Սրբերը կկարողանային մնալ ձմռան ընթացքում:

Այս ցուցափեղկը Մորմոնների Հետքերով Կենտրոնի ներսում Վիներ Քվորթերս քաղաքում վերաստեղծում է Այովայի հետքերով ճամբարը, որտեղ Վիլյամ Զլենթոնը գրեց «Եկեք Սրբեր» օրհներգը (Հիմներ և մակական երգեր, էջ 2):





Նրանք անվանեցին այն Վինթեր  
Քվորթերս:

## Աշխատելով միասին

Որոշ մարդիկ տներ կառուցեցին գերաններից կամ ճիմահողից: Մյուսներն ապրում էին վրաններում և քարայրներում: Մրբերը փորձում էին երջանիկ լինել երկար, ցուրտ ձմռան ընթացքում: Նրանք օգնում էին միմյանց: Նրանք գնում էին համերգներ և երգում էին ու պարում: Նրանք կառուցեցին այրաղաց,



**Սրբերից մի քանիսը  
կառուցեցին գերա-  
նաշեն տնակներ  
ապրելու համար, մինչ  
նրանք գտնվում էին  
Վինթեր Զվորթերսում:**

քաղաքային դահլիճ և զամբյուղ-  
ներ գործող ֆաբրիկա:

## Առաջ շարժվելով

Մրբերի համար Վինթեր Քվորթերսում անցկացրած ժամանակը դժվարին էր: Շատ մարդիկ մահացան: Բայց ռահվիրաները հավատք ունեին, որ Տերը կօրհներ իրենց և կօգներ դառնալ Սիոն: Երբ գարունը վերջապես եկավ, ռահվիրաների առաջին խումբը թողեց Վինթեր Քվորթերսը՝ ճանապարհորդելու դեպի Սուրբ Լեյքի հովիտ:

**Մորմոնների Հետքերով Կենտրոնում  
դուք կարող եք տեսնել պաշարների այն  
տեսակները, որոնք Սրբերը վերցնում էին  
իրենց հետ դեպի արևմուտք կատարած  
ճանապարհորդության ժամանակ: Եկե-  
ղեցու դեկավարներն ասում էին նրանք  
իրենց հետ վերցնել այլուր, համեմունք-  
ներ, բրինձ, լոբի և կաթնատու կովեր:**



Այսօր դուք կարող եք տեսնել գեղեցիկ Վիկթոր Քվորթերսի Նեբրասկայի Տաճարը և կարող եք այցելել Մորմոնների Հետքերով Կենտրոնը Վիկթոր Քվորթերսում՝ ավելի շատ բան իմանալու ռահվիրաների մասին: ■



# Մրբերը կանգ են առնում Վինթեր Քվորթերսում

Արի Վան Դե Գրաաֆ

Պիոներները որոշ ժամանակ բնակվեցին Վինթեր Քվորթերսում սպասելով մինչև որ ձմեռն անցներ, նախքան կշարունակելն իրենց գաղթը դեպի արևմուտք: Տեսե՞ք թե կարող եք գտնել թաքցված առարկաներն այս նկարում:



Մատիտ



Մի կտոր  
կարկանդակ



Կաթսա



Գդալ



Շերեփ,  
գոգաթիակ



Գիրք



Պտուտա-  
կաբանալի



Բաժակ



Վիրակապ



Կեղի



Գազար



Սառնաշաքար



Ստել



Նայել



Տանձ




**Երեց Դ. Թոդ  
Քրիստոֆերսոն**

Տասներկու  
Առաքյալների  
Բվորումից

*Տասներկու Առա-  
քյալների Բվորումի  
անդամները Վիտուս  
Քրիստոֆի հատուկ  
վկաներն են:*

# Ինչպե՞ս է Հիսուս Քրիստոսը խոսում նաբոգարեաների հետ:


Նա կարող է սուրհանդակ  
ուղարկել կամ հայտնվել  
անձամբ:



Նա կարող է  
խոսել Իր իսկ  
ձայնով կամ  
Սուրբ Հոգու  
ձայնով:



Նա կարող է խոսել Իր ծառա-  
ների հետ անձնապես կամ  
Նա կարող է խոսել Նրանց  
հետ, երբ Նրանք խորհրդակ-  
ցում են միասին:



«Քրիստոսի Վարդապետությունը»,  
Լիստոնա, մայիս 2012, 86–90:

Ինչպե՞ս  
կարող էր  
Էմման բարի լինել,  
երբ Վիոլեթն  
այդքան չար  
էր:

# Օգնել

## Շաղկոտ Ման Շեփարդ

Հիմնված է իրական պատմության վրա

«Միդիոն քո ընկերին քո անձի պէս»  
(Մարկոս ԺԲ, 31):

**Է**մման ամուր բռնեց իր ուսապարկը, երբ ներս մտավ իր նոր դասասենյակը: Դա դպրոցական առաջին օրն էր: Նա հագել էր իր սիրելի զգեստը և մայրիկը հատուկ հյուրասիրություն էր դրել նախաճաշի հետ՝ կենդանիների պատկերներով կռեկերներ:

«Այսօր ամեն ինչ հիանալի է լինելու,- մտքում մտածեց Էմման,- եթե միայն»

Էմման կանգ առավ և նայեց դասասենյակին: Ահա և նա:

Վիոլեթը:

Անցած տարի Վիոլեթը ամեն ընդմիջմանը ճոճվում էր երկաթաձողերից բռնած: Նա Էմմային անուններ էր կպցնում: Նա նույնիսկ զոդացել էր Էմմայի լավագույն ընկերուհուն:

Վիոլեթը տեսնելով Էմմային լեզու ցույց տվեց: Էմման կատաղի նայվածք նետեց իր ուսապարկը էլ ավելի ամուր բռնելով: Վիոլեթը անբարյացակամ էր եղել անցած ողջ տարին և թվում էր այս տարի որևէ տարբերություն չէր լինելու:

«Բարի գալուստ նոր ուսումնական տարի, դասարան», - ասաց Միս Քոլդուելը սենյակի հանդիպակաձ կողմից,- Եկեք նշանակենք նստատեղերը:

Դասասենյակում նստարանները դրված էին երկուական շարքերով: Միս Քոլդուելը մատը

սահեցրեց ցուցակի վրայով, ապա մատնացույց անելով վերջի մի զույգ նստարաններն ասաց. «Էմմա, դու կնստես այ այնտեղ, վերջում»:

Էմման նստեց հետևի նստարաններից մեկին: Նա հույս ուներ Լիզելը կնստեր իր կողքին: Կամ Ջեյմը: Կամ —

«Վիոլեթ»:

Էմմայի գլուխն առաջ ձգվեց: Միթե՞ ճիշտ էր լսել:

Այո: Միս Քոլդուելը դեռ մատնացույց էր անում իր կողքի նստարանը: «Դու կլինես Էմմայի հարևանը, Վիոլեթ», ասաց նա:

Վիոլեթը հոնքերը կիսած դժկամությամբ քայլեց դեպի Էմման: Էմման գլուխը դրեց իր նստարանին և սևեռեց հայացքը պատին: Դա երկար տարի էր լինելու:

Մաթեմատիկայի ժամին Միս Քոլդուելը գրատախտակին մի քանի խնդիրներ գրեց, որպեսզի դասարանը լուծեր: «Դուք կարող եք աշխատել միայնակ կամ ձեր հարևանի հետ», ասաց նա:

Էմման արագ կռացավ իր թղթի վրա, ձևացնելով, որ զբաղված էր: Խնդիրները բավականին հեշտ էին:

Նա ուղղակի ձգտում էր խուսափել Վիոլեթից: Նա ոչ մի անգամ չնայեց նրան ողջ առավոտվա ընթացքում:

Ինչ որ բան բոթեց նրան ուսից: Դա մատիտի հպման էր նման: Էմման անտեսեց այն:

Մեկ ուրիշ բոթում: Վիոլեթը բոթում էր նրան: Էմման շարունակում էր համառորեն աշխատել:

Վիոլեթի երրորդ բոթումը բավականին ուժեղ էր, որ ցավ պատճառեց: Էմման ներսից զգում էր, որ բարկությունից եռում էր: Ինչ է, ամբողջ տարին այսպե՞ս էր լինելու: Նա մտածեց ձեռք բարձրացնի



# Վիտլերթին

և ասի Միս Քուդուելին: Կամ կարող էր մեկ անգամ էլ հայացք գցել Վիտլերթին:

Ապա Էմման լսեց, որ ինչ որ մեկը քիթը վեր էր քաշում: Միթե՞ ինչ որ մեկը լալիս էր: Մատիտը նորից նրան բռնեց: Նա վեր նայեց և տեսավ Վիտլերթին իրեն էր նայում: Նրա մատիտն իր ձեռքում էր և նրա աչքերում արցունքներ էին: Նրա թուղթը ծածկված էր ռետինի ջնջումներով:

Վիտլերթը պտտացնում էր մատիտը իր ձեռքում: «Կարո՞ղ ես օգնել ինձ», - հարցրեց նա մեղմորեն:

Էմման մի պահ նրան նայեց ցնցված: Վիտլերթը ուզում էր, որ ինքն օգնե՞ր նրան: Այդքան անբարյացկամ լինելուց հետո՞: Էմման ետ դարձավ իր սեփական թղթին: Վիտլերթը կարող էր միայնակ աշխատել: Նա արժանի չէր Էմմայի օգնությանը, նույնիսկ եթե նա . . .

. . . իր հարևանն էր:

Էմման լուռ երեսը շրջեց: Նա լսում էր, թե Վիտլերթն ինչպես էր լալիս իր կողքին: Մուրֆ գրքերը միշտ ասում են, որ սիրենք մեր հարևանին, բայց Վիտլերթը տարբեր էր: Էմման նստում էր նրա հարևանությամբ միայն դասարանում:

Էմման շարունակեց իր աշխատանքը: Ապա կանգ առավ: Գուցե Վիտլերթը տարբեր չէր: Գուցե, երբ սուրբ գրքերն ասում են սիրեք ձեր հարևանին, նրանք ի նկատի ունեն ամենքին: Նույնիսկ անբարյացակամներին: Նույնիսկ եթե դա դժվար էր:

Էմման հառաչեց և դանդաղ վայր դրեց իր մատիտը: Նա

շրջվեց դեպի Վիտլերթը և իր ողջ ուժով փորձելով ժպտալ հարցրեց. «Կարո՞ղ եմ օգնել»:

Վիտլերթը գլխով արեց, ձեռքով սրբելով իր արցունքները:

Էմման թեքվեց Վիտլերթի թղթի վրա և սկսեց օգնել լուծելու առաջին խնդիրը: Նա արդեն մի ջերմ զգացում ուներ իր ներսում: Նրան արդեն հետաքրքրում էր, թե Վիտլերթն արդյոք սիրում էր կռեկերներ: ■



## ՀԵՏԵՎԵԼ ՀԻՍՈՒՍԻՆ

Հիսուսը կամենում է, որ մենք սիրենք բոլորին: Մուրֆ գրքերում Նա սովորեցնում է մեզ սիրել մեր ընտանիքին և ընկերներին և նրանց բարյացակամորեն վերաբերվել: Հիսուսը նաև ուսուցանել է. «Սիրեցեք ձեր թշնամիներին, օրհնեցեք ձեզ ակիժողներին. Բարի արեք ձեզ ատողներին» (Մատթեոս Ե. 44): Սա կշանակում է, որ եթե նույնիսկ ինչ-որ մեկը սիրալիկ չէ ձեր հանդեպ, դուք կարող եք հետևել Հիսուսին՝ լինելով բարի և փորձելով լինել ընկեր:

ՆԱԽԱԳԻՐՈՒՄԵՆԸ ԲՈՒՄ ԹԵՄԻՆ: ՏԵՐ ՀՆՈՒՄ ՁՈՂՆԵՐԸ, ԴԵՂ ԹԱՆՈՒՄ Թ





# Ես կկիսվեմ ավետարանով Աստծո բոլոր զավակների հետ

ՁԱՆՆԱԿԱՆԱՅՈՒՄԸ: ՄԱՐԿ ԶԱՐԻԱՆ, ՄԱՐԿ՝ ՓԱՍՏԱՆՈՒՅՈՒՄԸ ՈՐՈՇՈՒՄԸ  
ՎԵՐԿ՝ ՁԱՆՆԱԿԱՆԱՅՈՒՄԸ: ՁԱՆՆԱԿԱՆԱՅՈՒՄԸ, ՁԱՆՆԱԿԱՆԱՅՈՒՄԸ, ՁԱՆՆԱԿԱՆԱՅՈՒՄԸ  
ԲԵՐԵՆՔԱՆԻ: ԷՐԿ ԲԱՐՈՒՆԵՐԻ ԵՎ ՍԵՆՍԵ: ՄԱՐԿ

## ԲԱԺԱՆՔԸ ԶԱՐՏԵՐ

Դուք կարող եք կիսվել ավետարանով՝ տալով փոխանցվող բացիկներ: Ուղղակի սոսնձեք հաջորդ էջի բացիկները ստվարաթղթի վրա: Այնուհետև կտրեք բացիկները և հակառակ կողմում գրեք ձեր ուղերձը:

## ԵՐԳ ԵՎ ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆ

- "We'll Bring the World His Truth," *Children's Songbook*, 172–73
- Մատթեոս Ե.16:

## ԵԿԵՔ ԽՈՍԵՆՔ

Կարող եք ընտանիքի յուրաքանչյուր անդամի հանձնարարել նկարել իր սիրելի պտուղը: Ապա նկարի ետևում յուրաքանչյուր մարդ կարող է գրել, թե ինչպես է ավետարանն օրհնել իր կյանքը: շնորհ կարող եք խոսել միասին այն ուղիների մասին, թե ինչպես կարող եք կիսվել ավետարանով ընկերների և հարևանների հետ:

Դուք երբեք կերե՞լ եք ինչ որ բան, որն այնքան համեղ լիներ, որ դուք կամենայիք կիսվել դրանով: Մարգարե Լեքին մի անգամ երազ տեսավ, որ նա ուտում էր մի համեղ պտուղ: Այն այնքան լավ համ ուներ, որ «ցրեց [նրա] հոգին չափազանց մեծ ուրախությամբ» (1 Նեփի 8.12): Լեքին կամեցավ, որ իր ընտանիքը ևս ճաշակեր այդ համեղ պտուղից:

Լեքիի երազի պտուղը նման է Երկնային Հոր սիրուն: Լեքին ուզում էր, որ իր ընտանիքը զգար Երկնային Հոր սերը: Նա ուզում էր կիսվել ավետարանով նրանց հետ, որովհետև նա գիտեր, որ դա նրանց երջանիկ կդարձներ:

Երեխաները հաճախ շատ լավ են կիսվում ավետարանով ուրիշների հետ:

Ուր տարեկան Մարիան տեսավ միսիոներների Էկվադորի

փողոցներում: Նա հարցրեց նրանց, թե արդյոք նրանք կկամենայի՞ն ուսուցանել իրեն ավետարանը: Միսիոներները եկան Մարիայի տուն ուսուցանելու նրա ընտանիքին: Մարիան առաջինը մկրտվեց իր ընտանիքում: Նա շատ երջանիկ էր, երբ իր ողջ ընտանիքը ևս միացավ Եկեղեցուն:

Ինը տարեկան Էրիկը շատ հուզված էր Երեխաների խմբի հաղորդության ժողովի ներկայացմամբ, որին նա հրավիրեց զալ իր հարևաններին: Նրանք եկան

Այս երեխաներից երկուսն էլ կիսվեցին մի թանկարժեք բանով այն մարդկանց հետ, ում նրանք սիրում էին: Երբ կիսվեք ավետարանով, ձեր վկայությունը կաճի: Լեքիի նման դուք կզգաք «չափազանց մեծ ուրախություն»: ■

«Մի վախիր, որովհետեւ  
ես քեզ հետ եմ»:

Օսկար Ի.24




«Երանի  
խաղաղության  
ասողներին»:

Մատթեոս Է.9



«Իրար հետ  
քաղցր եղեք,  
գթած՝ իրար  
ներելով»:


Եփեսացիս Դ.29



«Ամեն բանի  
մեջ գոհացեք»:

Ա թեսալոնիկեցիս Է.18





# Կամիլը և ու Յորք Միթից

**Ի**նչ տարեկան Կամիլը շատ ընկերներ ունի: «Իմ ընկերների մեջ իսկապես հավանում եմ այն է, որ նրանք բոլորը տարբեր են», - ասում է նա: «Նրանք տարբեր վայրերից են և նրանք տարբեր ձևով են անում գործերը»: Կամիլը սիրում է լավ բաներ սովորել իր ընկերներից, և նա սիրում է ինչ որ բաներով կիսվել իր ընկերների հետ: Լավագույն բանը, որ նա երբևէ կիսվել է որևէ ընկերոջ հետ, ավետարանն է: Հավատքի

հանգանակի առաջին կետը իր ընկերուհու՝ Յայլինի հետ կիսվելուց հետո, Կամիլը հրավիրեց իր ընկերուհու ընտանիքին հանդիպել միսիոներների հետ: Կամիլը նաև ուսուցանեց Յայլինին թե ինչպես աղոթի: Այժմ Յայլինը և նրա մայրը Եկեղեցու անդամներ են:

*Իմ ընկերուհի Յայլինը մկրտվեց 2011 թվականին: Ինձ դուր է գալիս, որ մենք միասին ենք եկեղեցի գնում: Ես օգնում եմ նրան անգիր սովորել Հավատքի Հանգանակը:*

*Իմ սիրելի երգերն են «Զավակն եմ Աստծո» և «Ընտանիքները կարող են հավերժ միասին լինել»:* Իմ սիրելի սուրբ գրությունը Վարդապետություն և Ուխտեր 19.23 հատվածն է. «Սովորիր ինձանից և լսիր իմ խոսքերը. քայլիր իմ Հոգու հեգությամբ, և դու խաղաղություն կունենաս ինձանում»: Այս սուրբ գրությունը ինձ միշտ մխթարում է, երբ ես տխուր եմ լինում:





Մայրիկս և հայրիկս Դոմինիկյան  
Հանրապետությունից ենք: Երևի այդ  
պատճառով իմ սիրելի ճաշատեսակ-  
ներն են բրինձը, լոբիոն ու հավը: Դա  
հիշեցնում է ինձ, թե որտեղից է գալիս  
իմ ընտանիքը:



Իմ ընտանիքում կան հինգ հոգի: Քույրս՝ Էմիլին  
մկրտվելու է և հաստատվելու դեկտեմբերին:  
Իմ եղբայր Վիկտորը անվանակոչվել է հայ-  
րիկիս անունով: Ես դեռ սիրելի կենդանիներ  
չունեմ, բայց մտածում եմ կրիա ձեռք բերելու  
մասին: Ես սիրում եմ կրիաներին, որովհետև  
դրանք սիրունիկ են և դանդաղկոտ, այնպես  
որ նրանք չեն փախչի:



Ես սիրում եմ Զորավար Մորոնիի պատմու-  
թյունը Մորմոնի Գրքից: Հայրիկս կարդաց այն  
ընտանեկան երեկոյի ժամանակ և այն ոգեշն-  
չեց ինձ պատրաստել իմ սեփական դրոշմը:  
Իմ դրոշմը հիշեցնում է ինձ, թե ով եմ ես և որ  
Երկնային Հայրը միշտ ինձ հետ է:

# ՄԵՐ ԷՋԸ



Ծնողներս ինձ սովորեցրել են ավետարանը և եղել են լավ օրինակ ինձ համար փոքր հասակից սկսած: Ես սովորեցի կարդալ սուրբգրքյան պատմվածքներ երեխաների համար, և ես այժմ սիրում եմ Մորմոնի Գիրքը: Ես կարդում եմ այն ամեն օր մենակ և իմ ընտանիքի հետ: Ամմուր իմ սիրելի անձ-նավորությունն է Մորմոնի Գրքում: Նա մեծ միսիոներ էր, որն այն է ինչ ուզում եմ լինել, երբ մեծանամ:

**Էստեբան Մ., 8 տարեկան, Կոլումբիա**



Երբ իմ ընտանիքը արձակուրդում էր Պանամայում՝ մայրիկիս հայրեն-քում, ծնողներս տարան իմ փոքրիկ քրոջը՝ Յոլիբեթին և ինձ Պանամա քաղաքի Պանամայի Տաճարը: Մեր մայրիկը մեզ տարավ ձեռքով հավելու տաճարի պատին: Հետագայում, երբ ես պատմեցի մայրիկիս, թե որքան երջանիկ ես զգացի, երբ մենք տաճարում էինք, նա ասաց, որ ես զգացել եմ Սուրբ Հոգին:

**Սերգիո Բ. Կրտ., 7 տարեկան, Ֆլորիդա, ԱՄՆ**



**Պաշա Զ., 9 տարեկան, Ուկրաինա**



**Լետիցիա Զ., 6 տարեկան, երբ նա 3 տարեկան էր Բրազիլիայի Կուր-տիբա Տաճարն ավարտվեց:** Նա սիրում էր տաճար գնալ և գնում էր այնտեղ ամեն օր բաց դռների վերջին շաբաթվա ընթացքում: Նա հիմա էլ սիրում է տաճար գնալ և քայլել գեղեցիկ պարտեզների միջով: Լետիցիան սիրում է նաև նկարել և լողալ:



**ԵՐԵՆԱՆՆԵՐԻ ԽՈՒՍԲ՝ ՀԵՏԵՎԵՔ ՀԻՍՈՒՍԻՆ**

**Մաուրիգիո Ղ., 11 տարեկան, Իտա-լիա, սիրում է հաղորդության ժողովը, որովհետև նա սովորում է Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի մասին:** Նա սիրում է եկեղեցի գնալ, որովհետև ուրախ է և հետաքրքիր ու շատ գեղե-ցիկ: Նա երջանիկ է եկեղեցում և շատ ընկերներ ունի:



Երբ մենք պատ-րաստվում էինք Մե-քսիկայի Թիջուանա Տաճարի հողատա-րածքի բացմանը, մենք շատ երջանիկ էինք: Մենք որպես ընտանիք գնա-ցինք ծառայություն մատուցելու: Մենք մաքրեցինք տաճարի հողատարածքը: Ես գիտեմ, որ Տերը կայցելի Իր տունը, երբ այն ավարտվի: **Հիսուս Ս., 6 տարե-կան, Մեքսիկա**



Bảng Khắc  
Bảng Vàng


Սուրբ գրություններն ուսումնասիրելն օգնում է  
ինձ ընտրել ճիշտը:

**«Ոսկե թիթեղները», Փ. Տույեթ Հուա,  
10 տարեկան, Կամբոջիա**



Ես ընտրում եմ ճիշտը, երբ հետևում եմ Երկ-  
նային Հորը և Հիսուս Քրիստոսին

**Ն. ԹիԼինԴա, 8 տարեկան, Կամբոջիա**



Իմ սիրելի մասը Մորոնի Գրքում  
Նեփիի պատմությունն է և ճանա-  
պարհորդությունը ծովի վրայով:

**Քելլի Է., 10 տարեկան,  
Ֆիլիպիններ**



Մենք պետք է կնքվենք տաճարում,  
որպեսզի հավերժ ապրենք որպես  
ընտանիք:

**Շաննա Է., 8 տարեկան,  
Ֆիլիպիններ**



Ես սիրում եմ եկեղեցի գնալ  
իմ ընտանիքի հետ և սովորել  
Հիսուս Քրիստոսի մասին:  
Տանը ես սիրում եմ և սովորում  
սուրբգրյան պատմություն-  
ներ, հիմներ երգել և խաղեր  
խաղալ ընտանեկան երեկոյի  
ընթացքում: Ավետարանն օրի-  
նում է իմ ընտանիքը և օգնում  
ինձ երջանիկ զգալ: Ես արդեն  
տվել եմ Մորոնի Գիրքը երեք  
դպրոցական ուսուցիչների  
և իմ լավագույն ընկերոջը՝  
Միգուելին: Իմ սիրելի երե-  
խաների խմբի երգն է «Մենք  
կբերենք աշխարհին Նրա  
ճշմարտությունը» (*Children's  
Songbook*, 172):

**Մարթին Փ., 6 տարեկան,  
Պորտուգալիա**




**Հենրիկե Ս., 7 տարեկան,  
Բրազիլիա**


# Հիսուսն օրհնում է մանուկներին

**Ջեն Փիլբորո**

Եկեղեցու ամսագրեր

Շատ մարդիկ հավաքվեցին  
Հիսուսի շուրջը: Նրանք ուզում  
էին լսել Նրա պատմած  
պատմությունները:





Երբ մարդիկ հիվանդ էին,  
Հիսուսը բժշկում էր նրանց: Նա  
բժշկում էր մարդկանց, ովքեր  
չէին կարողանում տեսնել: Նա  
բժշկում էր մարդկանց, ովքեր  
չէին կարողանում լսել:



Մի օր մի քանի մարդիկ իրենց փոքր երեխաներին բերեցին տեսնելու Հիսուսին: Նրանք ուզում էին, որ Նա իրենց երեխաներին օրհնություն տար: Հիսուսի աշակերտներն ասացին մարդկանց, որ չանհանգստացնեն Հիսուսին: Նրանք կարծում էին, որ Նա շատ զբաղված էր:

Հիսուսը խիստ զբաղված չէր:  
Նա ասաց աշակերտներին,  
որ թույլ տան երեխաներին  
գալ Իր մոտ: Նա  
ասաց, որ երկնքի  
թագավորությունը  
պատկանում է  
մարդկանց, ովքեր  
երեխաների նման  
են:



Հիսուսը սիրում է բոլոր երեխաներին: Նշանակություն չունի, թե ով եք  
դուք, թե ինչպիսի տեսք ունեք, կամ որտեղ եք ապրում: Հիսուսը սիրում  
է ձեզ: ■

*Մարկոս Ժ.13-16:*



**Հիսուս օրհնում է փոքրիկ երեխաներին**

«Եւ նորանց առաւ զիրկը, ձեռքը դրաւ նորանց վերայ, եւ օրհնեց նորանց» (Մարկոս Ժ.16):

# ԵՍ ՀԱՅՀՈՅՈՒՄ ԵՄ ...

**Ռ. Վալ Զոնսոն**

## Եկեղեցու ամսագրեր

Մորս դեմքի նայվածքը կոտրեց սիրտս:  
Ցնցում:Սարսափ: Հիասթափություն:  
Բոլորը լցվեցին նրա աչքերը մեկը մյուսի  
ետևից և հետո խառնվեցին մեկ զգացումի՝  
դավաճանություն:

Չնայած Երկնային Հորը խոսքով և գործով պատվելու 15-ամյա նրա ուսուցամանը, ահա կանգնած էի ես հանցավոր՝ թույլ տալով որոշակի վիրավորական խոսք դուրս պրծնել իմ շուրթերից:

Ես չէի ուզում հայիոյել: Այդ տարուց առաջ ես երբեք չէի օգտագործել կեղտոտ լեզու: Բայց այդ ամառ ես աշխատեցի Յուտայի Չկնորսության և որսի բաժանմունքում և ձեռք բերեցի հայիոյելու սովորույթ մյուս տղաներից, ովքեր աշխատում էին իմ կողքին:

Մեր հիմնական աշխատանքն էր ճանապարհի երկու կողմերում աճած կռատուկը քաղհանելը: Մենք արագ որոշեցինք որ կռատուկը՝ *Arctium minus*-ը առանձնահատուկ չար մոլախոտ է: Այն աճում է առատորեն ուր պատահի և այն դուրս է մղում մյուս բույսերից մեծ մասին: Դրա փշերը կպչում են ամեն ինչի, որ մոտենում է նրան:

Բահերը ձեռքներիս մենք ճակատա-  
մարտում էինք այդ աղետի դեմ ողջ ամառ  
ուժասպառության աստիճանի և կեղտոտ  
բառերով: Սկզբում ես ընկերներիս բառա-  
պաշարը վիրավորական էի համարում:  
Հետո սկսեցի հանդուրժողական լինել  
դրա հանդեպ: Վերջում ես որդեգրեցի այն:  
Ամռան վերջում հայիոյանքը կաշում էր իմ  
բառերին այնպես ամուր, ինչպես կոստուկի  
փշերը շան մազերին:

Մակայն մայրիկիս արձագանքը լեզվի իմ  
սայթաբումին համոզեց ինձ, որ ես պետք է  
փոխվեի:

Դա հեշտ չէր: Հայիոյանքը ուղ-  
ղակի բառերի ընտրութիւն չէ: Դա նաև



Հայհոյելը այն-  
պես ամուր էր  
կապում իմ խոս-  
քերին, ինչպես  
կոստուրմի փուշը  
կապում է շան  
մագերին:

մտածողության ձև է: Խոսակցությունները, որոնք մենք թույլ ենք տալիս մեր կյանքում, խոսքերը, որոնք մենք կարդում ենք և այն պատկերները, որոնք մենք տեսնում ենք, ձևավորում են մեր մտքերը: Ես շուտով իմացա, որ ես պետք է փոխեի այն, ինչ ես հրավիրել էի իմ միտք, եթե կամենում էի փոխել այն խոսքերը, որ ես օգտագործում էի:

Բարեբախտաբար, ես ակտիվ էի եկեղեցի  
և սեմինարիա հաճախելիս: Հայիոյանքը  
դուրս էր մղել ավելի բարձր մտքերը, բայց  
լինելով մի միջավայրում, որտեղ ես են-  
թարկվում էի այդ ավելի բարձր մտքերին,  
թույլ տվեցին, որ դրանք կրկին արմատա-  
կալեին: Ես կենտրոնացա ամեն օր սուրբ  
գրությունների ընթերցանության և աղոթելու  
վրա: Ես հեռու էի մնում կինոֆիլմերից և հե-  
ռուստաձրագրերից, որոնք վերարտադրում  
էին խավար մտքեր:

Աստիճանաբար նկատեցի, որ խոսքս սկսում էր լավանալ: Մինչև տարվա վերջը ես ազատվեցի իմ հայհոյելու սովորույթից:

Այդ փորձառությունից սկսած ես սովորեցի շատ բաներ խոսքերի ուժի մասին: Խոսքերը կարող են ստեղծել և կործանել: Դրանք կարող են ցավ պատճառել և դրանք կարող են բժշկել: Դրանք կարող են մարդկանց տապալել կամ կարող են հույսի և սիրո սերմեր ցանել:

Ես հետաքրքիր եմ համարում, որ Փրկիչն  
Ինքը՝ երկնքի և երկրի Արարիչը, կոչվում  
է Խոսք (տես Հովհաննես Ա.1-4, ՎևՈՒ  
93.6-11):

Ես իմացա, որ swearing բառը ունի ինչ-պես դրական իմաստ, այնպես և բացասական իմաստ: Մենք երդվում ենք ասել ճշմարտությունը դատարանում: Մենք հանդիսավոր խոստում ենք տալիս կամ երդվում պահել Աստծո պատվիրանները, երբ մենք մկրտվում ենք: Նմանապես մենք սրբազան խոստումներ ենք տալիս պահել մեր տաճարային ուխտերը, որպեսզի ստանանք Երկնային Հոր բարձրագույն օրհնությունները:

Եզրակացությունը սա է՝ Մենք ավելի ենք նմանվում Խոսքին, երբ մեր խոսքերը պատվում են Նրան և արտացոլում Նրա փառքը: ■



## ԴԵՅՎԻԴ Օ. ՄԱԿՔԵՅ

Դեյվիդ Օ. ՄակՔեյը մեծացել է իրենց ընտանեկան ագարակում Հանթսվիլում, Յուտա: Նա սիրում էր կենդանիներ և **ձիեր** էր պահում իր կյանքի ընթացքում: Երբ նա միսիա ծառայեց Մեծ Բրիտանիայում, նա հայտնագործեց մի **ասացվածք**, որը դարձավ նրա նշանաբանը. «Ինչ էլ որ լինեք, ձեր մասը լավ արեք»: Նա Մեծ Բրիտանիա վերադարձավ շատ անգամներ և նվիրագործեց **Անգլիայի Լոնդոնի Տաճարը** 1958 թվականին:



«**Ո**րպես ծնողներ և ղեկավարներ,  
մենք պետք է օգնենք պատանիներին  
ոչ միայն նախապատրաստ-  
վել լիաժամկետ միախաչի ծառայությանը,  
որը տևում է ընդամենը մի քանի ամիս,  
այլ նաև տաճարային ուխտեր կապելուն  
և պահելուն, որը տևում է ողջ համերժու-  
թյուն»: Տես «Պատանիները և տաճարային  
ուխտերը», էջ 18: Այս և մյուս հոդվածները  
կարող են օգնել անդամներին՝ երիտա-  
սարդ և հասուն, ավելի լավ պատրաստ-  
վել ավետարանով կիսվելուն և սպրելուն:

ՀԻՍՈՒՍ  
ՔՐԻՍՏՈՍԻ  
ՎԵՐՁԻՑ ԵՐԵՐԻ ՍՐԵՐԻ  
ԵԿԵՂԵՑԻ